



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Ltn
2178

ՄԱՆԿԱՎԱՐԺ

ՎԵՐԾԱՆՈՒԹԵԱՆ

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՐԿՍԵՌ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ

ՀԱՄԱՐ



ԵՐԿԱՍՏՐՈՒԹՅԱՆ

ՄԵՐԿՐ ԳԱԶԱՆԱՅԻ ՓԱՓԱԿԱՆՆ

685

Ի Վ. Ա. ԱՐՇԱԿՅԱՆ

Ք ՅՊՐԵՍՏ ՄՐԱՆՆ ԿԱՐԱԳՈՒՄԵ ԵՐԾՈՒՄԵՆԻ.

1872 ՌՅԻՇ.

Им. А. Масникова
и. МАСНИКОВА

ՄԱՆԿԱՎԱՐԺ

ՎԵՐԾԱՆՈՒԹԵԱՆ

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՐԿՍԵՌ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ

ՀԱՄԱՐ

589

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՄԵՍՐՈՊ ԲԱՀԱՆԱՅԻ ՓԱՓԱԶԵԱՆՆԵ



Ի ՎԱԳԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷԶՄԻԱՍՆԻՔ

ՌՅԵԱ—1872

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՐԱՄԱՆՈՒ

Տ. Տ. ԳԻՈՐԳԵԱՅ Գ.

ՎԵՀՍՓԱՌ ԵՒ ՍՐԲՍՁՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

4 2178-60

28 2182

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

1875-1876

ՅԱՌԱՋԱՆԵՆՈՒԹԻՒՆ



Ս. յժմեան լուսաւորեալ զարուս մէջը Եւրոպա-
կան ազգերումը գրէ թէ մտաւորական զարգացում
մը ընդհանրացած է ուրախ ենք որ մեր ազգն
էլ բարեբախտաբար քանի տարիից ի վեր՝ նոցա
օրինակին հետեւելով՝ սկսած է լուսաւորութեան
քայլափոխը օրէ ցօր յառաջ տանել. լաւ իմա-
ցաւ թէ առանց մտաւորական զարգացման՝ նիւ-
թական յառաջադիմութիւն անօգուտ է. ապա
ուզղեց իւր ուշադրութիւնը ազգային հոգեւոր ու-
սումնարաններէ վերայ՝ ո՛չ թէ միայն արական
սեռին, այլ և թէ խիստ կարեւոր համարեց և ու-
նենալ իրական սեռի համար բարեկարգ ուսում

նարաններ, յօգուտ ազգային հիմնական բարեկարգութեան, և լուսաւորութեան, ինչպէս որ Ռուսաստանի Հայկազուն ժողովուրդը բաւական ժամանակից ի վեր բախտաւորութիւն ունեցաւ՝ հաստատել կրկին սեռից ուսումնարաններ՝ և հաստատուն աղբիւրներով մշտնջենապէս կառավարել, շնորհիւ և բարձու հրամանաւ մեր հասարակաց Հօր ուսումնաճաւալ Տ. Տ. Գէորգայ Գ. Վեհափառ Վաթողիկոսի, բայց (ինչպէս որսովում է) տակաւին նոյն հաստատուած ծխական ուսումնարաններումը դաս է կ'ստովում հին դասագրքերի վրայ, և հին ոճով (ինչպէս են Սաղմոս, Ժամագիրք, Վտակարան, Նարեկ, և այլն). սորա թէպէտ մեր Ազգի մէջ աչնիւ, հազուազիւտ եկեղեցական գրքեր են, բայց դպրոցական նորավարժ համբալենների համար՝ դժուարամարս, տաղտկացուցիչ, միանգամայն և տանջանարան կ'համարուին. (ինչպէս որ տեսանք մեր մանկութեան ժանակներումը.) այնպիսի՝ գրքերի վերայ կամ չոր ու ցամար կերպով առանց մի բառի նշանակութիւն իմանալու դաս են առնում, և կամ թէ մեքենայաբար, և խիտ չարարանքով անդիր են անում. ուրեմն խեղճ մանուկների անդին ժամանակները շոռայլաբար վատնովում են զուր ջանքով, անօգուտ վատակով. և նոցա քնքշչ և հետաքրքիր մլտ-

քերը մնում են իրրև անուլ անդաստան. թէ և ուրախ ենք որ երևելի ուսումնարանաց նախակրթութարաններումը իզորժ են գրվում Այրենարանից յետոյ՝ աշխարհաբառ լեզուաւ հասարակ բնութեցանութեան համար զանազան տեսակ դասագրքեր, բայց անտարակոյս նորավարժ մանուկների գաղափարները օգտակար, և կարևոր զիւրամարս դասերով զարգացնելու, աւելի կնոյաստէ (Այրենարանից յետոյ) մեր այս «Մանկավարժ Վերժանութեան», անուն դասագիրքը, որոյ միջոցաւ հմտութիւն կ'ստանան նոքա փոքր ի շատէ և կը սովորին Առաջին զխումը՝ հարկաւոր զիտեխաց սկզբունքներ. Երկրորդ զխումը՝ Հին Վտակարանի Սրբազան պատմութիւն. Երրորդ զխումը՝ Նոր Վտակարանի Սրբազան պատմութիւն. Չորրորդ զխումը՝ Ազգային պատմութիւն, ամեն մէկից գրէ թէ հատընտիր, և համառօտ կերպով. ի վերջոյ էլ աւելացրինք մի Յաւելուած «Հայկական անւանց հանելուկներ», վերնագրութեամբ, և այս ամեն զուկները՝ առանձին յօգուածների, և զիւրին կերպով մտքերումը ըմբռնելու համար՝ կարճառօտ դասերի վերայ բաժանեցինք. ուրեմն կարող են արիալան դաստիարակները ամեն մի դասի բովանդակութիւնը հալեցնել իրանց ինամոց յանձնուած աշակերտաց մտքերումը, և հետևա-

պէս համար պահանջել մտացածին լեզուաւ, կամ
դրաւոր կերպով. անշուշտ փոքր միջոցունը Հա-
յերէն ընթերցանութեան մէջը զարգանալից ի
զատ՝ Սրբազան և Ազգային պատմութեանց մէջ
էլ կզարգանան: Ահա՛ նուիրելով մեր փոքրիկ եր-
կասիրութիւնը մերազննայ երկսեռից ուսումնարա-
նաց մանուկներին, անտարակոյս փոքր ինչ ծա-
ռայութիւն արած կը համարուինք մեր սիրելի
Ազգին. որոյ միշտ եմ անձնանուէր

Աւերոյ +ահանայ Փափազւանց:

ԳՂՈՒԽ ԵՌԱՋԻՆ

ՍԿԶԲՈՒՆԲ ՀՍՐԿԱՒՈՐ ԳԻՏԵԼԵՍՅ

ՅՕԴՈՒԵԾ ԵՌԱՋԻՆ.

Սկզբունք Կրօնական գիտելեաց
և Տարոյական կրթութեանց:

Դաս Ե.

Իս հաւատով քրիստոնեայ եմ, կրօն-
քով՝ Հայաստանեայց Առաքելական սուրբ
Եկեղեցւոյ հարազատ զաւակ, իսկ ազգաւ՝
Հայ եմ և Հայկայ սերունդ: Վրիստոնեա-
կան արտաքին նշանը՝ սուրբ խաչն է, իսկ
ներքին նշանը՝ ընկերսիրութիւն, և կա-
րող եմ խաչակնքել այսպէս, յանուն Հօր
և Որդւոյ, և Հօգւոյն սրբոյ, ամէն:

Գաս Բ.

Ես գիտումեմ, և կը հաւատամ թէ, Աստուած մէկ է, և երեք անձինք են, Հայր, և Որդի, և սուրբ Հոգի, բայց անբաժան միաւորութեամբ. և ինքն է երկնի, և երկրի, և ամեն բաների ստեղծող և կառավարողը, թէպէտ ինքն երկնքումն է բընակվում՝ բայց ամեն տեղ է ներկայ է գտանվում:

Գաս Գ.

Աստուծոյ պատուիրանքը տասն են, որ ինքն տուաւ Իսրայէլացւոց՝ Մովսէս Մարգարէի ձեռնովը (տե՛ս Գաս 52). բայց ամեն պատուիրանաց լրումը՝ անկեղծ և անարատ սէրն է. ամենից աւելի՛ պէտք է սիրենք մեր արարիչ Աստուածը՝ բոլոր սրտով. և յետոյ՝ սիրենք մեր՝ ընկերին՝ ինչպէս մեր անձը:

Գաս Գ.

Աշխարհիս վերայ՝ պէտք է ունենանք բարի գործեր. աղօթք անենք, պահք պահենք և ողորմութիւն տանք. աղօթք՝ հաստատուն յուսով առ Աստուած, պահք՝ պահենք՝ մաքուր զգայարանքներով՝ Եկեղեցւոյ սահմանած օրերումը. ողորմութիւն տանք՝ կարօտեալ և խղճալի մարդկանց և կարեկցաբար օգնենք նոցա՝ թէ՛ խօսքով և թէ՛ արդիւնքով:

Գաս Ե.

Հաւատացեալ քրիստոնէից ժողովոյն՝ կ'ասուի Եկեղեցի. և ունի եօթն սրբարար (սորհուրդ. 1) Մկրտութիւն, 2) Գրոշմ, 3) Հաղորդութիւն, 4) Ապաշխարութիւն, 5) Սերջին օծում, կամ Աղօթքի վերայ հիւսնդաց, 6) Կարգ, 7) Պսակ:

Դաս 9.

Սուրբ երրորդութեան՝ Հօր, և Որդւոյ, և Հօգւոյն Սրբոյ անունով՝ սուրբ Աւագանի մէջը երախայի լուսցման՝ կասկէ Մկրտութիւն. և այս խորհուրդս մեր Յիսուս Փրկիչն հաստատեց, երբ որ Յորդանան գետումը Յովհաննէս Մկրտչից մկրտուեցաւ (տե՛ս Դաս 71). և ով որ այս կերպովս մկրտուի՝ երկնաւոր Հօր որդեգիր, Յիսուսին ժառանգակից և Քրիստոնեայ կրդաունայ:

Դաս 12.

Մկրտուած երեսայի զգայարանքները այս ինքն ճակատը, աչքը, քիթը, բերանը, ականջը, սիրտը, քամակը, ոտքերը սուրբ Մեռնոնով օծելոյն կ'ասուի Դրոշմ, և այս խորհուրդս հաստատեց մեր Յիսուս Փրկիչն՝ երբ որ Հօգիս սուրբ աղաւնոյ կեր-

պարանքով նորա մկրտութեան ժամանակն իջաւ Յորդանան գետը (տես դաս 71). և այս խորհուրդս զօրութիւն կրտայ մկրտուած երեսային ինչպէս Վահան՝ սատանայի հնարից դէմ պատերազմելու:

Դաս 13.

Վահանայի նուիրած սրբազործ Պատարագի միջոցաւ, Յիսուսի կենարար մարմնոյ, և արեան ճաշակելուն՝ կ'ասուի Հազորդութիւն, և այս խորհուրդս մեր Յիսուս փրկիչն հաստատեց՝ երբ որ վերնատան մէջը հաց և բաժակ ձեռն առնելով՝ օրհնեց, և անուանելով իւր մարմին և արիւն՝ բաշխեց իւր ընտրեալ աշակերտներին (տես դաս 83), զի ո՛վ որ արժանաւորապէս ընդունի և ճաշակէ՝ Յիսուսի հետ հոգևորապէս հաղորդութիւն կ'ունենայ:

Դաս Թ.

Մեղք ունեցող մարդը քահանայի առջևը իւր բոլոր գաղանի և յայտնի մեղքերը ամեն պարագաներովը՝ և ճշտութեամբ երբոր խոստովանի և զղջայ, և նոյն քահանայի զբաժ հոգևոր պատժին՝ կատուի Ապաշխարութիւն. և այս խորհուրդըս հաստատուեցաւ Յօհաննու Մկրտչի Յորդանանու կողմերումը ժողովողեան ապաշխարութիւն քարոզելից (տե՛ս Դաս 71), և մեր Յիսուս Փրկչի այս խօսքերիցը՝ որ ասում էր իրանից բժշկուողներին «զընա՛, այսուհետև մի՛ ևս մեղանչեր», կամ թէ՛ «երթ ցոյց զանձն քո քահանային», և այլն, և ո՞վ որ այս միջոցս կը կատարէ, սուրբ Հաղորդութիւն ճաշակելու արժան կը համարուի:

Դաս Ժ.

Իսկ վերջին օժուովը Հայաստանեայց եկեղեցւոյ համար՝ մի հարկաւոր խորհուրդ

է, այլ ծիսական արարողութիւն մի է, որ ուրիշ քրիստոնեայ ազգերից ոմանք ընդունելով իբրև հոգևոր զեղ՝ հոգեվարք հիւանդների մի երկու զգայարանքը օրհնած իւզով օժումեն. բայց Հայաստանեայց եկեղեցին մի միայն այնպիսի հիւանդաց վերայ քահանայի աղօթք կարգաւով կը կատարէ այս խորհուրդս, որին կանուի Գիշերային Ժամ:

Դաս Ժ.Ա.

Եկեղեցւոյ պաշտօնեաներին տրուած հոգևոր իշխանութեան՝ կատուի Վարդ, կամ Աստիճան. որոց 1) Գոնապանութիւն, 2) Ընթերցողութիւն, 3) Երգմանցուցութիւն, 4) Չահրկալութիւն, 5) Ախտասարկաւազութիւն, 6) Սարկաւազութիւն, 7) Բահանայութիւն. և այս աստիճաններս Եպիսկոպոսն կարող է ասլ, իսկ ինքն ձեռնադրուումէ Վաթուղեկոսից. և Վաթուղեկոսն էլ ձեռնադրվումէ 12 Եպիս-

կոպոսից. և այս խորհուրդը հաստատեց
մեր Յիսուս Փրկիչը վերնատան մէջը,
Վալիլեայի և Չիթենեաց սարերի դըլա-
ներումը՝ երբ որ իշխանութիւն տուաւ
իւր աշակերտներին՝ զնալ ամեն աշխարհ
քարոզել, և աշակերտել (տե՛ս դաս 83
—89—91). ուրեմն եկեղեցւոյ ընտրուած
հոգեւոր պաշտօնեաները Յիսուսի Փոխա-
նորդ, և եկեղեցւոյ ժառանգաւոր կը հա-
մարուին:

Պատմ. Ժ.Բ.

Արահան և Իզահան երկու բաժանուած
սեռերի, քահանայի խորհրդաւոր օրհնու-
թեամբ, եկեղեցւոյ կանոնաց համաձայն,
անքակտելի միաւորութեամբ զուգակցու-
թեան կ'ասուի Պսակ, կամ ամուսնութիւն,
և այս խորհուրդս էլ մեր Յիսուս Փրկիչն
հաստատեց, երբ որ Փարիսեցիներէն պա-
տասխանեց. «մարդս կարող է թողուլ իւր
հայրը, և մայրը, և զնալ իւր կնոջ ետե-

ւիցը, և երկուքն լինին մի մարմին. այժմ
Աստուած որ միացրուց՝ մարդ չէ կարող
բաժանել, ուրեմն մինչև ի մահ իրարից
չեն կարող բաժանուիլ:

Պատմ. Ժ.Գ.

Աստուծոյ, և մարդկան ընդունելի գործ-
քերին՝ կ'ասուի Առաքինութիւն. մեր մե-
ծերի հետը պէտք է վարուենք ակնածու-
թեամբ, մեր հաւասար ընկերի հետը՝ սի-
րով և քաղցրութեամբ, իսկ մեր փոքրե-
րի հետը՝ ներողամտութեամբ, և կարեկ-
ցութեամբ:

Պատմ. Ժ.Դ.

Մեր ծնողներին, ուսուցիչներին, քա-
հանաներին, երախտաւորներին՝ պէտք է
յարգութիւն տանք, և սրատուենք. մեր
ազգին էլ օգնենք՝ թէ՛ խօսքով, և թէ՛
գործքով. և մեր անձը կրթենք գործքե-

րով, և ամեն բանի մջ չափաւորութիւն
ունենանք:

ԳԽԽ ԺԳ.

Ատ ընկերներից հեռու մնանք, և
անվայել գործքերից զգուշանանք. ինչ որ
ուզումենք ուրիշներ մեզ անեն՝ մենք էլ
նոցա այնպէս անենք. ինչ բան որ չենք
ուզում ուրիշներ մեզ անեն՝ մենք էլ նո-
ցա չ'անենք. մեր բոլոր զգայարանքը մա-
քուր և անարատ պահենք:

ԳԽԽ ԺԶ.

Աշխարհումս երբոր ձախորդութեան
մջ ենք՝ չը արտմինք. երբ որ յաջողու-
թեան մջ ենք՝ չը հպարտանանք. որով և
կը յաղթենք աշխարհի. վերջապէս չարե-
րից հեռանալով՝ բարի գործելով՝ կը
դառնանք բարի մարդ, և բարի քրիստո-
նեայ, և արքայութեան ժառանգորդ:

ԳԽԽ ԺԷ.

Գիտեմես տէրունական աղօթքը. նայր
մեր որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո.
եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք
քո՝ որպէս յերկինս և յերկրի. զչաց մեր
հանապազորդ տուր մեզ այսօր. և թո՛ղ
մեզ զպարտիս մեր՝ որպէս և մեք թողումք
մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ
ի փորձութիւն, այլ փրկեա՛ ի չարէ. զե
քո է արքայութիւն, և զօրութիւն, և
փառք յաւիտեանս, ամէն:

ՅՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Ակզբունք երկրաւոր զիտելեաց.

ԳԽԽ ԺԸ.

Աշխարհս չորս կողմն ունի, Արևելք,
Արևմուտք, նարաւ, և նիւսիս. երբ որ

դառնամ դէպ արևելք՝ ետևս արևմուտքըն է՝ աջ կողմն հարաւն է, իսկ ձախ կողմս՝ հիւսիսն է. և երկիրս երկու գլխաւոր մասըն կը բաժանուի. հող, և ջուր. բոլոր երկրրագունդը հինգ գլխաւոր տշխարհ կը բաժանուի, Ասիա, Աւրոպա, Ափրիկէ, Ամերիկա, և Աւստրալիայ:

Դաս ԺԹ.

Ջրեր հաւաքուած ընդարձակ տեղերին կասուի Օուվ, փոքր տեղերին՝ Օուվակ կամ Լիճ, իսկ ծովերի մայրերին կասուին Ովկիանոսներ. և բոլոր ծովերի ջրերը գոյանումեն զանազան տեղերից եկած մեծ և փոքր գետերիցը:

Դաս Ի.

Հայաստանի գլխաւոր գետերն են՝ Արասի, Տիգրիս, Ափրատ, Ղորոխ և այլն: Գլխաւոր սարերն են՝ Մասիս, Արագած,

Սեպուհ, և այլն: Արևելի վանքերն Ս. ԼԶմիածին, Արուսազէմ, Տաթևու վանք, Ս. Կարապետի վանք, Սևանայ վանք, Գեղարդայ վանք, Արմաշու վանք, Վարազայ վանք, և այլն:

Դաս ԻԱ.

Աշխարհումն բնակվումեն զանազան կրօնից հաւաքուած ազգեր. Աւրոպայի գլխաւոր մայրաքաղաքներն են. Փարիզ, Լոնտոն, Պետրսբուրգ, Վիէննայ, Բերլին, Հռոմ, Կոստանդնուպօլիս, և այլն. Հայաստանի գլխաւոր քաղաքներն են. Արևան, Կարին, Վան, Տիգրանակերտ, և այլն:

Դաս ԻԲ.

Աշխարհիս վերայ չորս տեսակ հաւատ կան. Քրիստոնէութիւն, Հրէութիւն, Մահմետականութիւն, և Առապաշտու-

Թիւն. Վերիստոնէական Եկեղեցւոյ զլեա-
ւոր անդամք են Հայաստանեայք, Յու-
նականք, և Հռովմէականք: Հայաստա-
նեայց Առաքելական սուրբ Եկեղեցւոյ
զլեաւորն է՝ մեր Վեհափառ Աբբազան
կաթուղիկոսն Լջմիաճնում:

ՅՕԴՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

Սկզբունք թուաբանական գիտելեաց:

Պատ՝ ԻԳ.

Հասարակ գործածական թուանրշան-
ներն են, 1) մէկ, 2) երկու, 3) երեք,
4) չորս, 5) հինգ, 6) վեց, 7) եօթ, 8) ութ,
9) ինն. երբ որ կամենանք տասնաւոր շինել՝
այս 0) նշան կըդնենք, ինչպէս 10) տա-
սւրն, 20) քսան, 30) երեսուն, 40) քառա-
սուն, 50) յիսուն, 60) վաթսուն, 70) եօ-
թանասուն, 80) ութսուն, 90) ինսուն,

երբ որ երկու նշան զնենք որ և իցէ թուի
աջ կողմը՝ կը դառնայ հարիւրաւոր, ինչ-
պէս, 500) հինգ հարիւր. երբ որ երեք նշան
զնենք, կըդառնայ հազարաւոր, ինչպէս
5000) հինգ հազար, 6000) վեց հազար,
և այլն:

Պատ՝ ԻԳ.

Խառն թուերը որ միացնենք՝ կը լինի
գումար, ինչպէս 3—5—և 4 լինումէ
12 (տասներկու). 6—3—7—և 5—ա-
նումէ 21 (քսան և մէկ): 7—կոպէկ թուղթ,
10—կոպէկ զրիչ, 5—կոպէկ թանաք, ու-
րեմն ամենին հարկաւոր է 22 կոպէկ (քսան
երկու կոպէկ) փող . 5—2—7—4—և 3—
թուերը՝ անումէ 21 (քսան և մէկ). երբ
որ ուղենանք մեծ և փոքր թուերը միացը-
նել, այս կերպով կ'անենք. ինչպէս 1000—
800—72—, միանգամայն կ'զրենք 1872,
որ ներկայ տարւոյս Փրկչի թուականն է:

Դաս ԻԵ.

Գումար եղած թուից երբ որ մի մասն վեր առնենք՝ կասուի Հանումն, կամ Բարձումն, ինչպէս՝ 6 թուից երբ որ 2—վեր առնենք, կրմնայ 4. իմ տարիքս 8 —, իսկ մեծ եղբօրս՝ 12 — Հիմայ եղբայրս ինձնից 4 — տարով մեծ է. ես ունիմ 7—խնձոր, իսկ Արշակն ունի 12 խնձոր, ուրեմն նորա խնձորներն 5 աւելի է իմ ունեցած խնձորներիցը, ապա նորանցից 2 հատը կերայ, ուրեմն մնաց հիմայ 5 — հատը:

Դաս ԻՕ.

Մէկ ամբողջ թիւ երբ որ ուրիշ թիւով կամենանք շատացնել՝ կասուի Բազմապատկու թիւն, ինչպէս 6 թիւը եթէ 4—թուով շատցնենք՝ կըգառնայ 24: 5 — փութ ցորեն, փութը երեք ապասուց պէտք է տալ 15 ապասի, որ անումէ 3 մա-

նէթ. 12 թերթ սև տեսակ թուղթից առի, և վեց կոպէկ տուի, ուրեմն տուած եմ մէկ թերթին՝ կէս կոպէկ: Մէկ ծառի վերայ համրեցի՝ 7 ծիրան կար. երբ ունենանք 4 ծառ՝ ապա կունենանք 28 ծիրան:

Դաս ԻԶ.

Երբոր մի ամբողջ գումար կամենանք ուրիշի վերայ բաժանել, կասուի Բաժանումն, ինչպէս 40—թիւն եթէ բաժնենք 9 մարդի վերայ՝ ամեն մէկին բաժին կըհասնի 5: Հայրս 60—հատ ընկոյզ հաւասար բաժանեց մեր հինգ եղբօր վերայ, տեսայ որ ինձ բաժին ընկած է 12 ընկոյզ. տեսայ փողոցումը 6—աղքատ, մօտս գտնուած փողերը հաւասար բաժանեցի նոցա վերայ, նոցա մէկին տալով 5—կոպէկ, ուրեմն ունէի 30 կոպէկ: Մէկ շարաթն է 7 օր. ապա 42 օր է 6 շարաթ:

ԳՂՈՒԽ ԵՐԿՐՈՐԳ

ՀԱՄԱՌՈՏ ԱՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

ՅՕԴՈՒԱԾ ԱՌԱԶԻՆ.

Աշխարհիս ստեղծումը, Ադամայ մեղանչելը, և պատժուիլը:

Դ... ԻԸ.

Աշխարհս՝ ամենաբարին Աստուած ստեղծեց վեց օրումը. ուստի առաջին օրումը՝ ստեղծեց երկինքը և երկիրը, և յետոյ լոյսը. երկրորդ օրումը՝ ստեղծեց երկրնքի կամարը, և երկնքի ջրերը՝ երկրիս ջրերիցը բաժանեց, երրորդ օրումը՝ ծովը ցամաքից բաժանեց, և հրամայեց ցամաքին՝ որ բուսուցանէ զանազան խոտեր,

ծաւեր, ծաղիկներ. չորրորդ օրումը՝ ստեղծեց Արեգակը, Լուսինը, և բոլոր աստղերը. հինգերորդ օրումը՝ ստեղծեց օգի վրայի թռչունները, երկրիս վրայի սողունները, և ծովի միջի ձկները. և վեցերորդ օրումը՝ ստեղծեց զանազան տեսակ չորքտանիք. և յետոյ Ադամին ստեղծեց, իսկ եօթներորդ օրումը՝ հանգստացաւ իւր գործքերիցը:

Դ... ԻԹ.

Աստուած Ադամին ստեղծեց հողիցը, և բանական հողի տուաւ՝ իւր Աստուածային շնչովը. և դրաւ նորան՝ գլղեցիկ ծառերով և ծաղիկներով զարդարած Գլրախտի միջը. Ադամ երբ որ մինակ էր՝ Աստուած թմրութիւն տուաւ նորան՝ և կողեցն առնով Աւայ անունով կին, և տուաւ նորան ընկեր դառնալու. և պատուիրեց՝ որ ամեն ծառի պտուղներիցը կարողանան ուտել, բայց զխտութեան բար-

ւոյ և չարի ծառի պտղեց չ'ուտելու համար՝ սատարի արգելեց. բայց սատանան օձի կերպարանք մանելով, Աւային խաբեց՝ և կերցրուց նոյն Աստուծոյ արգելած պտուղեցը, նա էլ մարդին տուաւ, որ կերաւ, և երկուսն էլ աչքննրն բացուելով՝ տեսան իրանց մերկութիւնը. և յետոյ ամաչելով՝ թղենի տերեւներով իրանց մերկութիւնը ծածկեցին՝ և ծառի տակ պահապնուեցան՝ որ Աստուած իրանց չք տեսնայ. զի նա ամեն օր գայիս էր Վրախտը:

Գառ Լ.

Երբոր Աստուած իմացաւ՝ հարցրուց թէ՛ «Ազամ ո՞ւր ես», և նա իւր խաբուելը կնոջ վերայ ձգեց, իսկ կինը օձին մեղադրեց. նորա համար՝ Աստուած երեքին էլ անիծեց. նախ՝ օձին անիծեց՝ որ փորի վերայ դնայ, և հող ուտէ իւր կենաց մէջը. Աւային անիծեց՝ որ իւր մարդի իշխանութեան ենթարկուի, ցաւով և տրտ-

մութեամբ զաւակ ծնանի. Ադամին էլ անիծեց՝ որ երեսի քրտինքովը իւր հացն ուտէ, և ասաց՝ հող էլիք առաջ՝ և յետո հող զառնայք, և երկուսին կաշիէ զգեստ հագցրուց և զբախտիցը զուրս արեց, և Սերորէներին հրամայեց՝ որ բոցեղէն սրով զբախտի ծանապարհը պահեն:

ՅՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԳ.

Ադամայ սերունդը, ջրհեղեղը,
և աշտարակաշինութիւնը:

Գառ Լ.Ա.

Ադամ ու Աւայ ունեցան երկու որդի, Կայէն, և Աբել. Կայէն երկրագործ էր, իսկ Աբելը՝ ոչխարաց հովու. մի օր երկուսն էլ կամեցան իրանց ունեցած ապրանքներն Աստուծոյ ընծայ մատուցանել. Կայէն իւր ցորեններէցը անպիտաններն ընծայեց, բայց Աբելը իւր ոչխարներէ լաւ և ընտիրները՝ սրտանց ընծայեց, նորա հա-

մար՝ Աստուած Աբէլին ընծան ընդունեց՝
 իսկ Աայէնին չ'ընդունեց: Աայէնը նախան-
 ձելով Աբէլին՝ մի օր խաբեց նորան տա-
 րաւ դաշտը, և սպանեց: Աստուած երբ
 որ իմացաւ՝ Աայէնին սաստիկ անիծեց՝ որ
 միշտ երեքվում՝ և տատանվումէր աշխար-
 հի վերայ, և բնաւ հանդստութիւն չունե-
 ցաւ:

Գլուխ ԼԳ.

Աստուած Ադամին սիրտը մխիթարե-
 լոյ համար՝ մի Սէթ անուն որդի էլ տը-
 ւաւ. որոյ ցեղեցն էր Անովք, որ մարմնովը
 երկինք վերացաւ. Մաթուսաղայ՝ որ ինն
 հարիւր վաթսուն և ինն տարի ապրեցաւ,
 'Այ 'Նահապետը՝ որոյ ժամանակն եղաւ
 ջրհեղեղը աշխարհիս վրայ, որովհետեւ Սե-
 թայ ցեղին կասուէր որդիք Աստուծոյ,
 իսկ Աայնի ցեղին որդիք մարդկան. այս
 երկու ցեղը՝ իրար հետ որ խնամութիւն
 արին և ամենքն էլ չարացան, Աստուած

կամեցաւ աշխարհս բոլորովին ջրհեղեղով
 կործանել, միայն 'Նոյին՝ և իւր ընտա-
 նեաց այն ջրհեղեղեցն ազատել:

Գլուխ ԼԿ.

'Նոյ 'Նահապետին հրամայեց Աստուած՝
 որ մի տապան շինէ, և կարածիւթով պա-
 տէ, յետոյ 'Նոյ կատարեց Աստուծոյ հրա-
 մանը, ամեն սուրբ անասուններէցը եօթ
 եօթ, իսկ անսուրբ անասուններէցը՝ զոյգ
 զոյգ մտցրուց նորա մէջը. և մի տարուան
 պաշար էլ տեղաւորեց, և յետոյ մտաւ
 տապանի մէջը, ինքը, իւր կինը, երեք որ-
 դիքը, և նոցա կնիկները. և յետոյ պա-
 տուհանը ծածկեց, և սկսեց քարասուն
 ցիւրկի, և քարասուն գիշեր, շարունակ
 անձրև գալ. ջուրը ծածկեց ամեն երկի-
 րը, տանն և մէկ ամսից յետոյ՝ ելան դու-
 րըս. 'Նոյ մէկ Սեղան շինեց՝ և սուրբ ա-
 նասուններէցը Աստուծոյ մատաղ նուի-
 րեց:

ԳԽԽ Լ Գ.

Նոյ Նահապետն ունէր երեք որդի,
Սեմ, Քամ, Յաբէթ. Նոյ մի այդի արն-
կեց, որոյ մէջը տնկեց և խաղողի որթ. երբ
որ խաղողը հասաւ՝ չիմանալով նորա զօ-
րութիւնը՝ քամեց մի ամանի մեջ և խմեց,
յետոյ հարբած մերկացաւ՝ և վեր ընկաւ.
նորա Քամ որդին երբ որ տեսաւ՝ գնաց
ծիծաղելով՝ միւս եղբայրներին պատմեց,
բայց նոքա մի շոր առաձ՝ ետեանց գնա-
լով, առանց տեսնելու՝ իրանց հօրը մեր-
կութիւնը ծածկեցին. նորա համար հայ-
րը Քամին անիծեց, Սեմին և Յաբէթին
օրհնեց. Նոյ մեռաւ. թաղեցին նորան
Նախշեանը, իսկ նորա կին Նոյեմզարը
մեռաւ՝ և թաղեցին նորան էլ Մարանդը:

ԳԽԽ Լ Ե.

Մարդիկներ՝ երբ որ երկրիս վերայ շա-
տացան՝ հաւաքուած Բաբելոնի Սենաար

դաշտումը, կամեցան մի բարձր Աշտարակ
շինել, որոյ ծայրը՝ մինչև երկինքը հաս-
նէր, նոցա զլեաւորն էր Նեփրովդ Ասոր-
ւոց թագաւորը. երբ որ սկսեցին շինել,
Աստուծոյ կամաց հակառակ թուելով՝
նոցա լեզուների մէջը խառնակութիւն զը-
ձեց, որ չէին հասկանում իրարու խօսքը,
(ըստ որում առաջ մէկ լեզուով էին խօ-
սում). ուստի զործը անկատար մնաց.
մարդիկը ցրուեցան աշխարհիս ամեն կող-
մերը, որոնցից բաժանուեցան զանազան
ազգեր և լեզուներ. և Աստուած մի սաս-
տիկ քամի էլ հանեց՝ որ նոյն կիսաշէն աշ-
տարակը՝ հողի հետ հաւասարցրուց:

ՅՕԻՈՒԱԾ ԵՐՐՈՐԻ.

Աբրահամ և նորա սերունդը:

ԳԽԽ Լ Զ.

Սեմայ ցեղեցն էր Աբրահամ, և բնակ-
վումէր Միջագետաց երկրումը. Աստուած

հրամայեց նորան՝ որ դուքս գայ այն երկրիցը, և գնայ բնակվի այն երկրումը՝ որն որ իրան ցոյց կըտայ. հնազանդեցաւ Աբրահամն Աստուծոյ հրամանին, իւր կինն Սարայի, և եղբօր որդի Ղովսայ հետը՝ իրանց ունեցած անասուններովը, և ծառաներովը գնացին Քանանու երկիրը, և այն տեղումը Աբրահամ մի սեղան շէնեց, սուրբ անասուններիցը՝ Աստուծոյ մատաղ յուրից. Աստուած էլ նորա մատաղը բնդունելով՝ օրհնեց որ նորա զաւակները շատանան, և Քանանացւոց երկրին տիրեն. յետոյ Ղովսը բաժանուեցաւ Աբրահամիցը՝ գնաց բնակուեցաւ Սոդոմ քաղաքումը. իսկ Աբրահամը վրանի տակ Քեփրոնումն էր բնակվում:

ԳԽԽ ԼԼ.

Աբրահամ Աստուծոյ հրամանովը Սարայիցն ունեցաւ մի որդի, Իսահակ անուն. մի օրը Աստուած նորա հաւատքը փորձե-

լու համար՝ հրամայեց որ իւր սիրելի Իսահակ որդին տանի մի բարձր սարումը՝ իրան համար մատաղ անէ. Աբրահամ հնազանդելով Աստուծոյ հրամանին՝ վերառաւ Իսահակին, տարաւ նոյն տեղը. երբ որ նորա ձեռները կտպեց, սուրբ վերառաւ որ մորթէ, Աստուծոյ հրեշտակը արգելեց, և մի խոյ ցոյց տուաւ Սարեկայ ծառիցը կախուած. իսկոյն բերաւ Իսահակայ փոխանակ՝ Աստուծոյ մատաղ աբրաւ, նորա համար՝ Աստուած օրհնեց Աբրահամին՝ որ իւր Սերունդը երկնքի աստվերի, և ծովու աւազի չափ՝ շատանան աշխարհիս վերայ:

ԳԽԽ ԼԼ.

Իսահակ երբ որ չափահաս դատաւ՝ Աբրահամ հրամայեց իւր Աղեազար անուն ծառային, որ տասն ուղտի վերայ բարձած ընծաներով՝ գնայ Միջագետաց երկիրը, իւր Իսահակ որդւոյ համար՝ կին բերէ. նա

էլ զնաց Միջագետաց երկրիցը բերաւ
 Փաթուէլի Ռեբեկայ անուն աղջիկը, և
 պսակեց Իսահակի վերայ. և յետոյ նորա-
 նից ունեցաւ Իսահակ երկու որդի, Եսաւ,
 և Յակովբ, երկուսն էլ մի օրումը ծըն-
 ւած, այս ինքն երկուորեակ. Եսաւը մար-
 մընով թաւամազ էր, իսկ Յակովբը՝ լեբ-
 կամարմին. մի օրը Յակովբ սպանաթան էր
 ուտում, Եսաւը դաշտիցն եկաւ քաղ-
 ցած՝ Յակովբիցը խնդրեց որ իրան էլ
 տայ. բայց նա էլ խնդրեց Եսաւից՝ նորա
 անդրանկութիւնը, տուաւ անդրանկու-
 թիւնը՝ և յետոյ սպանաթանը կերաւ:

Գ. 1. Թ.

Երբ որ Իսահակ ծերացաւ՝ աչքերը
 վատացան, մի օր կանչեց Եսաւին՝ հրա-
 մայեց որ զնայ դաշտիցը մի որս բերէ, և
 իւր ուզած կերակուրն եփէ, որ ինքն ու-
 աէ, և օրհնէ իրան. երբ որ մայրն իմա-
 ցաւ, Յակովբին մի ուլ բերել տուաւ՝ և

նորա հաւնած կերակուրն եփեց. Յակովբը
 տարաւ իւր հօրը. նա էլ իմացաւ թէ Ե-
 սաւն է, կերակուրը ուտելից յետոյ՝ շատ
 օրհնեց նորան. և յետոյ Եսաւն էլ բերաւ
 որսը, կերակուր եփեց՝ տարաւ հօրը՝ որ
 ուտէ՝ օրհնէ իրան. բայց յետոյ իմացաւ
 որ Յակովբը խաբէութեամբ հօր օրհնու-
 թիւն ժառանգել է, նորա համար՝ բար-
 կացաւ և ռի պահեց, որ Յակովբին սպաննէ:

Գ. 1. Խ.

Ռեբեկայ երբ որ իմացաւ Եսաւայ չար
 միտքը՝ խնդրեց Իսահակից, որ Յակովբին
 հրաման տայ զնալ Միջագետաց երկիրը.
 նա էլ կանչեց Յակովբին՝ կրկին անգամ
 օրհնեց, և հրաման տուաւ՝ որ զնայ. Յա-
 կովբ երբ որ զնումէր՝ ճանապարհին քունը
 տարաւ՝ գլուխը դրաւ մի քարի վերայ քը-
 նեց. յետոյ տեսաւ մի սանդուխտ բարձ-
 րացած մինչև երկինքը, հրեշտակները ել-
 նում իջնում էին. յետոյ մտքումը դրաւ

որ՝ յետ դառնալիս՝ նոյն տեղումը մի սե-
զան շինէ, և Աստուծոյ մատաղ անէ, և
տեղին անունը Բէթել զբաւ. յետոյ զը-
նաց Միջագետաց երկիրը՝ Աբանայ մօտ
Ճառայութիւն արաւ տասն և չորս տարի,
և նորա երկու աղջիկներն Ախայ և Ռա-
քէլ իրանց նաժիշաներովը առաւ իրան
կին. որոնցից ունեցաւ տասն երկու որդի:

Դաս ԽԵ.

Յակովբ իւր աներւոջ տանը վեց տարի
էլ Ճառայութիւն արաւ, և բաւական հա-
րըստութիւն դիզեց, և յետոյ վեր առաւ
իւր ունեցած ամեն բաները, զուրս եկաւ
Միջագետաց երկրիցը՝ գնալ իւր հայրե-
նի Քանանացւոց երկիրը. ճանապարհին
քնի մէջ հրեշտակի հետ դօտեմարտե-
ցան. և յետոյ հրեշտակը նորա անունը
փոխեց՝ Իսրայէլ զբաւ. երբ որ Յակորի գա-
լը լսեց Ասաւը՝ չորս հարիւր մարդով ե-
կաւ՝ որ նորան սպաննէ, բայց Յակորը վա-

նազան ընծաներով՝ և Ճառայական խո-
նարհութեամբ՝ նորա սիրտը հանդարտեց-
րուց՝ և սիրով հաշտուեցան իրարի հե-
տը. Ասաւը զնաց Սէիր (ուր որ բնակ-
վում էր), և Յակովբ զնաց իւր հօր տու-
նը. Բէթէլէ հեմի ճանապարհին Ռաքէլ մի
տղայ ծնաւ Բենիամին անունով, և ինքն
մեռաւ:

Դաս ԽԶ.

Յակովբ իւր տասն երկու որդիներէիցը
աւելի սիրումէր Յովսէփին, որուն շինած
էր մի ծաղկեայ պատմուձան, նորա համար՝
եղբայրները նախանձու մէին. աւելի նա-
խանձուեցան՝ երբ որ իւր երկու անգամի
տեսած երազները եղբայրներին առջևը
պատմեց, այս ինքն եղբայրներէկապած խո-
տի խուրձերը՝ և երկնքի տասն և մէկ աստ-
ղերը, արևը, և լուսին՝ իրան երկրպագու-
թիւն անելը. յետոյ մի օր երբ որ Յովսէփ
զնաց դաշտը եղբայրներին հաց տանելու,

Մերկացուցին նորան՝ յետոյ ծախեցին Իս-
մայէլացի վաճառականաց վերայ, և նորա
շորերը ոչեարի արիւնի մէջ թաթախե-
ցին, և տարան իրանց հօրը խաբեցին, թէ
ճանապարհի վերայ գտանք. նա էլ շատ
լաց ելաւ:

Դաս ԽԳ.

Իսմայէլացիք Յովսէփին տարան Ազիւ-
տոս, ծախեցին Փարաւօնի դահճապետի
վերայ՝ որոյ անունն էր Պետափրէս. սորա
տան մէջը հաւատարիմ՝ ծառայութիւն
էր անում. Պետափրէս տեսնելով Յով-
սէփի հաւատարմութիւնը, տան բոլոր կա-
ռավարութիւնը յանձնեց նորան. բայց
իւր կնոջ դաւաճանութեամբ՝ մի ժամա-
նակից յետոյ՝ բանտը դձեց Յովսէփին,
ուր որ դրուեցան Փարաւօնի տակառապե-
տը և մատակարարը. որոնց տեսած ե-
րազների մեկնութիւնը Յովսէփ ճշտու-
թեամբ տալեց յետոյ՝ խնդրեց տակառա-

պետին՝ որ իւր համար Փարաւօնին միջ-
նորդէ. բայց նա մոռացաւ. և այնպէս Յով-
սէփ երկու տարի մնաց բանտումը:

Դաս ԽԴ.

Փարաւօն թագաւորն երազ տեսաւ.
ուր որ չըկարողացաւ նոյն երազն մեկնու-
թիւն տալ. յետոյ տակառապետը յիշեց
Յովսէփին. Փարաւօն խկոյն հրամայեց
բանտից հանել՝ և փառաւոր զգեստ հագ-
ցընելով՝ ներկայացնել իրան. որ տեսած ե-
րազներին տեղեակ մեկնութիւն տալով՝
հասկացրեց, որ եօթ լիութեան տարի լի-
նելու է, և այնուհետև՝ եօթ թանգու-
թեան տարի. Փարաւօնը կարդեց Յովսէ-
փին Ազիւպոսի մէջը իբր Փարաւօնի երկ-
րորդ. Յովսէփ շինել տուաւ մեծամեծ
ամբարներ, լիութեան տարուայ եկած ցո-
րենները լեցրուց նոցա մէջը՝ և թանգու-
թեան տարիներումը կառավարումը ժո-
ղովրդեանը՝ նոյն ամբարած ցորեններովը:

Դաս ԽԵ.

Թանգութիւնը տարածուելով՝ հասաւ մինչև Վանանացւոց երկիրը. Յակովբ ուղարկեց իւր տասն որդւոցը՝ որ գնան Ազիպտոսից ցորեն գնեն, և բերեն, նոքա գնացին ներկայացան Յովսէփին՝ և երկրպագութիւն տուին. Յովսէփը ճանաչեց նոցա, բայց նոքա՝ Յովսէփին չըճանաչեցին. Յովսէփ շատ հարց ու փորձ անելով՝ յետոյ Շքմաւօնին բանտը գձել տուաւ՝ որ միւսանգամ՝ իրանց Բենիամին եղբայրը բերեն իւրանց հետը, երբ որ գալու լինին, նոքա գնացին, երբ որ երկրորդ անգամ եկան՝ Բենիամինին էլ բերին իրանց հետը: Յետոյ՝ երբ որ ցորեն առած գնացին, Յովսէփայ ոսկի սկիհը գնել տուած էր ինքը Բենիամինի բեռան մէջը, որոյ պատճառաւ՝ յետ դարձրուց. վերջապէս ինքը զնքը ճանաչացրուց նոցա, և հրամայեց՝ որ գնան գրաստներով՝ իրանց գերդաստանը Վանանացւոց երկրիցը վեր առնեն զան:

Դաս ԽԶ.

Յակովբ երբ որ լսեց Յովսէփի ողջութիւնը և փառաւորութիւնը՝ շատ ուրախացաւ, զուրս եկաւ Վանանացւոց երկրիցը իւր գերդաստաններովը (ընդ ամենը եօթանասուն և հինգ հողով), դրնաց Ազիպտոս. տեսնելով Յովսէփին՝ շատ ուրախութիւնիցը՝ լաց ելաւ, և յետոյ Յովսէփը Փարաւօնի հրամանաւը՝ նոցա բնակեցրուց Ազիպտոսի Գետեմ երկրումը, և մնացած հինգ թանգութեան տարիներումը՝ նոցա կերակրումը, և անուանեցան Խարայէլացիք. մի ժամանակից յետոյ՝ Յակովբ վախճանեցաւ, տարան Վանանացւոց երկիրը՝ և թաղեցին իւր հայրենի գերեզմաննոցումը. և Յովսէփն էլ երբ որ վախճանեցաւ՝ թաղեցին Ազիպտոսումը, և Ազիպտոսից զուրս գալու ժամանակը՝ ոսկորնէրը հանեցին տարան իւրանց հետը (ինչպէս որ ինքը մեռնելու ժամանակը կտակ արած էր):

Մովսէս և Իսրայէլացիք:

Դ... ԽԵ.

Յովսէփայ մահից յետոյ՝ մի ուրիշ Փարաւօն եղաւ Ազգիպտոսի իշխող, (որ Յովսէփին չէր ճանաչում,) սկսեց Իսրայէլացիներին խտրել չարչարել. այլ և բոլորովին փչացնելու համար՝ պատուիրեց որ, ինչքան արու զաւակ ծնուի Իսրայէլացւոց ազգին՝ ձգեն Աեղոս զեար՝ որ խեղդուին. նոյն ժամանակումը՝ Ղևտացւոց ցեղից Ըմբամ անունով մի մարդի՝ արու զաւակ ծնաւ. երեք ամիս տանը պահեց, յետոյ՝ Փարաւօնից վախենալով՝ մի անտուկ շենեցին՝ ձիւթով պատեցին, և նորածին կայտառ մանուկին մեջը դնելով՝ դձեցիդ Աեղոս զեար: Յետոյ Փարաւօնի աղջկը նուրբս հանելով՝ արաւ իրան որդեգիր, և անւանեց Մովսէս, որ ասել է ջրից հանած:

Մովսէսը Փարաւօնի տանը մեծանումէր. Փարաւօնի աղջկան խնամքով՝ սովորեցաւ Ազգիպտոսի բոլոր ուսմունքները. մի օր զընաց ման գալու Իսրայէլացւոց մեջը. տեսաւ մի Ազգիպտացի՝ որ կամենումէր մի Իսրայէլացւոց սպաննել. իսկոյն սպաննեց Ազգիպտացուն՝ և թաղեց աւաղի տակը. հետեւեալ օրը՝ դարձեալ տեսաւ երկու Իսրայէլացի, որ կովում էին. կամեցաւ նոցա հաշտացնել՝ բայց զրկող Իսրայէլացին մերժեց Մովսէսի միջնորդութիւնը, և յանդիմանեց նորան Ազգիպտացուն սպանելուն համար. Մովսէս իմացաւ որ Փարաւօն էլ իմացած է՝ և ուզումէսպաննել իրան, վախնալով՝ գնաց Մադիանացւոց երկիրը. այն տեղը Ոթորի ոչխարները արածում էր, և յետոյ նորա աղջկը առաւ իրան կին. որից ունեցաւ երկու զաւակ:

Դաս ԽԲ.

Մովսէս երբ որ Քարեք սարունք ոչնար էր արածեցնում, յանկարծ տեսաւ որ մորենին վառվումը՝ բայց չէր այրւում, ձայն լսեց՝ որ կանչումէր իրան. և յետոյ նոյն ձայնի հրամանովը՝ արեխները հանեց օտիցը, և սարսափելով մօտեցաւ: Աստուած հրամայեց՝ որ զնայ Խորայեղացոց ազգին Եզրիպտոսի գերութիւնիցն ազատէ. Մովսէս՝ որ իւր տկարութիւնը պատճառ բերաւ՝ երկու հրաշք երեւցրուց, որ է զաւաղանի օձ դառնալը՝ և իւր ձեռի բորտաւ իրը, և յետոյ առաջին ձեւերն առնուլը. և յետոյ Աստուծոյ հրամանովը վեր առաւ իւր կինը և երկու որդիքը, զընաց Եզրիպտոս. և ճանապարհին հանդիպեցաւ իւր Ահարոն եղբօրը, ի միասին Խորայեղացոց ծերերի հետ զնացին Փաւլօ ին ներկայանալ:

Դաս Կ.

Մովսէսը Ահարոնի և Խորայեղացոց ծերերի հետ երբ որ ներկայացաւ Փաւլօնին, առաջարկեց՝ որ Խորայեղացոց ազգին հրաման տայ Եզրիպտոսից զուրս գան. ցոյց տուաւ և զաւաղանի հրաշալի կերպով օձ դառնալը: Երբ որ Փաւլօնը մերժեց Մովսէսի առաջարկութիւնը, այնուհետև սկսեց Մովսէսն Աստուծոյ հրամանովը հետ զհետէ ի գործ զնել Եզրիպտոսի հրաշալի պատիժները, 1) ջրերի արիւն դառնալը, 2) զորտերը, 3) մոծակները, 4) շանաձանձերը, 5) անասնամահը, 6) մարդոց վրայի վեքերը, 7) կարկուտը, 8) մորեխը, 9) երեք օր շոշափելի խաւարը, և 10) անդրանիկներէ կոտորածը. զի հրամայեց Աստուած՝ որ ամենքն էլ մի գառըն առնեն մորթեն՝ և արիւնը՝ քսեն դռների սեւոց վրայ. այն զիշերը սատակիչ հրեշտակն եկաւ, որի տան սեւոց վե-

րայ որ արիւն քսած չէր՝ նոցա անդրա-
նիկները կոտորեց:

ԳԽԱՆ ԾԵ.

Եզրիպտոսի 10 պատիժներից յետոյ՝
Փարաւօնը հրաման տուաւ Խորայէլացւոց՝
Եզրիպտոսից դուրս գալու. Խորայէլացիք
դուրս եկան վեց հարիւր հազար միայն
տղայ մարդիկ (առանց կնիկները և մա-
նուկները համարելու), ճանապարհն ուղ-
ղեցին դէպ ի Կարմիր ծովը. երբ որ մօտե-
ցան Կարմիր ծովին, Փարաւօն իւր զօրքը
վեր առած՝ կառքերով, ձիերով եկաւ՝
որ Խորայէլացւոց կրկին վերադարձնէ. յե-
տոյ Մովսէս Աստուծոյ հրամանովը՝ գա-
ւազանը խփեց Կարմիր ծովին, որ ճանա-
պարհ բացուեցաւ ցամաքի պէս, և անց-
կացան Խորայէլացիք. յետոյ Փարաւօն, և
Եզրիպտացիք երբ որ նոցա ետեւիցը գնու-
մէին՝ և Խորայէլացիք արդէն միւս կողմքը
հասածէին, Մովսէս կրկին անգամ խփեց

ծովին, իսկոյն բաժանուած մասերը միա-
ւորեցան, Փարաւօն և Եզրիպտացիք խեղ-
զուեցան ծովը մէջը. յետոյ Մովսէս և Խ-
որայէլացիք՝ Աստուծոյ օրհնութիւն եր-
գեցին:

ԳԽԱՆ ԾԲ.

Խորայէլացիք Կարմիր ծովեց երբ որ դու-
րս եկան՝ հաց չունէին, երկնից իջած մա-
նանայ կուտէին, և հրաշքով բղխած
ջուր կրխմէին. գնացին Աին անապատիցը՝
հասան Աինայ սարի տակը. Աստուած՝ ի-
րան տասն պատուիրանքները աւանդեց նո-
ցա. 1) ես եմք քո տէր Աստուածդ. 2) որ և
իցէ նիւթեղէնից աստուած չըշինես և պաշ-
տես. 3) Աստուծոյ անունը զուր տնդիւ-
զուիդ վերայ չ'առնես. 4) եօթներորդ օրը
սուրբ պահես. 5) ծնողքդ պատուես. 6) մի՛
շնար. 7) մի՛ զողանար. 8) մի՛ սպաններ.
9) մի՛ սուտ վկայեր. 10) մի՛ ցանկանար ու-
րիշն ունեցածներին: Այս պատուիրանք-

ները Մովսէսը երկու քարեղէն տախտակի վերայ գրած՝ բերաւ Մինայ սարիցը, և յետոյ տեսաւ որ Ահարօնը ոսկի որթ գրած Խորայէլացիք պաշտօնակին, խփեց տախտակները կոտորեց՝ և յետոյ ուրիշ ժամանակ էլ զնաց բերաւ:

ԳԽԽ ԾԳԴ.

Մովսէսն Աստուծոյ հրամանովը մի ուխտախառնակ շինեց, ամեն կողմերը ոսկիով պատեց. որոյ առջևը Ահարօն քահանայական զգեստ հագած՝ խունկ էր ծրխում. Խորայէլացիք քանկոց անգամ Աստուծոյ դէմ մեղանչեցին. նորա համար քառասուն տարի անապատի մէջ թափառեցին. Ազիպտոսի ելողներիցը՝ միայն Յեսու Աաւեան և Քաղէրը կարացին Աւետեաց երկիրը մտնել. Ահարօնն էլ Հովթոսի գլխուժը վախճանեցաւ, և իրան տեղ յաջորդեց իւր Ազիպար որդին. նմանապէս և Մովսէսը Աարաւ սարի գլուխը ե-

լաւ, և այն տեղեց Աստուած Աւետեաց երկիրը ցոյց տուաւ նորան, և յետոյ վախճանեցաւ Մովսէսը, և նրա տեղ յաջորդեց Յեսու Աաւեան, որ եղաւ Խորայէլացւոց առաջնորդ:

ՅՕԴՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՐՈՐԳ.

Խորայէլացւոց դատաւորները և թագաւորները:

ԳԽԽ ԾԳԴ.

Յեսու Աաւեան Խորայէլացւոց տարաւ Յորդանան զեօի եզերքը, և չորս քահանայք Տազանակ ուխտին ուսերի վերայ բարձած՝ մտան Յորդանան զեօր. որ իսկոյն ճանապարհ բացուեցաւ, Խորայէլացիք ցամաքած զեօիցը անցկացան, և յետոյ զընացին Արիբով. վեց օր շարունակ քաղաքի բոլորալիք ման եկան տապանակ ուխտին բարձած, յետոյ եօթներորդ օրը՝ միաբան գոռացին՝ որ իսկոյն Արիբովը պա-

րիսախները կործանեցան. Խորայէլացիք մեջը մտնելով՝ Յեսուայ հրամանովը՝ ամեն բնակիչներին անխնայ կերպով կոտորեցին. վերջապէս Յեսուե՝ Նաւեան՝ Աւետայ երկրի կռապաշտ ազգերին հետ զհետէ կոտորեց՝ և նոցա քաղաքների մեջը տեղաւորեց Խորայէլացւոց. միայն մի քանի կռապաշտ ազգերին թողուց, և վախճանեցաւ ինքն:

ԳԽԽ ԾԵ.

Յեսուե՝ Նաւեանից յետոյ՝ ընտրուած դատաւորներ կկառավարէին Խորայէլացւոց ազգին, որոնցից էր քաջն Ղեդէօն, որ Աստուծոյ հրամանովը՝ երեք հարիւր սըրտոտ կտրիճ մարդիկներով յանկարծ հասաւ այլազգեաց բանակի վերայ, մի հնարքով չփոթուելուն գձեց մեջը, որոնք իրար կոտորելով՝ երեք մասից մի մասը հազիւ թէ փախան, և ազատուեցան. որոյ պատճառաւ Խորայէլացիք մի ժամանակ

էլ հանդիստ մնացին այլազգիների ձեռնից. նմանապէս և քաջ Յեփթայէն Փրղըշտացւոց ղէմ՝ պատերազմի գնալու ժամանակը ուխտ զբաւ սրտումը՝ թէ ով որ ղէմը դար առաջին անգամ, Աստուծոյ զոհ նուիրէր. առաջին անգամ իւր սիրելի աղջկը թմբուկ ածելով ղէմն եկաւ, բայց քառասուն օր կուսութիւնը լալեց յետոյ՝ Յեփթայէն կատարեց նորա վերայ իւր ուխտը:

ԳԽԽ ԾԶ.

Խորայէլացիք երբ որ Փղըշտացւոց ձեռին չարչարվում էին՝ Աստուած մի տղայ պարզեց Մանուէ անուն մարդի, որոյ անունը Սամիսոն զբաւ. պատուիրեց հրեշտակ նորա ծնողացը՝ որ զինի և արաղ չըլարմցնեն տղային, և երկաթ չըդպցնեն նորա գլխին. Սամիսոն մեծանալով՝ գերբնական ոյժ ունեցաւ, մինչև անգամ առիւծի բերանը ձեղքեց, հազար այլազգի մի իշու

Տնտով սպաննեց, քաղաքի դռները իւր շքանակներովը հանեց սարի գլուխը տարաւ. և յետոյ մի կնոջից յաղթուելով՝ գլխի մազերը վեր արին, նորա համար ոյժը պակասեցաւ. աչքերը կուրացրին այլազգիքը. և յետոյ մի հանդիսի օր երբ որ բերին նորան բազմութեան մէջը որ պար գայ՝ իրանք զուարճանան, պար գալից յետոյ՝ դադրեցաւ երկու սիւնի մէջը, յետոյ վերջին ոյժովը շարժեց՝ քանդուեցաւ տունը, հաղարաւոր այլազգիներ ֆնացին ներքեւը, և ինքն էլ նոցա հետը մեռաւ:

Գառ ԾԷ.

Սամիտոնից յետոյ՝ Իսրայէլացւոց ազգին կառավարումէր Հեղի քահանայապետը, որոյ որդիքը անկարգ կերպով էին վարվում ժողովրդոց հետը. որոյ պատճառաւ՝ Աստուած վերջապէս պատժեց նոցա. Աստուած Եղիանայի կնոջ Աննային՝ մի որդի տուաւ՝ որոյ անունը Սամուէլ զը-

րին, յետոյ ընծայեցին տաճարին՝ որ ծառայումէր տապանակի առջևը Սեղի քահանայապետին. մի զիշեր Աստուած Սամուէլին Հեղի քահանայապետի որդւոց անկարգութիւնը յայանեց. բայց դարձեալ չըզգաստացան. մի ժամանակից յետոյ՝ Իսրայէլացիք երբ որ Տապանակ ուխտին հետ առած այլազգեաց դէմը պատերազմ գնացին, իրանք յաղթուեցան, Տապանակ ուխտին գերի գնաց, Հեղի քահանայապետի որդիքը մեռան. ինքն էլ երբ որ լսեց այս եղելութիւնները՝ աթոռից վայր ընկաւ՝ ողն փշրեցաւ, և մեռաւ. Սամուէլը ընտրուեցաւ քահանայապետ. մի ժամանակից յետոյ՝ Տապանակ ուխտին մի հրաշքով գերութիւնից ազատուեցաւ, և նոր կառքի մէջ դրուած՝ եկաւ Իսրայէլացւոց երկիրը:

Գառ ԾԸ.

Սամուէլից երբ որ Իսրայէլացիք Թազաւոր ուղեցին, ընտրեց Աստուծոյ հրա-

մանաւր Քենիամինի ցեղից Ահսի որդին Սաւուղը, որ առաջին անգամ լաւ քաջութեամբ կառավարումէր Իսրայէլացւոց. բայց յետոյ՝ Աստուծոյ հակառակ վարուեցաւ իւր գործքերումը. որոյ համար՝ Սամուէլ բարկացաւ վրան, և Աստուծոյ հոգին հեռացաւ նորանից. վերջապէս յաղթուեցաւ այլազգիներէիցը. մի անգամ էլ Սամուէլ Աստուծոյ հրամանովը Բեթղէհէմ գնաց՝ Յուդայի ցեղից Յեսսէի որդի Դաւիթին օծեց Իսրայէլացւոց վերայ թագաւոր. մի անգամ էլ Փղշտացիք երբ որ պատերազմ բաց արին, Գողիաթ դուրս գալով հպարտութեամբ Աստուծոյ դէմ հայհոյումէր. յետոյ Դաւիթը (որ տակաւին փոքրահասակ էր) դէմն ելաւ՝ պարսաքարով խփեց՝ վեր դձեց նորան, և նորա սրովը գլուխը կտրեց. որով յաղթուեցան Փղշտացիք. և այս բանիս վերայ՝ նախանձեցաւ Սաւուղը, և միշտ հալածումէր նորան:

Դաս ԾԹ.

Երբ որ Սաւուղ Աստուծոյ երեսից ընկած պատերազմի մէջ մեռաւ, Իսրայէլացիք ընտրեցին Դաւիթին բոլոր Իսրայէլացւոց վերայ թագաւոր. Դաւիթը իւր կենաց մէջը Աստուծոյ հակառակ բան չէ գործեց. Աստուծոյ կամաց համաձայն վարուեցաւ, և միշտ սիրելի եղաւ նորան. թէ և մի երկու անգամ մեղանչեց, բայց դարձեալ զղջաց և ապաշխարեց. ի վերջոյ կամեցաւ որ Աստուծոյ մի տաճար շինէ, բայց Աստուած արգելեց. նորա համար՝ միայն տաճարի նիւթերը պատրաստեց. որ յետոյ իւր Սողոմոն որդին շինեց. Դաւիթ բարի մահուամբ վախճանեցաւ, իւր Սողոմոն որդին՝ որ սասն երկու տարեկան էր, հօր տեղը թագաւորեց. Աստուած նորան չափազանց իմաստութիւն տուաւ՝ որ շատ խոհեմութեամբ վարումէր իւր թագաւորութիւնը. Աստուծոյ տա-

ճարը շինեց հրաշակերա կերպով . բայց
ինքը Աստուծոյ պատուիրանաց դէմ գոր-
ծեց, որով և Աստուծոյ երեսիցն ընկաւ :

Գաւ Կ.

Սողոմոն երբ որ մեռաւ՝ տեղը յաջոր-
դեց իւր Ռոբովամ որդին . սա չունեցաւ
իւր հօր իմաստութիւնը, արիասըրտու-
թիւնը, և խոհեմութիւնը . թողնելով ծե-
րոց խորհուրդը, հետեւեցաւ իւր հասա-
կակից երիտասարդաց խորհրդին . որով և
ապստամբեցրուց իրանից Իսրայէլացւոց
տասն ցեղերը, որոնք գնացին Սամարիայ՝
իրանց վերայ Յերոբովամին թագաւոր
ընտրեցին, իսկ Ռոբովամի վերայ մնացին
միայն Յուդայի և Բենիամինի ցեղերը, և
այս կերպով ասուեցաւ այս երկու բաժան-
մանց թագաւորութիւն Իսրայէլի . Սամա-
րիայի թագաւորները զրէթէ ամենքն էլ
անկարգութեամբ վարուեցան, և կրոա-
պաշտութիւն մտցուցին Իսրայէլացւոց մէ-

ջը . որոնցից մէկն էր Աքաաթ թագաւորը,
որոյ կնոջ անուն էր Յեղարէլ, և էր վա-
տահոգի և կռապաշտի աղջիկ :

Գաւ ԿԱ.

Աքաաթի ժամանակն՝ Աղիա մարգա-
րէն մի օրը Աքաաթին սաստիկ յանդիմա-
նեց . և Աստուծոյ հրամանովը արդելեց որ
երկու տարի և վեց ամիս անձրև չնկաւ,
և ինքն գնաց ուրիշ տեղ ապրում էր .
յետոյ եկաւ՝ և երևեցաւ Աքաաթին, և
պատուիրեց՝ որ ժողովուրդը հաւաքէ Պար-
միլոս սարը . այն տեղը երկու սեղան պատ-
րաստել տուաւ քուրմերին, մինը ինքը
վեր առաւ . երբ որ քուրմերը այնքան գո-
ռացին իրանց Բահաղ կուռքին, որ առանց
կրակի իրանց ողջակէզը այրուէր, բայց
ոչինչ չ'պատահեցաւ, բայց Աղիայն Աս-
տուծուց խնդրեց՝ իսկոյն կրակիջաւ երկրն-
քիցը՝ և բոլոր ողջակէզը լափեց . նորա հա-
մար՝ Աղիան սպաննել տուաւ չորս հա-

րիւր քուրմերին. բայց Յեզաբէլն երբ որ լսեց՝ ուզեց Եղիայէն սպաննել տայ. նորա համար՝ փախաւ Եղիան զնաց Արաբիայ, և յետոյ Աքաաբ և Յեզաբէլ մի օրը չարաչար սատակեցան, ինչպէս որ Եղիան անիծեց, մի երևելի յանցանքի համար. իսկ Եղիան՝ մարմնովն երկինք վերացաւ:

Դաս ԿԲ.

Իսրայէլացիք, և Յուդայի թագաւորութիւնները մի ժամանակ էլ շարունակեցին. բայց վերջապէս Բաբելոնացւոց՝ Նաբուգոզոնոսոր թագաւորը որոշ որոշ ժամանակներումը եկաւ Երուսաղէմը քարուքանդ արաւ, և Իսրայէլացւոց ժողովուրդը հաւաքեց՝ Բաբելոն գերի տարաւ. միայն Սամարիայումը բնակեցան կռապաշտներ մնացած Իսրայէլացւոց հետը, որոնց հետը խառնուելով՝ ասուեցան Սամարացիք, և այս կերպով վերջացաւ Իսրայէլացւոց թագաւորութիւնը, և իրանք էլ

տարազրեցան իրանց հայրենիքից. եօթանասուն տարից յետոյ՝ Աիւրոս Պարսից թագաւորը, (որ տիրեց Բաբելոնի,) հրովարտակ հանեց որ բոլոր Իսրայէլացիք ազատուեցան զերութիւնից, Աստուծոյ տաճարը և Երուսաղէմի պարիսպները նորոգեցին, և բնակուեցան մէջը:

Դաս ԿԳ.

Բաւական ժամանակից յետոյ՝ Ասորւոց Անաիոքոս թագաւորը եկաւ տիրեց Երուսաղէմին, և ստիպումը շրջեց՝ որ Աստուծոյ օրինաց դէմ խողի միս ուտեն, և կուռքերին զոհեն. բայց շատերը իրանց հայրենի օրինաց վերայ նահատակեցան, ինչպէս Եղիազար քահանայն, Համուէն՝ մի այրի կին եօթը զաւակներովը՝ արիութեամբ դէմ կեցան և Աստուծոյ սուրբ օրինաց վերայ նահատակուեցան, և յետոյ Սատաթի անուն արիասիրտ քահանայն ժողովուրդը ապստամբեցրուց, ինքը



մեռաւ՝ իւր տեղը յաջորդեց Յուզայ Մաճ
կարէ անունն որդին՝ որ շատ քաջ էր, բա-
ւական ժամանակ ազգին զլեաւոր դատաւ
և Անտիոքոսի զօրաց դէմ՝ քաջապէս պա-
տերազմումէր. յետոյ Անտիոքոս Պարս-
կաստանից վերադարձած ժամանակը՝ սա-
տակեցաւ. վերջապէս Հռովմայեցւոց Օ-
զոստոս կայսր զօրք յուղարկեց Երուսա-
ղէմ՝ բոլոր Պաղէստինին տիրեց. որոյ ժա-
մանակումը ծնաւ մեր ՅԻՍՈՒՍ Փրկիչը՝
Ի-էթլէհէմ քաղաքումը, ինչպէս որ Մար-
գարէնները գուշակած էին:

ԳՂՈՒԽ ԵՐՐՈՐԳ.

ՍՐԲԱԶՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ.

ՅՕԴՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ.

Յովհաննու Մկրտչի, և Յիսուս Փրկչի ծնունդը:

Դաս ԿԳ.

Հռովմայեցւոց Օզոստոս կայսեր ժա-
մանակը՝ Յուզայի մի փոքրիկ քաղաքու-
մը բնակվում էր Չաքարիայ անուն մի քա-
հանայ, որոյ կնոջ անունն էր Լզիսաբէթ,
երկուսն էլ բարեպաշտ և անարատ վարք
ունէին, բայց հասած էին մինչև ծերու-
թեան հասակը՝ տակաւին անզաւակ էին.
մի օր տաճարի մէջը ըստ սովորութեան
խունկ ծխելու ժամանակը՝ Աստուծոյ հը-

ընշտակը աւետիս տուաւ՝ որ մի զաւակ պիտի ծնուի, անունը զնէ Յովհաննէս. բայց Չաքարիայն տարակոյս ունեցաւ, որոյ համար և պատանձ վեցաւ. մի տարիից յետոյ՝ ծնաւ մի կայտառ տղայ, և երբ որ Չաքարիան տղայի անունը Յովհաննէս նշանակեց մի տախտակի վերայ՝ իսկոյն լեզուն բացուեցաւ. և Յովհաննէսը երբ որ հասակն առաւ՝ գնաց անապատումը բընակվեցաւ, ուսումէր վայրենի մեղը, և մարտիս, և հագնումէր ուղտի բրտից հագուստ և կապում էր կաշիից գօտի:

ԳԽԽ ԿԵ.

Սուրբ Մարիամ կոյսը՝ որ բնակվում էր տաճարումը, և նշանուած էր առաքիների ծերունադարդ Յովսէփի վերայ, մի օրը աղօթելու ժամանակը՝ յանկարծ Գաբրիէլ հրեշտակապետը երևնալով՝ ողջոյն տուաւ նորան, և աւետեց որ մի որդի պէտք է ծնուի իրանից, և անունը

զնէ Յիսուս, որ նշանակումէ՝ աշխարհի Փրկիչ. երբ որ Մարիամը հաւանութիւն տուաւ, իսկոյն հրեշտակը նորանից մեկնեցաւ. և Մարիամը սուրբ Հոգւոյն զօրութեամբը յղացաւ. իսկ Յովսէփը չէր իմացած այս բանս, նորա համար հրեշտակը երևեցաւ Յովսէփին՝ և պատուիրեց, որ տանի իւր տունը՝ և պահպանէ նորան. նա էլ տարաւ, և խնամակալի նման պահպանումէր:

ԳԽԽ ԿԶ.

Օգոստոս կայսր աշխարհագիր էր անում Հրէաստանի երկրումը. Յովսէփն էլ վեր առաւ Մարիամին՝ գնաց Բեթղէհէմ՝ որ գրուին աշխարհագրի ցուցակումը. քաղաքի մէջ բնակութեան տեղ չըլինելու պատճառաւ՝ գնացին մի այրի մէջ բնակուեցան. նոյն դիշերումը ծնաւ Մարիամը մեր Յիսուս Փրկիչին, փաթաթեց նորան խանձարուրումը՝ և զբաւ մտուրի

մէջը: Այն զիշերը որ Յիսուս ծնուել էր, Բեթղէհէմի հովիւները իրանց ոչխարները արածուակին մի բացօդեայ տեղումը, յանկարծ մի հրեշտակ երևեցաւ իրանց՝ աւետիս տուաւ Յիսուսի ծննդեան համար, և ուրիշ հրեշտակներ էլ օգուով կ'երգէին «Փառքի բարձունս Աստուծոյ», յետոյ հովիւները գնացին Բեթղէհէմի այբի մէջը՝ գտան Յիսուս մանուկին, երկըրպազու թիւն տուին նորան, և պատմեցին ինչ որ տեսան՝ և լսեցին:

ՅՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

Յիսուսի ընծայումը, մոզուց երկրպազու թիւնը, և մանկանց կոտորումը:

Դաս ԿԷ.

Յիսուս երբ որ ութօրեայ եղաւ՝ թըլփատեցին նորան, և անունը դրին Յիսուս

(ինչպէս որ հրեշտակն ասել էր). քառասուն օրից յետոյ՝ Յովսէփ և Մարիամ միջուխա աղաւնի վեր առած Յիսուսի հետ տարան տաճարը, ուր բնակվումէր Կիսկոն Կերուներն, որ արձակումը խնդրեց. այն տեղը բնակվումէր և Մննա մարգարէուհին, նա էլ Յիսուսին երբ որ տեսաւ՝ սկսեց ժողովօրոց քարոզել թէ, սա է ձեր սպասած Մեսիան. Յովսէփ և Մարիամ վեր առին Յիսուսին՝ և դարձան իրանց սոււնը:

Դաս ԿԸ.

Արևելքումը բնակվում էին երեք աստղադէտ մոզ թագաւորներ. նոքա տեսան մի նշանաւոր աստղ երկնքումը, իմացան որ շրէաստանի մէջ մի երևելի թագաւոր է ծնուել, իմիասին աստղի նշանով եկան Արուսաղէմ և հարցնումէին թէ « ո՞ւր պէտք է ծնուի շրէից թագաւորը », շերովդէս (որ Գալիլայի թագաւորը),

ւորն էր) երբ որ լսեց՝ կանչեց՝ նոցա գալըստեան պատճառն իմացաւ. դպիրնն ինչ հարցրուց. և նոքա ասացին թէ՛. «Բէթղէհէմ քաղաքումը պէտք է ծնուի՝ Բրիտոսը,» և Էրովղէս մոզերին խնդրեց թէ՛ մանուկին երբ որ գտնեն՝ զան իրան էլ իմաց տան, որ ինքն էլ զնայ երկըրպագուութիւն տայ նորածին թագաւորին:

Դաս ԿԹ.

Մոզերին դարձեալ երեւեցաւ նոյն աստղը, որոյ նշանաւ զնացին Բէթղէհէմ, զբտան Յիսուսին, երկրպագութիւն տալեց յետոյ՝ ընծայ մատուցին նորան՝ ոսկի, կնդրուկ, և զմուռս, և յետոյ ուզումէին և Էրովղէսի մօտ զնալ, բայց Աստուծոյ հրեշտակը իմացրուց նոցա, որ և Էրովղէսը ուզումէ մանուկին սպանել, նորա համար՝ ուրիշ ճանապարհով զնացին իրանց աշխարհը. և Էրովղէս երբ որ տեսաւ թէ՛ մոզերը չը վերադարձան իւր մօտը, բար-

կացաւ, և բաւական զօրք յուղարկեց՝ որ զնան Բէթղէհէմի մէջը երկու տարեկանից պակաս գանուած մանուկներին կոտորեն:

Դաս Զ.

Աստուծոյ հրեշտակը Յովսէփին երեւեցաւ, և և Էրովղէսի չար միտքը նորան յայտնեց, և ասաց որ վեր առնէ մանուկըն և նորա մայրը՝ փախչին Ազիպտոս յետոյ և Էրովղէսի զօրքերն եկան կոտորեցին Բէթղէհէմի մանուկները, բայց Յիսուս Ազիպտոսումն էր. երբ որ և Էրովղէս վախճանեցաւ՝ Աստուծոյ հրեշտակը դարձեալ երեւեցաւ Յովսէփին՝ և իմացրուց՝ որ զնայ Իսրայէլացւոց երկիրը. վերկացան Մարիամու հետը Յիսուսին վեր առան որ զնան Իսրայէլացւոց երկիրը. յետոյ երբ որ իմացան թէ՛ նորա որդի Աբբղա-յոսը թագաւորել է և Էրեստասանումը, վախեցան զնալ այն տեղը, հապա զնային

ընակվեցան 'Նազարէթ, որոյ պատճառաւ՝
Յիսուս 'Նազովըեցի ասուեցաւ:

ՅՕԳՌԻԱԾ ԵՐՐՈՐԴ

Յիսուսի մկրտութիւնը, աշա-
կերտների ընտրութիւնը, և նո-
րա զանազան հրաշքները:

Դաս ԷԸ.

Յիսուս երեսուն տարեկան որ դառաւ՝
գնաց Յորդանան գետը Յովհաննէսից
մկրտուելու, զի Յովհաննէսը ժողովրդին
մկրտումէր Յորդանան գետումը, և ապաշ-
խարութիւն էր քարոզում նոցա. Յով-
հաննէս երբ որ տեսաւ Յիսուսին՝ իսկոյն
վկայեց թէ՛ « սա է Աստուծոյ Գառը, որ
աշխարհիս մեզքերը վեր կ'առնէ, » Յի-
սուսին արգելումէր թէ՛ « ես պէտք է քեզ-
նից մկրտուիմ, » բայց Յիսուս ինքն յօ-
ժարուեցաւ մկրտուելու. երբ որ մտաւ

Ջրի մէջը՝ իսկոյն մկրտուելով դուրս ե-
կաւ. տեսնուեցաւ սուրբ Հոգին ինչպէս
սողանի՝ իջաւ Յիսուսի վերայ, և մի ձայն
լսուեցաւ երկնքից թէ՛ « Դա է որդին իմ
սիրելի, որին ես հաւանեցայ, » այնուհե-
տե Յիսուս գնաց անապատը սատանայից
փորձուելու:

Դաս ԷԹ.

Յիսուս ընտրեց իրան համար տասն
երկու աշակերտներ, որոնց առաքեալ ա-
նուանեց. 1) Պետրոս, 2) Անդրէաս, 3) Յա-
կովբոս, 4) Յովհաննէս, 5) Փիլիպպոս,
6) Բարդուղիմէոս, 7) Թովմաս, 8) Մատ-
թէոս, 9) Յակովբոս Ալիեան, 10) Աիմոն
Սանանայի, 11) Գէրէոս որ է Թաթէոս,
12) Յուդայ Իսկարիօտայի, որ իրան մատ-
նիչ եղաւ. սորանցով ամեն տեղ ման էր
գալիս, քարոզումէր, և զանազան հրաշք-
ներ էր գործում. կոյրերի աչքերն էր լու-
սաւորում, խուլներն էր լսեցնում, հի-

ւանդներին էր բժշկում, և մեռելներին էր կենդանացնում, և ուրիշ շատ բաներ և սքանչելի գործեր էր գործում, որ ամենքն զարմանումին. իսկ քահանայապետները, դպիրները, և փարիսեցիները, նախանձվումէին նորա արած գործերի վերայ, և ամեն տեղ նորա համար թշնամական խօսքեր էին խօսում:

ԳՊՊ ԷԳՎ.

Միանգամ Գալիլիացւոց Աննայ քաղաքումը հարսանիք կար, կանչուեցաւ Յիսուսը իւր աշակերտներէ հետ, և նորա մայրն էլ այն տեղ էր. հարսանիքի զինին երբ որ պակասեցաւ՝ Մարիամը յայտնեց Յիսուսին. իսկ Յիսուս թէպէտ առաջ անհոգութիւն ցոյց տուաւ՝ բայց յետոյ հրամայեց ծառաներին՝ որ ամանները ջրով լեցնեն. երբ որ կատարեցին, ջուրը գինի փոխուեցաւ, յետոյ հրամայեց՝ որ տանեն հարսանիքի վերակացուին տան, նա

երբ որ խմեց՝ զարմացաւ զինու քաղցրութեան վերայ, բայց չէր զիտում թէ որտեղից է. մի միայն ծառաները զիտէին. այս առաջին հրաշքն էր՝ որ գործեց, և աշակերտները հաւատացին նորան:

ԳՊՊ ԷԳՎ.

Յիսուս ամեն ժամանակ ցերեկներ քաղոզումէր ժողովորոց, իսկ զիշերները՝ ելնումէր սարը աղօթելու. միանգամ էլ ինքը աշակերտների հետ նաւով գնաց անտպատ, ժողովուրդն էլ ցամաքով հետը գնացին. Յիսուս նաւի մէջը նստած՝ քաղոզումէր նոցա. երբ որ իրիկուն եղաւ՝ աշակերտները խնդրեցին Յիսուսից՝ որ արձակէ ժողովորոց, գնան իրանց համար հաց ձարեն. բայց Յիսուս հրամայեց որ՝ ժողովորոց կարգ կարգ նստեցնեն. և յետոյ հինգ հաց և երկու ձուկն կար, առաւ օրհնեց՝ և հրամայեց որ բաժնեն ժողովորոց. կերան ամենքը՝ և կշտացան և

հինգ զամբիւղ էլ աւելացաւ կերողներին
ցը. կնիկներից և մանուկներից ի զատ՝
հինգ հազար հոգի կային:

Դաս ԷԵ.

Յիսուս իւր Աստուածային փառքը մի-
անգամ էլ յայտնեց. վեր առաւ իւր հե-
տը Պետրոս, Յակովբոս, և Յովհաննէս
առաքեալներն, զնաց Թափօրական սարի
դուխը. յանկարծ նորա դէմքը արեւի նը-
ման պայծառացաւ, և հանդերձները՝ ձիւ-
նի նման սպիտակացան, երեւեցան նորա
մօտը՝ Մովսէսը և Եղիան, որոնք խօսու-
մէին իրան հետը. աշակերաները երբ որ
տեսան՝ զարհուրեցան, և ընկան երեսնե-
րի վրայ, իսկ Պետրոսը խնդրեց՝ երեք վը-
րան պատրաստել, և չէր զիտում թէ
ինչ էր խօսում. յետոյ երկնից մի ձայն լըս-
վեցաւ թէ «Դաս է իմ սիրելի որդին, դո-
րան լսեցէք, այս ձայնից յետոյ՝ տեսա-
րանը անյայտ եղաւ, և Յիսուս պատուի-

րեց աշակերաներին՝ որ ոչ որի չըպատմեն
այս տեսիլքը՝ մինչև որ ինքը մեռելներից
յարութիւն առնէ:

Դաս ԷԶ.

Յիսուս միշտ նկարագրական առակնե-
րով էր խօսում, և քարոզում ժողովըր-
դոց, առակներով էր յանդիմանում Փա-
րիսեցիներին, առակներով զլսատացնում
մոլի մարդիկներին, առակներով էր հաս-
կացնում արքայութեան աւելուութիւնը,
և առակներով էր համոզում շատերին ա-
ռաքինութեան շաւղովը ընթանալը, միշտ
աշխարհիս ունայն փառքերը պախարա-
կումէր, կամաւոր աղքատութիւնը գո-
վումէր, ընկերների ողորմութիւն տալ՝ կա-
րեկցութիւն անել՝ մեծ առաքինութիւն
էր համարում, խոնարհութիւն, ներո-
ղութիւն, համբերութիւն, և հեղութիւն՝
առաքինութեան սկզբունքներ էր նորա հա-
մար:

Գ... և Է.

Յիսուս իւր աշակերտներէ հետ մի օրը երբ նստած էին տաճարի դէմը՝ զարմանում էին աշակերտները տաճարի շինուածքի վերայ. Յիսուս այն ժամանակ սկսեց գուշակել գալու նեղութեանց վերայ, գուշակեց որ Արուսազէմը քարուքանդ պէտք է լինի՝ և ազգերի կոխան, ազգի վերայ թագաւոր թագաւորի վերայ պէտք է դուրս գան, և պատերազմեն իրարի հետը, և զանազան տեղ սով և սրբածութիւն պիտի լինին, և յետոյ պէտք է գայ աշխարհին վերջը. այնուհետեւ երկընքի աստղերը պէտք է թափին. Արեգակը և Առաքիլը պէտք է խաւարին. և աշխարհը տակնուվրայ պէտք է դառնայ:

Գ... և Ը.

Գուշակեց յետոյ իրան համար Յիսուս թէ, հրեշտակներէ բազմութիւնով որդի

մտորոյ պէտք է գայ, հրեշտակի փոզի ձայնով գերեզմաններից դուրս եկողները հրաւիրելու են դատաստանի. որոնք որ արդար են՝ աջ կողմը պէտք է կանգնեն, իսկ մեղաւորները՝ ձախ կողմը. արդարներին սիրով և քաղցրութեամբ կ'հրաւիրէ իւր արքայութեան փառաց միջը մըշանջենական երջանկութիւն վայելելու. իսկ մեղաւորներին՝ սաստիկ բարկութեամբ կը մերժէ՝ և կը յանդիմանէ, և յետոյ կուղարկէ դժոխոց սարսափելի տանջանաց մէջը չարչարվելու՝ մինչև ցյաւիտեան:

Գ... և Թ.

Յիսուս Յորդանան գետի կողմերը զըտնուած ժամանակը՝ իւր բարեկամ Գաղատոսը հիւանդ էր Ռեթանիայումը, յանկարծ Յիսուս ասաւ իւր աշակերտներին, թէ «պէտք է նրէաստան գնամ» որ մեր բարեկամ Գաղատոսին զարթնացնեմ,, յետոյ խնացան աշակերտները որ մեռած է

Պագարոսը: զնաց Յիսուս աշակերտներէ
հետը. Պագարոսի Մարթայ և Մարիամ
քոյրերն էլ եկան Յիսուսի դէմ, և լաց է-
ին լինում. յետոյ զնացին ի միասին դէպ
ի Պագարու գերեզմանը. հարցրուց Յի-
սուս թէ « ո՞ւր էք զբաժնորան, » և ինքն
էլ լաց ելաւ, և յետոյ հրամայեց որ գե-
րեզմանի քարը վեր առնեն, (որ չորս օր-
ւան վախճանած էր,) Յիսուս աչքը բարձ-
րացրուց դէպ ի վեր՝ և շօր Աստուծուց
խնդրելուց յետոյ՝ յանկարծ գոչեց « Պա-
գարէ՛ եկ դուրս, » իսկոյն մեռելը դուրս ե-
կաւ պատանքներովը, և հրամայեց Յի-
սուս բաց անեն և թողուն զնայ:

ՅՕԴՈՒՆԾ ՉՈՐԲՈՐԴ.

Յիսուսի անօրինական փրկա-
րար գործքերը:

Դաս 2.

Պատեքի տօնից հինգ օր յառաջ՝ Յի-
սուս կամեցաւ զնալ Արուսաղէմ. յու-

ղարկեց իւր աշակերտներից երկուսը՝ Բեթ-
փազէ գիւղը՝ այն տեղ կապուած էջը մօ-
տը կանգնած յաւանակն էլ բերել. աշա-
կերտները իրանց վերաբերուները զձեցին
վերան, Յիսուս նստաւ երբ որ Արուսա-
ղէմին մօտեցաւ, ժողովուրդը բազմու-
թեամբ դէմն ելաւ, ծերերը ձիթենի ձիւ-
ղեր, իւկ տղայքը՝ արմատենիներ բռնած՝
կերդէին, « օրհնութիւն որդւոյ Դաւթի,
օրհնեալ որ դաս յանուն Տեառն, » այս
բանիս վերայ կրնախանձին Փարիսեցիները.
Յիսուս այս կերպ փառաւորութիւ-
նով՝ մտաւ Արուսաղէմ, և զնաց տա-
ճարը, ուր կային կոյրեր, կազեր, և բը-
ժըշկեց ամենքին, նոյն օրից քահանայա-
պետները, դպիրները, և Փարիսեցիները
խորհուրդ արին՝ որ Յիսուսին սպանեն:

Դաս 2Ը.

Յիսուս պատեքի տօնի իրիկուն մի զար-
դարուած վերնատուն պատրաստել տը-

ւաւ. զատկական զառն ուտելից առաջ՝
կանգնեցաւ Յիսուս ծառայի նման օտի
վերայ, ղենջակ կապեց մէջքումբ, կո՛քի
մէջք ջուր լցրած՝ սկսեց աշակերտների
ոսները կարգաւ լուանալ, և ղենջակովք
սրբել. երբ որ կարգն եկաւ Պետրոսին՝
ուզումբ նա չբժողնել, բայց Յիսուս ա-
սաւ «ինձ հեա մասն չես ունենալ՝ եթէ
չբժողուս», յետոյ նորա օտներն էլ լը-
ւաց. լուանալից յետոյ՝ դարձեալ նրստե-
ցաւ սեղանի վերայ իւր սեղումբ, և հաս-
կացրուց նոցա՝ որ խոնարհութեան օրի-
նակ ցոյց տալ կամեցաւ, որ իրանք էլ ի-
րարի այնպէս անեն:

Գառ 2Բ.

Յիսուս յետոյ մի կերպով Յուդայի
մասնութիւնը յիշեց, որ միայն ինքը իմա-
ցաւ, բայց միւս աշակերտները չ'իմացան.
յետոյ հաց ուտելու ժամանակը՝ պատառը
թաթխեց տուաւ Յուդային, նա էլ երբ

որ պատառն տուաւ՝ դուրս ելաւ, և ղնաց
քահանայապետների տունը՝ որ այն գի-
շերը Յիսուսին մասնէ նոցա, (ինչպէս որ
խոստացել էր):

Գառ 2Գ.

Պերնատան մէջը՝ Յիսուս սկսեց իւր
աշակերտներին հետը սրտառուչ կերպով
խօսիլ, իբր թէ նոցանից բաժանուելու է,
և իրան մինակ թողած պէ՛տք է ամենքը
փախչին. Պետրոսը վտահ կերպով իւր
անձնանուիրութիւնը յայտնեց, բայց Յի-
սուս այն զիշերը՝ հաւ դեռ չըխօսած ե-
րեք անգամ ուրանալը՝ զուշակեց. յետոյ
հաց առաւ կոտորեց՝ և բաժանեց նոցա վե-
րայ, և ասաց «առէ՛ք՝ այս է իմ մարմինս»,
նոյնպէս և բաժակն առաւ՝ զոհացաւ
տուաւ նոցա և ասաց. «խմէ՛ք ամենքդ,
այս է արիւնս», և յետոյ պատուիրեց՝ որ
ամեն ժամանակ իւր մահուան յիշատակը
այս կերպով կատարին. այնուհետև զոհա-

ցան՝ սեղանից վերկացան գիշերով, և զընացին Ձիթենեաց սարը:

Դաս 24.

Յիսուս Ձիթենեաց սարից աշակերտներին հետը գնաց Պեթսեմանի պարտեզը. աշակերտներից միայն Պետրոսին՝ Ընդրեասին և Յովհաննէսին վեր առաւ գնաց պարտիզի մէջը, նոցա թողուց մի քարբնկէց սեղ՝ հեռացաւ, և աղօթումը շօր Աստուծոյ, որ եթէ հնար է՝ չարչարանաց բաժակն իրանից հեռացնէ. երեք անգամ աղօթեց՝ դարձեալ կոն խօսքը կրնից, և աշակերտներին էլ քնոյ մէջ ընկզմած էր տեսնում. վերջին անգամ երկնքից հրեշտակ իջաւ՝ և քաջաբերց նորան. յետոյ եկաւ աշակերտներին մօտը, տեսաւ այն կողմից, ահա գալիս են զօրքեր, քահանայապետների ծառաները, սուսերով և բրբերով՝ ջահեր վառած՝ Յուդան էլ նոցա առջևը, նա ինչպէս որ նշան տուած էր՝ Յիսուսին համբուրեց, և Յիսուսն էլ

պատասխանեց Յուդային «համբուրելով ես մասնում ինձ», յետոյ բռնեցին Յիսուսին՝ և տարան Ըննա քահանայապետի տունը. աշակերտները թողացին և փախան. միմիայն Պետրոսը նոցա ետևիցը զընումեր:

Դաս 25.

Ըննա քահանայապետ մի երկու բան հարցնելից յետոյ՝ յուղարկեց Պայտափայ քահանայապետի տունը, նա էլ քննեց տեսաւ՝ որ մի յանցանք չէ կարող դանել, բայց դարձեալ մինչև ի լուսաբացին՝ անխընայ կերպով չարչարել տուաւ. յետոյ յուղարկեց Պիղատոս զատաւորի մօտը. նա էլ բան չի կարողացաւ հաստատել Յիսուսի վերայ, ճարահատ եղած՝ յուղարկեց Հերովդէսի մօտը. նա էլ մի սպիտակ շօր վերան գձած՝ դարձեալ յուղարկեց Պիղատոսին. Պիղատոս շատ հնարքներ իգործ դրաւ նորան աղատելու, բայց

ից ժողովուրդը աւելի կատարելով՝ գո-
ռուակին Կի խաչ հան, ի խաչ հան պրտոյ,
Պիղատոսը ձեռները լուանալից յետոյ՝
խաչուելու վճիռը գրեց, և յանձնեց Յի-
սուսին շքեից ձեռքը, որ զինուորներով
առին և տարան դէպ ի Գողգոթայ:

Գառ 20.

Յիսուսը բազմութեան միջեցը խաչը
յուսին բարձած՝ գնումք. երբ որ տրկա-
բացաւ՝ Սիմոն Սիւրենադուն պահակ
բռնեցին՝ որ օգնէ. վերջապէս հանեցին
Գողգոթայ սարի զլուխը՝ և այն տեղ
խաչի վերայ բեւեռեցին. երկու աւազակ
էլ՝ մէկը աջ կողմումը և միւսը ձախ կող-
մումը խաչեցին Յիսուսի հետը. շատերը
նորան նախատուակին, և անարգումին,
մինչև անգամ ձախակողմեան աւազակը
վերաւորեց Յիսուսի սիրտը, բայց աջակող-
մեանը յանդիմանեց ընկերին, և Յիսու-
սին խնդրեց՝ որ յիշէ իրան իւր արքայու-

թեան միջը, յետոյ Յիսուս խոստացաւ նո-
րան դրախտը տանելու. Յիսուսի մայրն
էլ այն տեղ էր, որին յանձնեց Յովհաննէ-
սին մայր դառնալու. վերջապէս «Շնոր՝
քո ձեռքդ եմ աւանդում իմ հոգին», ա-
ղաղակեց՝ և հոգին աւանդեց. նոյն միջո-
ցին շատ երեկելի նշաններ պատահեցան.
վէմեր պատառեցան, տաճարի վարադոյ-
րը ձղոտվեցաւ, գերեզմաններ բացուե-
ցան, և շատ մեռելների մարմիններ յա-
րութիւն առին:

Գառ 21.

Յիսուս երբ որ Գողգոթայ սարի զը-
խումը հոգին աւանդեց՝ եկան աւազակ-
ների ծնկները ջարդեցին, բայց տեսան որ
Յիսուսի մարմինը մեռած էր, զինուորի
մինը իւր գեղարդովը խոցեց նրա կողը՝
որ իսկոյն արիւն և ջուր դուրս եկաւ. յե-
տոյ Արեմաթացի Յովսէփը Պիղատոսից
հրաման առաւ՝ եկաւ Նիկողիմոսի հետ

ի միասին՝ Յիսուսի մարմին խաչի վրայից
վեր առաւ, պատանեց անոյշ խնկով և
իւզով, տարաւ իւր պարտիզումը նոր
փորած գերեզմանի մէջը թաղեց, յետոյ
մի մեծ քար դրաւ վերան՝ և գնաց, ապս
քահանայապետի կնքովը կնքուեցաւ, որ
իր թէ աշակերտները չե՛ գան զիշերով
զօղանան, և անուն հանեն թէ՛ յարու-
թիւն տօաւ. և զինուորներին էլ պահա-
պան դրին գերեզմանի վերայ:

ՅՕԳՈՒՆԾ ՀԻՆԳԵՐՐՈՐԳ.

Յիսուսի Յարութիւնը, Համ-
բարձումը, և Հոգւոյն սրբոյ
դալուստը:

Գ. 2Բ.

Յիսուսի թաղման օրուայ շարաթ զի-
շերը՝ որ կիրակի կը լուսանար՝ յանկարծ
երկնքից մի հրեշտակ իջաւ, գերեզմանի

քարը մի կողմը թաւաղեցրուց՝ և Յիսուս
ինքնիշխան զօրութեամբ՝ գերեզմանից յա-
րութիւն տօաւ, իսկ պահպանները սար-
սափած վեր ընկան. մի քանի բարեպաշտ
կնանիքներ անուշահոտ իւղ և խունկ վեր
սոսած՝ գնացին գերեզմանը օծելու, ան-
սան գերեզմանի քարը վեր առած, և մի
լուսափայլ դէմքով՝ և սպիտակ շորերով
հրեշտակ նստած նոյն քարի վերայ, աւե-
տիս տուաւ կանանց «թէ Յիսուս յա-
րութիւն տօաւ», նորա ուրախութեամբ
գնացին. յետոյ Մաղգաղէնացի Մարիա-
մը եկաւ, գերեզմանին մտիկ տալու ժա-
մանակը՝ Յիսուսը պարտիզպանի կերպով
երևեցաւ նորան, և յետոյ ինքը զինքը
ճանաչեցրուց, և պատուիրեց՝ որ գնայ
իւր աշակերտներին իմաց տայ՝ թէ Գա-
լիլայի սարումը իրան կարող են տեսնել:

Գ. 2Թ.

Յիսուսի աշակերտներիցը՝ Պետրոս
և Յովհաննէս գնացին գերեզմանը. բայց

մէջը ոչ ինչ բան չե տեսան, մի միայն Յիսուսի պատանը տեսան, և երեսի վարչամակը ծալած մի կողմը դրուած, վասն որոյ և հաւատացին, թէ ուրեմն Յիսուս յարութիւն առած է. այնուհետև տասն և մէկ աշակերտները ի միասին գնացին Գալիլիայ ժամագրուած անգումը՝ Յիսուսին տեսան, և երկրպագութիւն արին նորան, բայց ոմանք երկմտեցան. յետոյ Յիսուս խօսեցաւ նոցա հետը՝ թէ « երկնքի և երկրի իշխանութիւնը արուեցաւ ինձ, ինչպէս որ իմ Հայրը ինձ յուղարկեց՝ նմանապէս և ես ձեզ կուղարկեմ, որ գնայք այսուհետև մկրտէք հեթանոսներին, ինչ որ ձեզ պատուիրած եմ՝ դուք էլ նոցա սովորեցրէք, և ահա ամեն օր մինչև աշխարհիս վերջը ես ձեզ հետ եմ », 2

Դաս Գ.

Յիսուս յարութիւն առնելից յետոյ՝ մի քանի անգամ իւր աշակերտներին ե-

րևեցաւ, ինչպէս մի օր՝ երբ վերնատան մէջ դռները փակած նստած էին՝ յանկարծ Յիսուս երևեցաւ նոցա, և ճաշեց նոցա հետը. բայց թո՛վմաս առաքեալ նոցա մէջը չէր. երբ որ եկաւ իմացաւ Յիսուսի երևնալը, « մինչև որ աչքովս չտեսնեամ չեմ հաւատալ », ասաց. Յիսուս դարձեալ դռները փակված յանկարծ երևեցաւ նոցա, և թո՛վմասին ասաց, որ գոյ ձեռաց բեռնների տեղիքը և խոցուած կողը տեսնայ՝ ապա հաւատայ, և չը լինի անհատա՛ ալ հաւատացեալ. թո՛վմաս շօշափեց՝ յետոյ գոռաց. « Տէր իմ և Աստուած իմ », յետոյ Յիսուս երանի տուաւ իրան շտեսած հաւատացողներին, և Հոգւոյն սրբոյ շնորհքը բաշխելով ամենին՝ ասաց՝ « Եթէ մէկին կապէք երկրիս վերայ՝ երկնքումը կապուած լինի. և եթէ արձակէք՝ նմանապէս և արձակուած լինի »

Պատմություն
-մայ 1881 թ. Գառ Գ. Ա.
քննած մ. արտոմ. արքայական արտոմ. արտոմ.

Յիսուս քառասուն օր քնաց աշխարհ
հիւ վերայ, այնուհետև վեր առաւ աշա-
կերաներին՝ ելաւ Չիթենեաց սարբ. մի
քանի պատուիրանքներ նոցա խօսելուց
յետոյ՝ ասաց որ դնան վերնատան մէջը
սպասեն՝ մինչև որ ինքն գնար սուրբ Հոգին
յուզարկէր. այնուհետև վտահ կերպով
դնան ամեն աշխարհ քարոզեն իւր աւե-
տարանք, այս խօսարու ժամանակը՝ վերա-
ցաւ երկինքը, և ամպերի մէջը աներեւոյթ
եղաւ. երբ որ աշակերտները ապշած եր-
կինքն էին մտիկ տալիս, ահա երկու հրեշ-
տակ երևեցան, և ասացին որ «նա գնաց
երկինքը՝ էլ տեսներու չեն կարող, հասպ
դնան Արուսաղէմ վերնատան մէջը սպա-
սեն Հոգւոյն սրբոյ գալստեանը, յ. յետոյ
վեր եկան նոքա սարիցը՝ և դնացին վեր-
նատան մէջը սպասելու:

Պատմություն
-մայ 1881 թ. Գառ Գ. Ա.
քննած մ. արտոմ. արքայական արտոմ. արտոմ.

Տան և մէկ աշակերտները Յիսուսի մօտ
հետը ելբ որ վերնատան մէջը տան օրի
չափ սպասումէին՝ Պենակոստէի օրումը
յանկարծ մի սաստիկ քամի փչեց վերնա-
տան մէջը, և ամենի զլսի վերայ երևու-
մին հրեղէն լեզուներ, և ամենքը Հոգւոյն
սրբոյ շնորհքով լցուած՝ սկսեցին այլևայլ
լեզուներով խօսել. այն ժամանակ Պեն-
ակոստէի ասնի պատճառաւ՝ դանազան
տեղերից եկած էին Արուսաղէմ. այս հը-
րաչքը երբ որ ամենքը տեսան՝ կը գար-
մանային, և տեսակ տեսակ կործիքներ
կը խօսէին. բայց Պետրոս երկար ատենա-
բանութեամբ ամենի կարծիքն ուղղեց:
Առաքեալները այնուհետև սկսեցին ամեն
աշխարհն էլ Յիսուսի սուրբ աւետարանը
համարձակ քարոզել, եկեղեցիներ հաստա-
տել, և արժանաւոր եպիսկոպոսներ ձեռ-
նադրել, ու եկեղեցիների վերայ կարգել.

վերջապէս օր ըստ օրէ Քրիստոնէութիւնը
առարածուեցաւ ամեն աշխարհի մէջը՝ մին-
չև ցայսօր:



ԳՒՈՒԻ ԶՈՐՐՈՐԳ

ՀԱՄԱՌՕՏ ԱԶԳԱՅԻՆ ՊՈՏՄՈՒԹԻՒՆ.

ՅՕԴՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ.

Հայկազանց իշխանութիւնը:

Գ. Գ. Գ.

Մեր ազգի առաջին ղլխաւոր Նահապեան էր Հայկը, որ Նոյ նահապետի թոռան թոռն էր, և թորդամա որդին. սա աշտարակաշխութեան ժամանակը՝ գնացած էր Բաբելոն, նոյն շինութեան գործակից լինելու. յետոյ երբ որ գործը թերի մնաց, և աշտարակը քար և քանդ եղաւ՝ և մարդիկներ ցրուեցան յաշխարհէ յաշխարհ, Հայկն էլ Բելիցն ապստամբելով՝ երեք հարիւր կարիչ մարդիկ-

ներ հեան առած՝ եկաւ Արարատայ
կողմերը, շինու թիւններ շինեց՝ յանձնեց
իւր Աագմնս թոռան, և ինքն եկաւ շարք
գաւառը, շինու թիւններ շինեց, և այն
տեղ բնակուեցաւ իր ընտանիքներովը. և
նոյն աշխարհին ատուեցաւ շայաստան, և
նորա սերունդին՝ շայ կամ շայկական
ազգ. ուրեմն մեր ազգը նորա սերունդիցն
առաջ եկած է:

Պատմ. Գ. Գ.

Ասորոց թագաւոր Բէլը երբ որ լսեց
շայկայ դնայը, պատգամաւոր յուզար-
կեց՝ որ գայ իրան հնազանդի, և իրան
երկրունը բնակուի. բայց շայկը՝ խիստ
պատասխաններ յուզարկեց. որոյ պատ-
ճառաւ՝ կատաղեցաւ Բէլը, զօրք հաւա-
քեց Արարատայ կողմիցը, և եկաւ շայ-
կայ դէմ պատերազմի: Աագմնս երբ որ
իմացաւ՝ պատգամաւոր յուզարկեց շայ-
կայ՝ և Բէլայ գալուստը նորան իմացրուց,

և ինքն էլ աճապարեց դնայ շայկայ մե-
տը. այն ժամանակը՝ շայկ իրեք հարիւր
զօրքը՝ երեք գունդի բաժնեց, առաջին
գունդը՝ ինքն վեր առաւ, երկրորդը՝ ար-
ւաւ իւր Արմնակ որդւոյն, և երրորդը՝
Աագմնսին, չուեց դնաց Անայ ծովակի
հիւսիսային արևելեան կողմը, մի ընդար-
ձակ դաշտի մէջը, ուր եղաւ աշխարհիս
առաջին պատերազմ, և առաջին յաղ-
թանակողը մեր շայկ Ահհայկուոր:

Պատմ. Գ. Ե.

Բէլը՝ իւր զօրաց բանակը թողուց սա-
բի միւս կողմը, միայն մի քանի զօրք վեր
առած՝ եկաւ շայկայ բանակը լրտեսելու,
իսկ շայկ պատրաստ էր իւր զօրքերովը.
Բէլն երբ որ տեսաւ՝ զարհուրած ուզում
էր փախչել, այն ժամանակը՝ շայկը այս
բանս նկատելով՝ լարեց իւր լայնալիճ ա-
ղեղը, և երեք թեւեան նեւոր զիպեցրուց
Բէլայ կուրծքին. իսկոյն գեախնը տապա-

լեց, և նորա զօրքերը աճապարեցին փախ-
չել. իսկ Հայկայ զօրքերն՝ նոցա ետև ից
զնալով՝ ոմանց կոտորեցին, և ոմանց
փախցրին. և Հայկը Բեկայ մարմինը զմրո-
սել տալով՝ տարաւ մի բարձր սարի զը-
խին թաղեց. ուստի պատերազմի տեղին՝
ասուեցաւ Հայոց-Չոր, իսկ Բեկայ ընկած
տեղին՝ Գերեզմանք: Հայկը պաշտօնին
պատերազմի աւարներէից բաւական բաժին
տալից յետոյ՝ յուզարկեց իրան տեղը, և
ինքն զնաց բնակուեցաւ Հարք գաւառը:

ԳՊՊ Գ.Օ.

Հայկ բաւական ժամանակ ազգը կա-
ռավարելից յետոյ՝ մեռաւ. և իրան տե-
ղը՝ յաջորդեց իրան Արմենակ որդին, որ
նա էլ իւր Խոռ և Մանաւազ եղբայրնե-
րին թողնելով Հարք գաւառուսը՝ ինքն
զնաց Արարատայ կողմերը շինութիւններ
շինեց, և այն տեղը բնակեցաւ, և այն տե-
ղի ամենից բարձր սարին՝ անուանեց Ա-

րոգած. Արմենակ բաւական ժամանակ
ազգը կառավարելից յետոյ՝ մեռաւ. և իւր
տեղը յաջորդեց իւր Արմայիս որդին. Ար-
մայիս մի քաղաք շինեց՝ անուն դրաւ Ար-
մաւիր. նորա մի որդին Շարայ անուն՝
շատակեր լինելու համար՝ յուզարկեց
Շիրակայ արգասաբեր գաւառը: Արմայիս
ազգը խաղաղութեամբ կառավարելից յե-
տոյ՝ մեռաւ, և իւր որդի Ամասիան յա-
ջորդեց իրան տեղը:

ԳՊՊ Գ.Ե.

Ամասիայ երեք որդի ունեցաւ, Գե-
ղամ, Յոլակ, և Փառոխ, սոքա երբ որ չա-
փահաս դառան, վեր առաւ նոցա տարաւ
հարաւային կողմը, իրարից մի օրվան հե-
ռաւորութեամբ՝ երկու քաղաք շինեց նո-
ցա համար, որոյ մէկին Փառախոտ, և միւ-
սին Յոլակերտ անուանեց, իսկ նոյն բար-
ձր սարին՝ իւր անունով Մասիս անուա-
նեց, և ինքն դառնալով Արմաւիր՝ մե-

առ խաղաղութեամբ, և իւր տեղը յաջորդեց իւր որդի Գեղամը, սա էլ իւր Հարմայ որդւոյն թողնելով Արմաւուրմն՝ ինքն գնաց արևելեան հիւսիսային կողմերը, մի լճի եզերք շինու թիւնն եր շինեց, և տեղին՝ իւր անունովը Գեղաբքունի անուանեց, և ծովին՝ ծով Գեղամայ, սա ունեցաւ Սիսակ անուն մի որդի, որին տրւաւ Գեղամ բաւական երկիրներ, նորա անուամբ Սիւնիք ասուեցաւ այն կողմերին, որմից և ծագեցաւ Սիւնեաց նախաբարութիւնը:

Գ. Գ. Գ.

Հարմայ՝ որ Արմաւիր քաղաքումը իւր հօր տեղը ազգը կառավարումը, իւր կենդանութեան ժամանակին՝ իշխանութիւնը յանձնեց իւր Արամ որդւոյն, և ինքը մեռաւ. Արամն էր քաջ և հայրենասէր նահապետներից մէկը, մինչև անգամ օտար ազգերը նորա անունով մեր ազգին

Արամեան կամ Արմէնի կանուանէին. սա տեսաւ որ օտար թշնամիները չորս կողմից տիրած են Հայաստանին, յիտուն հազար զօրք ժողովեց, և գնաց նախ՝ Սիւքեար Մարաց իշխանի վերայ, նորա զօրքերին կոտորեց, և իրան բռնեց բերաւ Արմաւիր, բերդի աշտարակի ծայրումը՝ ճակատիցը մխեց, որ ամենքն տեսնան. բայց Սիւնոս Բարեբազուց թագաւորի հետը մի կերպով հաշտութիւն խօսեցաւ, յետոյ իւր սուրը դարձրուց Ստորոց Բարշամ իշխանի վերայ, (որ Հայաստանի մի մասին տիրում էր անիրաւաբար,) նորա զօրքերը կոտորեց՝ և իրան էլ սպանեց, յաղթեց նմանապէս Ապագողովկից Պայապիս իշխանին, և այն կողմի ազգերին հրամայեց՝ որ Հայերէն խօսին. և ինքը շատ տարիներով ազգը կառավարելից յետոյ՝ մեռաւ, և տեղը յաջորդեց իւր Արայ որդին:

Դաս Գ Թ.

Արայն՝ որ գեղեցիկ էր տեսքով, սկսեց
 Հայաստանը խաղաղութեամբ կառավա-
 րել. բայց Շամիրամ Ասորուց թագու-
 չին՝ պատգամաւոր յուզարկեց՝ որ գայ
 իրան հետ ամուսնանայ, և իրան երկրին
 էլ տիրէ, բայց Արայն՝ մերժեց նորա ա-
 ռաջարկութիւնը. որոյ պատճառաւ՝ Շա-
 միրամ զօրք ժողովեց՝ և եկաւ Արայի վե-
 րայ, և յաղթեց նորան. և սպանեցաւ Ա-
 րայն պատերազմի մէջը. այս պատճառաւ՝
 Հայոց զօրքը երբ որ կատարեցան՝ Շա-
 միրամն Արայի դին մի բարձր բլուրի վե-
 րայ դրաւ, և ասաց որ իմ աստուածներս
 նորա մարմինը լիզելով կը կենդանացնեն.
 յետոյ երբ որ հոտեցաւ՝ գձել տուաւ մի
 փոսի մէջը և Արայի նման մի մարդ ցոյց
 տուաւ նոցա՝ որ հանդարտեցան Հայոց
 զօրքերը. որոյ պատճառաւ կապաշտու-
 թիւն մտաւ Հայոց մէջը, և այն դաշախն՝

ուր որ պատերազմ եղաւ՝ Արարատ ա-
 սուեցաւ. իսկ Շամիրամ՝ գնալով հիւսի-
 սային կողմը՝ մի ծովակի եզերք, հաւնե-
 րով տեղւոյն և օգին՝ և ջրերին, մի գեղե-
 ցիկ քաղաք շինել տուաւ՝ և անուանեց
 Շամիրամակերտ, և նոյն քաղաքն արաւ
 իրան ամարանոց. իսկ Արային տեղը՝ յա-
 ջորդեց իւր Կարգոս օրդին:

Դաս Դ.

Կարգոս՝ որ Շամիրամի ձեռնով իշ-
 խան դրուած էր Հայոց, Շամիրամի հետ
 միանալով՝ գնաց Օրադաշտ մոտ Կարաց
 իշխանի դէմ, պատերազմի մէջը՝ Շամի-
 րամի հետ սպանուեցան. և իրան տեղն
 յաջորդեց իւր Անուշաւան օրդին. սորա-
 նից յետոյ՝ յաջորդեցին հետ զհետէ շատ
 իշխանութիւններ. այս յաջորդողներից
 էր Օարմայրը՝ որ Տրովագայի պատե-
 րազմումը քաջ Աքիւլէսից սպանուե-
 ցաւ. Սկայորուոյ ժամանակն էլ՝ Ասորես-

տանի Սենեքերիմ թագաւորի որդիք Ադ-
րամելէք և Սանասար՝ փախան եկան
Հայաստան. Սկայորդին շատ սիրով ըն-
դունեց նոցա, և յատուկ տեղ տուաւ
նոցա, որոնցից ծագեցան Արծրունեաց,
և Գնունեաց նախարարութիւնը:

Դաս ԸՆ.

Աիաքսար Մարաց թագաւորը՝ Ասոր-
ւոց Սարգանբաղ թագաւորին հետը
պատերազմ ունենալով՝ մեր Հայոց ընկա-
յորդի՝ Նահապետի զուակ Պարոյր նա-
հապետին պատգամաւոր յուղարկելով՝
հրաւիրեց որ գայ իրան հետը՝ գնան Սար-
գանբաղի վերայ պատերազմ, երբ որ
յաղթեն՝ իրան թագաւորական թագ
պարգևէ՝ և թագաւորեցնէ Հայաստանի
վերայ, նա էլ վեր առաւ իւր զօրքը՝ գը-
նաց, վերջապէս յաղթեցին, որոյ պատ-
ճառաւ՝ Աիաքսար Պարոյրին թագով պը-
սակեց, և փարաւորութեամբ յուղարկեց

Հայաստան՝ թագաւորական Աթոռնստե-
լու. Պարոյր մեռնելից յետոյ՝ յաջորդեց
իրան որդին՝ Հրաչեան, որ կրակի նման
աչք ունենալուն համար՝ Հրաչեայ ասուե-
ցաւ. սորա իշխանութեան ժամանակը՝
Նարուզողոնոսոր թագաւորը՝ Նրուսա-
ղէմի Հրէաներին երբ որ Քարիլոն գերի էր
տանում, նորանից խնդրեց մի Շամբաթ
անունով Հրեայ, և պատուաւոր կերպով
բնակեցրուց Հայաստանի հիւսիսային կող-
մերումը. որից ծագեցաւ Քազրատունեաց
նախարարութիւնը:

Դաս ԸԲ.

Հրաչեայից յետոյ՝ մի քանի թագա-
ւորներ յաջորդեցին մինչև ի Տիզբան.
սա էր Նրուսանդի որդին, որ շատ խե-
լացի թագաւոր եղաւ Հայաստանի հա-
մար. զի Հայաստանի մէջը՝ զանազան կար-
գեր դրաւ, գրէթէ բոլորովին կերպարա-
նափոխ արաւ Հայաստանը. իւր համբաւը

աւելի հռչակեցաւ Աժգահակ Մարտոյ
 Թագաւորին սպանելովը. Աժգահակն ի-
 մանալով՝ որ Տիգրանը Ախրոս Պարսից
 Թագաւորի հետը դաշնակից է՝ շատ եր-
 կիւզ կրեց. որոյ պատճառաւ սարսափելի
 երազ տեսաւ. նոյն երազի մեկնութեամբ
 իմացաւ՝ որ Տիգրանը մի օր իրան կրսագա-
 նէ. ուստի խորամանկութեամբ յուզար-
 կեց Տիգրանի քոյր Տիգրանուհոյն բերել
 տուաւ, և արաւ իրան գլխաւոր Թագու-
 հի, և յետոյ՝ իրան չար միտքը Տիգրա-
 նուհոյն յայանեց, և խնդրեց նորանից
 գործակցութիւն. բայց նա երեսաց հա-
 ւանութիւն տուաւ, և զազանի կերպով
 իմացրուց Տիգրանին:

Պատճառ՝ ԸՊ.

Տիգրան Թագաւորը երբ որ լսեց Աժ-
 գահակայ խորամանկութիւնը, բաւական
 զօրք հաւաքեց՝ զնաց նորա զօրաց դէմը,
 և պատերազմի եռանդուն ժամանակը՝ Տիգ-

րանը ուղղակի կերպով իւր տէգը խրեց
 Աժգահակի սրտի մէջը, և դուրս քաշուելու
 ժամանակը՝ Թոքի կէսն էլ հետքերաւ, ո-
 ղով և հողին փչեց Աժգահակը, և նորա
 զօրքերը ցիրուցան սկսեցին փախչել.
 Բայց Հայոց քաջ զօրքերը՝ շատերին կո-
 տորեցին, և Տիգրանը իւր հաւատարիմ
 Տիգրանուհի քրոջը պարգևեց իւր շե-
 նել տուած Տիգրանակերտ քաղաքը, փո-
 խանակ նորա անձնանուէր ծառայութեա-
 նը, որ գնայ իւր մարդիկներովը այն տե-
 զը բնակվի:

Պատճառ՝ ԸՊ.

Տիգրան բաւական ժամանակ Հայաս-
 անը կառավարելից յետոյ՝ մեռաւ, և
 իւր Աշահազն որդին յաջորդեց. սա էլ
 բաւական քաջութիւններ գործեց, որ
 մինչև անգամ Հայերը նորան կուռքերի
 կարդն սնեցիտցրին, և Ալքաստանի կող-
 մերը նորա անունովը արձան շինեցին և

պաշտուակին, և երգեր յօրինած նորա վերայով երգուակին Պողոթան երգիչները. Վահագնից յետոյ՝ որդւոց որդի իշխեցին մինչև ի Վան. սա Շամիրամակերտ քաղաքը նորոգելով՝ իւր անունովը Վան անուանեց. սորանից յետոյ յաջորդեց Վահէն, որ Աղէքսանդր Մակեդոնացու հետը պատերազմելով՝ մեռաւ և վերջացաւ Հայկազանց իշխանութիւնը կամ թագաւորութիւնը:

Գ. Ը. Ե.

Աղէքսանդր Մակեդոնացին երբ որ Հայաստանին տիրեց՝ իրան կողմից Միհրան անունով մի Առասակալ դրաւ. որուն յաջորդեցին հետ զհետէ քանի ինչ Մակեդոնացի իշխաններ, որոնք բաւական ժամանակ կառավարում էին Հայաստանը. և այնուհետև Արտաշէս վերջէ իշխանի ժամանակները՝ Պարթևները Հայաստանին տիրեցին, և հաստատեցին Արշա-

կունեաց թագաւորութիւնը, որ բաւական տարիներ տևեց. մի քանի թագաւորներ կռապաշտութեան մէջ թագաւորեցին, իսկ Վրիստոնէութեան լոյսը երբ որ տարածվեց աշխարհիս վերայ, այնուհետև Վրիստոնեայ թագաւորներ կ'իշխէին Վրիստոնեայ դարձած Հայոց ազգին:

ՅՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

Արշակունեաց իշխանութիւնը:

Գ. Ը. Զ.

Երբ որ Հայաստան կառավարվում էր Սելևկիացւոց կամ Մակեդոնացւոց իշխանների ձեռնովը, մի և նոյն ժամանակը՝ Պարսկաստանումը թագաւորումէր Պարթևաց ազգէն Արշակ թագաւորը. սա զօրքերը տալով իւր եղբայր Վաղարշակին՝ թագաւորական իշխանութեան հասցնելով՝ յուղարկեց Հայաստան, որ գնաց

տիրէ Հայաստանին. Ազգարչակ երբ որ
 եկաւ Հայաստան՝ հալածեց այն անդից
 Եկեղեցացւոց իշխանը՝ և ինքը թագաւո-
 րեց Հայաստանի վերայ. բայց նախ՝ կա-
 մեցաւ իմանալ Հայոց ազգի առաջուան
 Վահագնները՝ և նոցա պատմութիւն-
 ները. և այս բանիս համար՝ մի Մարի-
 բաս Վատինայ անուան Մտորի (որ շատ զը-
 րագէտ և թեզուտ գէտ էր) յուզարկեց մի
 յանձնարարական գրով՝ իւր եղբայր Ար-
 շակ թագաւորի մօտը. նա էլ ցոյց տուաւ
 Վինսուէի Վրաստուէնը, այն տեղու՛մը գտաւ
 Մարիբաս մի երեւելի պատմութեան գիրք,
 որոյ միջեց քաղեց Հայոց նախնեաց պատ-
 մութիւնը, բերաւ Ազգարչակայ, որ նա
 էլ զբաւ հրան գանձարանու՛մը. մեր Մով-
 սէս Խորենացի քերթողն էլ՝ նոյն գրքից
 թարգմանեց մեր ազգի հարազատ և ճիշտ
 պատմութիւնը:

ԳԻՆՆԻՆ

Ազգարչակ սկսեց Հայաստանը բարե-
 կարգել. նախ՝ հաստատեց նախարարնե-
 ըի կարգերը. երկրորդ՝ իւր արքունեաց
 մէջ հաստատեց կարգեր և կանոններ. եր-
 րորդ՝ Հայաստանի ամեն կողմերու՛մը կար-
 գեց կուսակալներ. չորրորդ՝ զօրաց մէջը
 հաստատեց աստիճաններ և զանազան
 պաշտօններ, և այս ամեն օգտակար կար-
 գեր հաստատելից և բուսական ժամանակ
 ազգը կառավարելից յետոյ՝ մեռաւ, և
 իւր տեղը յաջորդեց իւր Արշակ որդին.
 սա էլ իւր քաջութեամբ զնաց տիրեց
 Պոնտոսի երկիրներին, և այն տեղե ծովի
 մէջը՝ մի կոթող անկեց, և իւր քաջու-
 թեան նշանը ցոյց տալու համար՝ օձի
 թուևով մխած նիւզակը՝ պինտ կերպով
 մխեց նոյն կոթողին, որով և սարսափ զը-
 ձեց այն կողմերի բնակչաց սրտերու՛մը. սա
 էլ մեռաւ, իւր տեղը յաջորդեց իւր Ար-
 տաշէս որդին:

Դ... Ն'Բ.

Արտաշէս երբ որ թագաւորական ասթոռը նստաւ՝ սկսեց իւր քաջութիւնները ի գործ գնել. Հայոց թագաւորութիւնը՝ որ երկրորդ կը համարուէր Պարսից թագաւորութեան, Արտաշէս իւր քաջութեամբը Արշական թագաւորի ձեռնից յափշտակեց. իսկ իւր Տիգրան որդին՝ յանձնեց լաւ դաստիարակներին, որ ամեն բանի մէջը կրթեն, և իւր Արտաշամա ազջիկը տուաւ Վրաց բղեշն քաջ Միհրդատին, և Պոնտոս երկրին ազատ կուսակալ հաստատեց նորան. և այնուհետեւ անհամար զօրք հաւաքեց՝ գնաց որ բոլոր Աւրոպային տիրէ. արշաւեց մինչև Յունաստան, այն տեղի երևելի կուռքերը յուզարկեց Հայաստան. և երբ որ ուզումէր աւելի յառաջ գնալ՝ իւր զօրքի մէջը մի խռովութիւն մտաւ, և այն խռովութեան մէջը փախչելու ժամանակը՝ վար-

նուեցաւ մեռաւ, քսան և հինգ տարի զանազան յաղթութիւններով թագաւորելէց յետոյ, և իւր տեղը յաջորդեց Տիգրան երկրորդը:

Դ... Ն'Թ.

Տիգրանը իւր հօր տեղը յաջորդելից յետոյ՝ սկսեց իւր արիական քաջութիւնները ցոյց տալ բոլոր աշխարհի, իւր երեւելի յաղթութիւններովը, արևմտեան ազգերի մէջը սարսափ եր գծած. Ասորեստանի թագաւորութիւնը միացրուց Հայաստանի թագաւորութեան հետք. իւր հօր Յունաստանից բերած կուռքերը Հայաստանի ամեն մի քաղաքներին մէջը կը ռատուններ շինել տալով՝ տեղաւորեց, Պապադովկիան և բոլոր փոքր Ասիան միացնելով Պոնտոսի հետք՝ իւր քեռայր Միհրդատին փոխարքայութեան պատիւ տալով՝ յանձնեց նորան, քանիցս անգամ Հռովմայեցւոց հետ պատերազմեցաւ Մի-

Տրբատը, և յաղթեց Տիգրանայ շնորհիւ-
ւր, և նորա զօրաց օգնութեամբը, և իւր
քաջարտութեամբը, սա քսան երկու-
լեզուաց տեղեակ էր, որ առանց թարգմա-
նի եկող դեսպանների հետը խօսում էր.
Տիգրան շատ մեծամեծ յաղթութիւններ
անելից յետոյ՝ մեռաւ, և իւր տեղը յա-
ջորդեց իւր Արտաւազդ որդին. Միհր-
դատն էլ թշնամեաց ձեռքը չբմանալելու
համար՝ զենքը թռնաւորելով մեռաւ:

ԳԽԽ Ա՛Ժ.

Արտաւազդ երբ որ թագաւորեց շա-
յաստանի վերայ, իւր եղբայրները և քոյ-
րերը յուղարկեց Ալիովիտ, և նոցա ա-
ռանձին եկամուտ կապեց. նոյն ժամանա-
կումը՝ Հռովմայեցոց մեծ Անտոնիոս զօ-
րապետը զօրք հաւաքեց եկաւ շայաստա-
նի կողմից գնալ Պարսից դեմ պատե-
րագմ. Արտաւազդից խնդրեց՝ որ զօրք
տայ օգնութեան. նա թէպէտ բաւական

զօրք տուաւ, բայց յետոյ մի պատճառաւ
յետ կանչել տուաւ. յետոյ Անտոնիոս
գնաց իւր զօրքերով յաղթեց Պարսից՝
և եկաւ շայաստան, և Արտաւազդից վը-
րէժ առնելու համար՝ մի հնարքով նո-
րան ոսկի շղթայի կապած՝ տարաւ պա-
տերազմական աւարների հետ՝ պարզեց
Նզրիպոսի Աղէոպատրայ թագուհուն.
Նա էլ մի ժամանակից յետոյ՝ զլեատել
տուաւ նորան:

ԳԽԽ Ա՛ԺԱ.

Երբ որ Արտաւազդ բռնուեցաւ, շա-
յոց Նախարարները ընտրեցին շայաստա-
նի վերայ թագաւորի եղբօր որդին Արշա-
մին. սորա թագաւորութեան առաջի տա-
րին՝ Պարսից թագաւոր (որ միշտ օգնու-
թիւն էր անում շայոց՝ Հռովմայեցոց
դէմ,) մեռաւ, և իրան տեղը յաջորդեց
իւր դեռահասակ որդին, որից օգնու թիւն
էր յուսացուիլ. այս պատճառաւ Ար-

շամ Հոովմայեցւոց հարկ տալ խոստա-
նալով՝ հաշտութիւն խօսեցաւ, որով և
երկիրը խաղաղութեան մէջ պահելու կա-
րողացաւ. նոյն միջոցներումը Բազրատու-
նեաց Վախարար Ենանոսը Հիւրկանոս
քահանայապետը՝ որ բռնուած էր Հայաս-
տանումը՝ արձակեց՝ որ գնայ. երբ որ լը-
սեց Արշամը՝ բարկացաւ Ենանոսի վերայ՝
և բռնել տուաւ. բայց նա պատժից ա-
զատուելու համար՝ ասաց որ «Հիւրկա-
նոս հարիւր քանքար խոստացել է,» և
ժամանակ որոշեց բերել տալու. երբ որ
Հերովդէս սպանել էր Հիւրկանոսին՝ էլ
փողը չը կարողացաւ տալ. նորա համար՝
Արշամ Ենանոսին շատ նեղութիւն տա-
լով՝ դարձրուց կռապաշտ. մի ժամանա-
կեց յետոյ՝ Հերովդէսի հետն էլ թշնա-
մացաւ Արշամը, և բաւական ժամանակից
յետոյ մեռաւ, և յաջորդեց իւր Աբգար
որդին:

Գ. Կ. ԸՃԻՐ.

Աբգարի թագաւորութեան երրորդ տա-
րին՝ Հայերը բոլորովն հարկատու եղան
Հոովմայեցւոց. և Օգոստոս կայսր հրա-
մայեց որ աշխարհագիր անեն ամեն տեղի-
րը, և այս ժամանակներն էլ ծնաւ մեր
Յիսուս Փրկիչը Հրեաստանի մէջը: Աշ-
խարհագիր անողները եկան հասան Հա-
յաստան, և կայսեր պատկերն էլ բերին՝
որ գնեն մեհեանների մէջը. Հերովդէսն էլ
կամեցաւ որ իւր պատկերը կայսեր պատ-
կերի հետը գնեն մեհեանների մէջը՝ և
պաշտեն. բայց Աբգարը բոլորովն մերժեց,
որոյ պատճառաւ՝ Հերովդէս սկսեց թըշ-
նամութեամբ վարուել Աբգարի հետը:
Օգոստոս կայսր մեռաւ, և անգն յաջոր-
դեց Տիրերիսս. սորա որդեգիր Գերմանի-
կոսը՝ անպատիւ արած էր Աբգարի յե-
ղարկած զես զանններին, այս պատճառաւ՝
Աբգարը մտքումը զբաւ էր՝ որ Հաւրան

յեցւոց հարկ տալը զազարեցնէ, նորա համար՝ Եղեսիա քաղաքը նորոզեց՝ և Մծբին քաղաքից իւր աթոռը փոխադրեց այն տեղը, և արաւ թագաւորական քաղաք:

Դաս ԸՃԳ.

Թէպէտ Աբգարը մտքումը զրած էր կայսերից ապստամբել, բայց չը յաջողեցաւ, զի Պարսից Արշաւիր թագաւորը մեռնելով՝ նորա որդւոց մէջը յաջորդութեան համար խռովութիւն մտաւ. Աբգարը զօրք վեր առաւ՝ զնաց Պարսկաստան՝ խաղաղութիւն զձեց նոցա մէջը, և վերադարձաւ. այս բանիս վերայ՝ շերովդէս չարախօսութիւն արաւ կայսեր. բայց Աբգարը մարդ յուղարկեց շոուվմ՝ կայսեր առջևը իրան անմեղադիր կացուցանելու. զնացող պատգամաւորները շրէաստանի կողմից անց կենալով՝ Յիսուսի հրաշքներին ահանառես եղան: Աբգարը

Պարսկաստանից վերադարձած ժամանակը՝ բորոտուած էր, և ոչ մէկ բժիշկ չը կարողացաւ բժշկել. յետոյ շոուվմ գնացող պատգամաւորները Յիսուսի արած հրաշքները պատմեցին նորան, նա էլ մի մասնաւոր նամակով Անանէ անուն պատկերահասնի հետ մի երկու մարդ էլ յուղարկեց Երուսաղէմ Յիսուսին, որ զայ իրան բժշկէ. իսկ թէ չզարու լինի (ասաց)՝ «պատկերը նկարած բերէք ձեր հետը», նոքա էլ գնացին հասան Երուսաղէմ՝ Մաղկազարդի օրին:

Դաս ԸԺԳ.

Աբգար թագաւորի պատգամաւորները գնացին Յիսուսին դտան, (երբ որ Ովսաննայ երգով, փառաւորութեամբ Երուսաղէմ էր գնում) մատուցին նորա աշակերտներին Աբգարի նամակը, նոքա էլ տուին Յիսուսին. և Յիսուս կարդալեց յետոյ՝ պատասխանը յուղարկեց, թէ էն

ժամանակը չ'էր կարող գնալ. և խոստացաւ որ իրա համբառնալից յետոյ՝ իւր աշակերտների մէկը կուզարկէ՝ որ գայ իրան բժշկէ. Յիսուս ինչպէս որ խոստացել էր՝ իւր համբառնալից յետոյ՝ Թադէոս առաքեալը գնաց Ադեսիայ, Աբգարի բորտութիւնը բժշկից, և մկրտեց նորան՝ և սրաւ Վրիստոնեսայ. յետոյ Աբգարի ջանքովը և Թադէոսի քարոզութեամբը՝ քրիստոնէութիւնը ո՛չ թէ միայն Ադեսիոյ մէջը՝ այլև Հայաստանի մէջն էլ օրէ ցօր տարածվում էր, զի Թադէոսը իրան տեղ Ապիսկոպոս ձեռնադրեց Աբգարի գլխին խոյր կարող Ադգէին, և ինքն գնաց Սահապուրուկի մօտը՝ որ Վերին Հայաստանի կուսակալն էր, Աբգարն էլ Յիսուսին հաւատարու համար՝ յորդորանաց գրեթէ զբոլոր իւր ամեն ծանօթ թագաւորներին:

Գառ ճԺԵ.

Աբգարը քանի որ կենդանի էր՝ քրիստոնէութիւնը հաստատ էր, երբ որ մե-

ռաւ՝ և իւր տեղը յաջորդեց իւր Անանուէն որդին, սկսեց հետ գհետէ անհետանալ քրիստոնէութիւնը, զի Անանուէնը մեհեանների մէջը կուռքեր դնել տուաւ՝ և պաշտել էր տալիս Ժողովոգոց, և Ադգէին էլ նահատակել տուաւ՝ իրան դրլխին խոյր չքկարելուն համար. բայց ինքն էլ մի օրը սիւն էր կանգնել տալիս, երբ ոչ սիւնի ուղղութեան մտիկ էր տալիս, սիւնը ընկաւ վերան՝ մեռաւ: Սանատրուկն էլ Հայաստանի մէջը տարածեց դարձեալ կուսպաշտութիւնը, Թադէոս առաքեալն և իւր աղջիկ Սանգուխտին նահատակել տուաւ, յետոյ Ադեսիոյ էլ տիրեց, Աբգարի բոլոր որդւոց կոտորեց, միայն նորա Հեղինէ կնոջն ազատեց՝ որ զբնաց Արուսաղէմ. Սանատրուկը նորոգեց Սճրին քաղաքը, և վերջապէս ինքն էլ որսի գնալու ժամանակը՝ մի անյայտ նետով սպանուեցաւ:

Դաս ՆՃԹ.

Սանատրուկի մահից յետոյ՝ Հայոց նախարարները թագաւոր ընտրեցին մի Երուանդ անունով քաջ իշխան, որ մօր կողմիցը Արշակունի կը համարուէր. սա կոտորել տուաւ Սանատրուկի բոլոր զաւակներին, միայն Արտաշէսին իւր ըստնդուն փախցրուց Հեր գաւառը. հովիւների մօտը պահպանվում էր. յետոյ Սպեր գաւառի Սմբատ Բազրատունւոյն իմաց տրուաւ. նա էլ իւր ընտանիքը թողուց մի ամուր բերդի մէջ, գնաց գտաւ Արտաշէս մանուկին, հետը վեր առաւ գնաց Պարսից թագաւորի մօտը, որ սիրով ընդունեց, իրան դրաւ զօրապետներէ կարգումը, իսկ Արտաշէսին դրաւ իւր որդւոց հետը. օրէ ցօր կը մեծանար, բայց երբ որ իմացաւ Երուանդը՝ մարդ յուղարկեց Պարսից թագաւորին, թէ Մարի որդի է Արտաշէսը, և ոչ թէ Արշակունի. բայց թագաւորը մերժեց նորա ծուռ խորհուրդը:

Դաս ՆՃԻ.

Երուանդը իւր թագաւորութիւնը աւելի զօրացնելու համար՝ թագաւորանիստ քաղաքը փոխադրեց Արմաւիր հին թագաւորաց քաղաքը, և յետոյ՝ Արմաւրի արևմտեան կողմը շինեց Երուանդաշատ քաղաքը՝ և աթոռը փոխադրեց այն տեղը. շինեց և ուրիշ քաղաքներ և շինութիւններ. Երուանդ երբ որ այս կերպ շինութեան զբաղած էր՝ Սմբատ Բազրատունին Պարսկաստանում երևելի քաջութիւններ էր անում, մինչև որ Պարսից թագաւորը կամեցաւ վարձատրել նորա հաւասարիմ ծառայութեան փոխարէնը. երբ որ հարցրին ինչ բան կամենալը, նա իսկոյն կարգին բերելով՝ խնդրեց Արտաշէսի համար, որ թագաւորական իշխանութեամբ յուղարկէ Հայաստանը. նա էլ ընդունեց սիրով՝ և բաւական զօրք տրուաւ Սմբատին՝ որ Արտաշէսին վեր առաւ

զնաց Հայաստանը, Երուանդի դէմը քաջութեամբ պատերազմեցան, բոլոր նախարարներ Երտաշէսի կողմն անցկացան, յետոյ Երուանդի զօրքը յաղթուեցաւ, ինքն էլ իւր պալատումը երբ որ թաք կեցած էր, զօրքի մէկն սպանեց զնա:

Պատմ. ՆՃԻՆ.

Սմբատ Բագրատունին երբ որ յաղթութիւնները լրացրուց՝ զնաց դանձարանի մէջը գտաւ Սանատրուկի թագը՝ և բերաւ հանդիսով դրաւ Երտաշէսի զլուխը, և պսակեց թագաւոր Հայաստանի վերայ. Երտաշէսը երբ որ թագաւորական ատոռը նստաւ, նախ՝ Պարսից զօրքերին առատ պարգևներ տալով՝ յուղարկեց իւրանց երկիրը. յետոյ Երզամին փոխարքայութեան պատիւ տուաւ, (որ պատերազմումը իրան մեծ օգնութիւն արած էր). Սմբատին էլ շատ ընծաներ տալից ի զատ՝ պաշտօններ յանձնեց, և վերա-

տեսուչ հաստատեց թագաւորութեան և արքունեաց բոլոր գործակալներին վիւայ, նմանապէս և միւս երախտաւորներին էլ առանձին պարգևներ և պաշտօններ տուաւ, յետոյ սպանել տուաւ Երուանդի եղբայր Երուազին, և նորա ծառաներն ընծայեց Սմբատին. իսկ նորա ունեցած հարստութեան վերայ՝ ինքն էլ բաւական ընծաներ դրաւ՝ և յուղարկեց Պարսից Պարնհ թագաւորին, իբր նշան երախտագիտութեան:

Պատմ. ՆՃԻՆ.

Երտաշէսի թագաւորութեան ժամանակը՝ Ալանաց թագաւորը Աովկասու Լեոնականաց հետը միաբանելով՝ եկաւ Հայաստանը Երտաշէսի վերայ, յետոյ պատերազմի մէջը յաղթուեցան Ալանները, և անցկացան Աուր գետի միւս կողմը, որովհետեւ թագաւորի որդին դերի եկած էր. Ալանաց թագաւորը շատ պարգև-

խոստացաւ Արտաշէսին՝ որ յետ ուղարկէ, բայց Արտաշէս թագաւորը չը համոզուեցաւ. յետոյ Ալանաց թագաւորի Սաթենիկ աղջիկը գետի եզերքը գալով՝ Արտաշէսին քաղցր խօսքերով համոզեց թարգմանի միջոցաւ. նա էլ Սմբատին յուզարկեց թագաւորին՝ որ Սաթենիկն ուզեց Արտաշէսի համար կին դառնալու. նա էլ յօգարեցաւ, յետոյ արձակեց թագաւորի որդւոյն, և Սաթենիկան արաւ իրան թագուհի. և այս կերպով հաշտութիւն եղաւ Ալանաց հետը. Արտաշէսը իւր որդւոց երեւելի պաշաօններ յանձնեց, և ինքը մեռաւ՝ բայց շատ փառաւոր հանգիստով թաղուեցաւ:

Գ. Կ. ԸՒ.

Արտաշէս երբ որ մեռաւ՝ իրան տեղը յաջորդեց իւր որդի Արտաւազդ. սա թագաւորութեան մի քանի օրից յետոյ՝ երբ որ ձին հեծած գնում էր, մի խելագարու-

թիւն կամ ցնորք եկաւ վերան, սկսաւ այս կողմն այն կողմն վազել, մինչև որ ընկաւ մի խորխորատի մէջը՝ և կտրաւ. սորա վրայօք Գողթան երգիչներ մի զրոյց հանեցին, իբրը թէ շատ անձինք երբ որ հօր մահուան ժամանակը անձնազոհ եղան՝ Արտաւազդ այս բանս տեսնելով՝ ասաց. «Դու զընացիր՝ ամենին էլ հետդ ես տանում, ուրեմն ես աւերակների վերայ թագաւորեմ.», Արտաշէսն էլ իբր թէ անիծած է նորան, թէ «Դու Սասիս որսի զնալուդ ժամանակը՝ քաջերը քեզ կապեն՝ զնեն մի մութ բանտումը, որ բնաւ լոյս չտեսնաս,», Էն ժամանակուան պառաւներն էլ մի առասպել հնարեցին, իբր թէ երկու շուն շղթաները շարունակ կրծում են, որ ազատուի դայ աշխարհս քանդէ, որոյ պատճառաւ դարբինները շարաթը մի անգամ խփում էին սալին՝ որ Արտաւազդի շըրթաները պնդուին:

Գ. ԸՆԴՈՒՄ.

Արտաւազդից յետոյ՝ իրարի ետեից
 թագաւորեցին Տիրան, Տիգրան, Ալա-
 դարշ, որոնք յիշատակութեան արժանա-
 ւոր գործքեր չ'ունեցան. միայն Ալադարշ
 Ալարդգէսի շինած աւանը նորոգեց՝ և ա-
 նունը դրաւ Ալադարշապատ, և արաւ
 թագաւորանիստ քաղաք. Ալադարշից յե-
 տոյ՝ թագաւորեց նորա Խոսրով որդին.
 սորա թագաւորութեան ժամանակումը՝
 Պարսից պարթևական ցեղից Արտաւան
 թագաւորից ապստամբեցաւ Արտաշէր
 Սասանեան, և շատ նախարարներ իրան
 հետ միաբանած՝ Արտաւանի դէմ պա-
 տերազմելով՝ սպանեց, և թագաւորու-
 թեան աթոռը անիրաւութեամբ յափշ-
 տակեց, երբ որ լսեց Խոսրով թագաւորը,
 զօրք վեր առաւ գնաց Պարսկաստան՝ Ար-
 տաշէրին հաբածեց մինչև Հնդկաստանի
 սահմանները. Արտաշէր երբ որ մեծ հոգ-

սի մջ էր՝ խոստացաւ թէ ո՛վ որ Խոս-
 րովին սպաննէ՝ իրան թագաւորութեան
 երկրորդ կկարգէ նորան, այն ժամանակը
 Պարթևաց Սուրենեան ցեղից Անակ նա-
 խարար յանձն առաւ՝ որ նորան մի հը-
 նաբքով սպաննէ:

Գ. ԸՆԴՈՒՄ.

Անակ նախարարը վեր առաւ իւր որդի-
 քը, (երբ Արտաշէրից ապստամբուած) եկաւ
 Խոսրովի մօտը. նա էլ ընդունեց Անակին՝
 իբր Արենեան Պահլաւի ցեղից, նորան
 իւր նախարարաց կարգումը միշտ պա-
 վում էր. մի օր էլ որսի գնացած ժամա-
 նակը՝ յիշեց Անակ Արտաշէրի փուած
 խոսամունքը, յետոյ Խոսրովին մի առան-
 ձին տեղ տանելով՝ սպանեց, և ուզում
 էր փախչել. Հայոց նախարարներն ետե-
 ւից հասնելով՝ գնեցին նորան Արա-
 խի մջը և խեղդեցին. իսկ Խոսրովը դեռ
 հոգին չբփշած՝ վերջին ձայնով գոաց,

որ Անակի ցեղը սուրբից անցկացնեն. սորա համար՝ սկսեցին Անակայ ցեղը կոտորել. միմիայն նորա Սուրէն որդին, և մի փոքր մանուկ ազատուեցան. այս մանկան անունն էր Գրիգոր, իւր Սոփիայ անուն Վրիստոնեայ սանտուն փախցրուց տարաւ Աեսարիա, և ան տեղը Վրիստոնեական օրէնքով կրթում էր նորան, և սընուցանում էր մօր պէս:

Դաս Ը՛ԻԳ.

Խոսրովի մեռնելը երբ որ լսեց Արտաշէրը՝ անհամար զօրքով եկաւ Հայաստան. Հայոց նախարարներ երբ որ մի տեղեց չեկարողացան օգնութիւն գտնել, ցիրուցան եղան, Արտաշէր եկաւ Հայաստան ամայի գտաւ, և տիրեց մեծ մասին, Խոսրովի ազգը սկսեց ջնջել. միայն Խոսրովի որդի Տրդատին Արտաւազդ Մանդակունի նախարարը փախցրուց Հռովմա տարաւ, և Խոսրովի դուխտ անուն աղջկան

է՛ր Օտայ Ամատունին փախցրուց Թագաւորական զանձի հետը, և գնաց Ասի բերդի մէջը ամբացաւ. իսկ Գրիգոր Անակայ որդին, Աեսարիոյ մէջը ուսմունք էր սովորում, Յունաց դպրոցի մէջը Վրիստոնեական օրինօք զարգանում էր. երբ որ չափահաս դառաւ, Սոփիան նորան ամուսնացրուց Մարիամ անուն Կաւթի աղջկան հետը. որից ունեցաւ երկու որդի՝ Վրթանէս, և Արիստակէս. մի ժամանակից յետոյ՝ Մարիամ իւր Արիստակէս որդին վեր առաւ գնաց կուսանաց վանքը մտաւ, իսկ Վրթանէսը քնաց Սոփիայի մօտը. բայց Գրիգորը գնաց Հռովմա Տրդատայ մօտը, և ծառայութեան մտաւ, իրր իւր հօր սպանութեան հատուցումն:

Դաս Ը՛ԻԳ.

Տրդատ Հռովմայ մէջը օրէ ցօր զարգանում էր հասակով, և ունեցաւ չափա-

զանց քաջութիւն, որով և Վիկիանէս
անուն զօրապետի մօտը զարմանալի քաջ
գործքերով՝ բարի համբաւ ունեցաւ, յե-
տոյ Վիտղեախանոս կայսր նորան թագա-
ւորական պատուով և շառ զօրքով ու-
ղարկեց Հայաստան՝ որ զնայ իւր հօր ա-
թորը ժառանգէ. երաւ Տրդատը Հոռվ-
մից զօրաց բազմութեամբ, եկաւ Հայաս-
տանից հալածից Արտաշէի զօրքերը, և
ինքը տիրեց ընդհանուր Հայաստանին.
յետոյ Օտայ նախարարը թագաւորական
գանձը, և Խոսրովելուխտը վեր առաւ
Անի բերդեցը՝ բերաւ Տրդատայ մօտը.
նա էլ շատ պարզելներ տուաւ, և մծ
պաշտօնի վերայ զբաւ Օտային. իսկ Ար-
տաւազդին սպարապետութեան պաշտօն
յանձնեց. նմանա զէս և միւս երախտա-
ւորներին առանձին առանձին պաշտօններ
յանձնեց, և Հայաստանը խաղաղութեան
մէջ զբաւ:

Դաս Ա՛ԻԵ.

Տրդատ Հայաստանը խաղաղ վեճակի
մէջը զնեղեց յետոյ՝ նախարարների և զօ-
բաց զլեաւորների հետը զնայ Ահեղեաց
զաւառը Արիզայ զիւղը, ուր դրուած էր
Անահիտ անուն կուռքը, նորան պատիւ
և զոհ մատուցանելու հանդիսաւոր կեր-
պով. յետոյ հրամայեց Վրիգորին՝ (որ
իւր մօտը տակաւին ծառայում էր) զնայ
կանաչ ոստերից պսակ շինէ Անահայ
գլուխը զնե՛ և նորան երկրպագութիւն
անէ. բայց նա մերժելով Տրդատայ հրա-
մանը՝ յայտնեց որ ինքը միայն երկնքի և
երկրի ստեղծող Աստուծոյն երկրպագու-
թիւն կանէ և նորան միայն կրպաշտէ.
յետոյ Տրդատ բարկանալով՝ հրամայեց
որ սաստիկ տանջանքներ տան Ս. Վրիգո-
րին, բայց նա սաստիկ տանջանքի են-
թարկուած՝ համբերում էր, և ազօթք
էր անում Աստուծոյն. շատ չարչարանք-

ներ տալից յետոյ՝ երբ որ չըկատարեց իւր
հրամանը, և մանաւանդ իմացու որ իւր
հօր սպանող Անակայ որդին է՝ հրամա-
յից որ տանին Արտաշատ, և ձգեն Խոր—
Վ իրապի մէջը, ուր կային զանազան ան-
սակ թուռնալի զեռուռներ:

Գ. Խ. Ն. Գ.

Սուրբ Գրիգորը Խոր—Վ իրապի մէջ
գտնուած ժամանակը՝ Հռովմայ կողմից
քառասուն քրիստոնեայ կուսանք փա-
խան եկան Հայաստան, որոյ զլեաւորի
անուան էր Գայիանէ. և շատ գեղեցիկ
կուսի անուան էր Հռիփսիմէ. այս սուրբ
կուսին շատ չարչարեց Տրդատ՝ որ իրան
կին չէր ուզում դառնալ, յետոյ ամենին
էլ նահատակել տուաւ. միայն երկուսը
կարողացան ազատուիլ, որոց անուաներն
էին Նունի, և Մանի. այս բանիս վե-
րայ՝ Տրդատայ վերայ մի ցնորք եկաւ. մի
օր որսի գնալու ժամանակը՝ խողի կերպա-

բանք մտաւ, և գնաց խառնուեցաւ խո-
ղի մէջը. նոյնպէս և դիւահարեցան շատ
նախարարներ և երեւի իշխաններ. յե-
տոյ հրեշտակը երևնալով Խոսրովիդիս-
տոյն, և խնայուց, որ գնան Արտաշատ՝
Գրիգորին Խոր—Վ իրապից հանեն, որ
զայ ամենին էլ բժշկէ:

Գ. Խ. Ն. Ե.

Օտայ նախարարը գնաց մի քանի մար-
դով Արտաշատ, Խոր—Վ իրապից դուրս
հանեց Գրիգորին, ուր որ 15 տարի ան-
փնաս մնաց նոյն զեռնոց մէջը. առաւ Օ-
տայ նախարարը տարաւ սուրբ Գրիգորին
Վ աղարշապատ. ուր հաւաքուեցան նո-
րա ստի տակը դիւահարուած նախարար-
ները թագաւորի հետը, և խնդրումէին նո-
բանից բժշկուիլուն. սուրբ Գրիգոր ա-
տուիլից ամենին, որ հինգ օր ծոմ ւս չէր,
և ինքն աղօթում էր Աստուծոյ՝ որ Հա-
յաստանին ոչ թէ մարմնոյ միայն՝ այլ և

հոգւոյ առողջութիւն կամ լաւ ևս ասել
բժշկութիւն տայ. այնուհետև հարցրուց
իմացաւ սուրբ նահատակ Աուգանաց մար-
մինները հաւաքեց, իրանց շորերովը փա-
թաթելով՝ առանձին նշանաւոր տեղե-
քում թաղեց. յետոյ 60 օր սկսեց ամե-
նին քարոզել ցերեկները՝ Ճշմարիտ Աս-
տուածը, և սուրբ Աւետարանի վարդա-
պետութիւնները, իսկ գիշերները՝ աղօ-
թել առ Աստուած Հայաստանի լուսա-
ւորութեան համար:

Պատճառներ.

Սուրբ Գրիգոր լուսաւորիչն՝ Տրդատին
և նախարարներին մայնաւոր կերպով բը-
ժշկելից յետոյ՝ սուրբ կուսանաց մար-
մինների վերայ եկեղեցիներ շինել տուաւ,
Կապէս որ ձևերը տեսած էր երազումը.
Գործ կից էր յօժար սիրով և Տրդատ
թագաւորէ իւր գերդաստանովը, և բոլոր
նախարարներովը. յետոյ Տրդատի հետը

ման եկան Հայաստանի բոլոր կողմերը, և
սկսեցին բոլորովին կուսուռնները քան-
գել՝ կործանելով բոլոր կուռքերը. այ-
նուհետև Տրդատ թագաւորը քանի մի
նախարարների և շատ զօրքերի հետ սուրբ
Գրիգոր լուսաւորչին յուղարկեց Աեսա-
րիայ, որ գնաց Վահանայապետութեան
աստիճան ընդունեց, և վերադարձաւ թ
Հայաստան:

Պատճառներ.

Երբ որ սուրբ Գրիգոր լուսաւորիչը
վերադարձաւ Հայաստան, հասաւ Ալի-
բատ գետի եզերքը, այն տեղը մկրտեց հա-
զարաւոր Հայեր. և եկաւ ճանապարհների
վերայ գտնուած կուսուռնները քանդել
տուաւ, և նոցա տեղը եկեղեցիներ շինել
տուաւ, և քրմերին մկրտելով՝ քահանայ
կամ եպիսկոպոս էր ձեռնադրում. երբ
որ Ալաղարշապատին մօտեցաւ՝ թագա-
ւորը հանդիսաւոր կերպով զիմաւորեց.

նորան էլ մկրտեց հազարաւոր մարդկանց
հետ. այնուհետեւ Տրդատայ գործակցու-
թեամբ բոլոր Հայաստանը կռապաշտու-
թեան մոլորութիւնից Աստուածպաշտու-
թեան լուսով լուսաւորեց, դպրոցներ շե-
նել տուաւ, աէրութեան ռոճիկով մա-
նուկներ հաւաքեց՝ և ուսումն տուաւ:

ԳԽԽ ՆՂ.

Տրդատ քրիստոնեայ դառնալից յետոյ՝
իմացաւ որ Արստանդիանոս թագաւորն էլ
սուրբ Սեղբեստրոսի շնորհիւր քրիստոնեայ
է դառել, քանի մի երեւելի նախարարնե-
րով գնաց Հոռովմ. այն անգն՝ իրարի տես-
նելով՝ ուրախացան, և երկու ազգաց մէջը
բարեկամական դաշնագրութիւններ հաս-
տատելից յետոյ՝ շատ բնձանելով և պա-
տիւնելով վերադարձաւ ի Հայաստան.
այնուհետեւ սուրբ Ալուսաւորիչը միշտ զը-
նում էր և բնակվում էր Սեպուհ սարու-
մը մի այրի մէջ, ուր բնակվել էր սուրբ

Մանի կոսր. ի վերջոյ իւր Արիստակէս
որդոյն ձեռնադրեց իւր տեղը Ապիսկո-
պոս և Հայրապետ Հայոց, և ինքը բոլոր-
քովին հրաժարելով աշխարհից՝ նոյն այ-
րի մէջը ձդնում էր մինչև ի մահ. իսկ
Տրդատ՝ շատ ազգերի վերայ պատերազմ
գնալով՝ յաղթութիւններ անելից յե-
տոյ՝ մեռաւ, և իրան տեղը յաջորդեց իւր
Խոսրով որդին. սուրբ Արիստակէսին էլ
սպանեց Հայոց չորրորդ իշխան Արգեղա-
յսը՝ իրան միշտ յանդիմանելուն համար.
յետոյ սուրբ Ալքիմանէսին ձեռնադրել
տուին Հայոց Հայրապետ, և սորա որդի
Գրիգորիսը Աղուանից Ասթուղիկոս դրին:

ԳԽԽ ՆՂԵ.

Խոսրով իւր հօրը յաջորդելով՝ բա-
ւական ժամանակ Հայաստանը խաղա-
ղութեամբ կառավարելից յետոյ՝ մեռաւ,
և իւր տեղը յաջորդեց իւր որդի Տիրա-
նը. Տ. Ալքիմանէսից յետոյ՝ յաջորդեց

Կաթուղեկոսական աթոռը նորա որդին
 սուրբ Յուսիկը, սորա ժամանակն էր՝ որ
 Հոովմայեցւոց Յուլիանոս ուրացող կայ-
 սրը իւր պատկերն յուղարկեց Հայաս-
 տան՝ որ եկեղեցեաց մէջը դնեն սատանա-
 յից պատկերների հետը. սուրբ Յուսիկը
 դէմ կեցաւ՝ ձեռնիցն առնելով գձեց գե-
 տինը ջարդեց, սորա վերայ Տիրանը Յուլի-
 անոսից վախնալով՝ ծեծել տուաւ սուրբ
 Յուսիկին այնքան՝ մինչև որ մեռաւ, և
 նորա տեղը բերել տուաւ սուրբ Վանիէլ
 ճգնաւորին. նա էլ իրան որ յանդիմանեց՝
 նորան էլ խեղդել տուաւ. յետոյ Տիրան
 զօրք էր տուած Յուլիանոսին Պարսից վե-
 րայ պատերազմի գնալու ժամանակը. Պար-
 սից թագաւորը այս բանս իմանալով՝ Տի-
 րանին խաբէութեամբ կանչեց կուրաց-
 րուց աչքերը, և բանտարկեց:

Պատ՝ ՃԼԻ՛.

Տիրանից յետոյ՝ յաջորդեց իւր Ար-
 շակ որդին, որոյ թագաւորութեան ժա-

մանակը Կաթուղեկոս էր ընդհանուր ազ-
 դին սուրբ Յուսիկ Հայրապետի թոռք
 Մեծն Աերսէսը. Արշակը Հոովմայեցւոց
 դէմը նախ ապստամբեցաւ, յետոյ Մեծն
 Աերսէս գնաց հաշտութիւն գձեց երկու
 թագաւորաց մէջը. Արշակը նախարարաց
 հետը սկսեց խստութեամբ վարուել, Ար-
 շակաւան անունով մի քաղաք շինեց, ո-
 րոյ մէջը լեցնել տուաւ մարդասպան և ա-
 նօրէն մարդիկներ. բայց յետոյ նախարար-
 ները քաղաքն այրեցին և մէջի բնակիչնե-
 րին կոտորեցին, վերջապէս Շապուհ Պար-
 սից թագաւորը Արշակին շղթայով կա-
 պած՝ յուղարկեց Անյոշ բերդը, և Հա-
 յաստան մնաց անտէր. սուրբ Աերսէս որ
 Հայաստանի մէջը շատ բարեգործական
 հաստատութիւններ շինեց, կարգեր՝ կա-
 նոններ դրաւ, սքսորուած էր Յունաց
 Վաղէս կայսեր հրամանովը, Հայաստան
 եղաւ ուրացող Մեհրու ժանի հարստա-
 հարիչ բռնակալութեան զսհ:

ԳԽՆ ԱՂԳԻ

Հայաստան որ Մեհրուժանի հալածանաց լուծի տակը կհեծէր, Յունաց մեծն Թէոդոս կայսեր օրովը սուրբ Նրսէս աքսորից ազատուած՝ Արշակայ որդի Պապի համար խնդրեց Թէոդոս Թագաւորից, որ Թագաւորական փառքով և Յունաց շատ զօրքով ճանապարհ դրաւ դէպ ի Հայաստան. Մեհրուժանի արած վատութիւնները տեսնալով շուտով պատերազմի պատրաստուեցան. Մեծն Նրսէս Վպատ սարի գլխումը աղօթում էր, յաղթուեցան Պարսից զօրքը, և ցիր ու ցան սկսեցին փախչել. իսկ Միքատ Բազրատունին Մերուժանին բռնեց՝ կրակցրած շամփուրը պսակի պէս շինեց՝ և դրաւ անօրէն Մերուժանի գլխումը, և այնպէս սատակեցաւ, և յետոյ խաղաղութեամբ Թագաւորեց պապը Հայաստանի վերայ:

ԳԽՆ ԱՂԳԻ

Պապ Թագաւորը սուրբ Նրսէսի խորատովը նախարարաց սիրտը շահելով՝ Հայաստանը խաղաղութեամբ կառավարում էր. բայց իրան անկարգ վարուց համար՝ միշտ ազատօրէն յանդիմանում էր սուրբ Նրսէսը. որոյ պատճառաւ Թունաւորեց նորան Պապը, և այս կերպով Հայաստանի մեծ բարերարի կեանքը վերջացաւ, և մնաց Հայոց Նկեղեցին անկարգ Աթուղիկոսների ձեռքին բաւական ժամանակ. իսկ Պապը ապստամբեցաւ կայսերիցը, որոյ պատճառաւ Տէրէնախոս զօրապետի ձեռնովը բռնուեցաւ, և զնաց Աստանդնուպօլիս, և այն անդ սպանուեցաւ կայսեր հրամանովը. որոյ տեղը Թագաւորեցրուց Հայաստանի վերայ Արշակունեաց ցեղիցը Աշրապղատ անունով մի քաջ և սրտոտ մարդ:

ԳԽՆ ՆԼԵՑ

Այս արագ դատ երբ որ թագաւորութիւնն առաժ գալին էր Հայաստան, Գարանաձիկաց զաւառի միջը մի աւազակների խումբի հանդիպեցաւ, որոնք Եփրատի վերայ դրուած գերաններէ կամուրջիցը անցկացան, և գերանները վեր առին. իսկ քաջն Այրազկանն՝ իսկոյն քսան և երկու կանգուն լայնութիւն ունեցող գետիցը թրուաւ՝ և աւազակներին հասաւ. որոնք սարսափած զէնքերը վերաններէիցը ձգելով՝ անձնատուր եղան. Այրազկանն ուզելով Յունաց լուծի տակէցը ազատուիլ՝ Պարսից Շապուհ թագաւորի արջիկն ուզեց իրան կնութեան, երբ որ լսեց Յունաց կայսրը՝ տանիլ տուաւ նորան Առտանդնուպոլիս, և սքորթեց Իսլանտայ կղզին. յետոյ Երշակին և Աղաթըշակին՝ որոնք էին Այրազկանայ որդիքը՝ թագաւորացուց, որոյ պատճառաւ Հա-

յոց թագաւորութիւնը բաժանուեցաւ, մէկը վերին Հայաստանին կրտիրէր՝ հասգանգելով Պարսից թագաւորութեան, իսկ միւսը Յունաց կողմի փոքր Հայաստանին կրտիրէր՝ հնազանդելով Յունաց թագաւորին:

ԳԽՆ ՆԼԹ.

Հայաստան երբ որ այս դրութեան մէջ էր, արժանաւոր Պաթուղիկոս էլ չունէր, բայց յետոյ ընտրուեցաւ Մեծն Կերսեսի որդի սուրբ Սահակ Պարթևը, որոյ ժամանակին թագաւորեց Հայաստանի վերայ Արամշապուհ ուսումնասէր և բարեսէր թագաւորը. սուրբ Սահակ մի ժողով կազմեց՝ ուր կալին շատ բանխմաց Այրազկաններ, որոց կարգումն էր և սուրբն Մեսրոպը, որ երբեմն թագաւորական քարտուղար էր. նոյն ժողովումը յայտնեցին սուրբ Սահակ և սուրբ Մեսրոպը Հայոց զբերի կարևորութիւնը. (զի

Հայերը մինչև այն ժամանակը Յունաց և
 Վստրոց գրերով էին կարդում և գրում.)
 յետոյ քանի ինչ փորձեր արին՝ չը յաջո-
 ղեցաւ. սուրբ Մեսրոպը Վ. ռամշապուհ
 թագաւորի գործակցութեամբը, ևս Սա-
 հակայ հրամանովը զնաց Սամուսատ կըր-
 զին. այն տեղը Վստուծոյ աղօթք արաւ,
 գիշերուայ մէջը երազումը գրերի ձևերը
 տեսնելով՝ տպաւորուեցաւ մտքումը, և
 առաւօտ վերկացաւ գրեց՝ և բերաւ Հա-
 յաստան: Այնուհետև սուրբ Սահակոյ
 հետը սկսեցին դպրոցներ բաց անել Հա-
 յաստանի մէջը, և զանազան ազգաց գրե-
 քեր թարգմանել նորագիւտ Հայ գրերովը:

ԳՊՊ ՆՂԼԵ.

Սուրբն Սահակ և սուրբ Մեսրոպը ընտ-
 րեցին ուշիմ երիտասարդներ և յուզար-
 կեցին Աթէնք՝ որ զնան լաւ ուսմունքներ
 սովորին՝ և վերագառնան Հայաստանը,
 ծաւալին ամեն տեղը իրանց սովրած ուս-

մունքները՝ որք են, Մովսէս Խորենացին,
 Ազնակ Կողբացին, Մամբրէ Վ. երծանող,
 Կորին. Գաւիթ, և ըն. սուրբ Մեսրոպ
 Վ. բաց և Աղուանից էլ գիր հնարեց, և
 ինքն էլ ամեն տեղ քարոզում էր՝ և սով-
 բացնում. բայց զնացող աշակերտները
 երբ որ վերադարձան՝ արդէն վերջացել
 էր Հայոց Արշակունեաց թագաւորու-
 թիւնը, և Վուսաւորչի ցեղեցը Աթուղի-
 կոսութիւնը, որոյ համար և մի ողբ յօրի-
 նեց սուրբ Մովսէս Խորենացին:

ԳՊՊ ՆՂԼԸ.

Վ. ռամշապուհից յետոյ՝ թագաւորեց
 Հայաստանի վերայ Արտաշէր. սա էր թոյլ
 բնաւորութիւն ունեցող մի մարդ, և մո-
 լի վարուց տէր, որոյ պաաճառաւ՝ նախա-
 բարները թշնամացան հետը, և սուրբ Սա-
 հակ Աթուղիկոսին յայանեցին՝ որ ին-
 քըն էլ իրանց հետը միաբանի՝ զնան
 Պարսից Վ. ռամ թագաւորին, նորան պ-

Թոռից ձգել տան՝ և Պարսից մի իշխան
 խնդրին՝ որ Հայաստանը կառավարէ. սուրբ
 Սահակը չը համաձայնեցաւ՝ և շատ էլ
 համոզեց՝ որ այնպիսի յիմարական բան
 չանեն. բայց նոքա աւելի կատաղած դնա-
 ցին Պարսկաստան Վ. ռամ Թագաւորին
 մատնեցին իրանց Թագաւորին՝ միանգա-
 մայն և կաթուղիկոսին. Վ. ռամ շատ ու-
 բախացաւ, բերել տուաւ Արտաշէրին և
 սուրբ Սահակին. Թագաւորի տեղը մի
 Պարսիկ Մարգպան, իսկ սուրբ Սահակայ
 տեղը մի Սուրմակ անուն չարահոգի քա-
 հանայ կաթուղիկոս հաստատեց, և նոցա
 պահեց իւր մօտը, և նախարարներին մեծ
 պատուով յուզարկեց Հայաստան. և այս
 կերպով վերջացաւ Հայոց Արշակունեաց
 իշխանութիւնը:

Դաս ՂԼԹ,

Հայոց Արշակունեաց Թագաւորութիւ-
 նը վերջանալեց յետոյ՝ Հայաստանի կա-

ռավարութիւնը մնաց Պարսից Մարգպան-
 ների ձեռնուամբ, Պարսկաստանի Թագա-
 ւորութեան ենթարկուած. երբ որ Վ. ռամ
 Թագաւորը մեռաւ՝ նորա տեղը յաջոր-
 դեց իւր Յազկերա որդին. սա Յունաց
 հետ պատերազմեցաւ, և յաղթեց. յե-
 տոյ Մոզպետաց խրատներովը և Թելա-
 դրութեամբը կամեցաւ բոլոր քրիստոնէայ
 ազգերին դարձնել Պարսից կրակապաշտ
 օրինաց վերայ, որոյ համար՝ Միհրնեբ-
 սեհ հազարապետը Թագաւորի կողմիցը
 մի հրովարտակ գրեց Հայոց վերայ՝ որ
 կամ ընդունին յօժարութեամբ Պարսից
 մոզութեան օրէնքը, կամ Թէ պատաս-
 խան տան իւր դրութեանը. երբ որ հրո-
 վարտակը հասաւ Հայաստան՝ ժողովեցան
 բոլոր եկեղեցական Հայերը Յովսէփ Կա-
 թուղիկոսի հետը՝ և գրեցին օրինաւոր
 պատասխան՝ և ստորագրեցին, նմանապէս
 և Հայոց նախարարները ստորագրեցին, և
 յուզարկեցին Պարսից Թագաւորութեան
 դուռը:

Գ... Ն'Խ.

Երբ որ Միհրնեբսհի յուզարկած
 հրովարտակի պատասխանը կարգաց Յ՝ գ-
 կերտ՝ բորբոքեցաւ կատաղի դազանի նը-
 ման, իսկոյն հրամայեց յայտնի կերպով
 հրաման գրուի շայաստան՝ որ գլխաւոր
 նախարարները շուտով գան Պարսից դու-
 րը. երբ որ ստացան Յազկերտի հրամանը՝
 անմիջապէս պատրաստուեցան գնալ՝ ո՞-
 րոնք էին, Վասակ Աիւնեաց իշխանը և
 Մարգպան շայոց, Ներշապուհ Մրծրու-
 նին, Մրտակ Ուշտունին, Վարդան Մա-
 միկոնեան՝ սպարապետ շայոց, Վահան
 Ամատունին, և ըն. ամենքը ի միասին ներ-
 կայացան Յազկերտին՝ որ բարկութեամբ
 սպառնացաւ երկրպագել արեգական և
 կրակի, ապա թէ ոչ՝ շատ չարիք խոստա-
 ցաւ շայաստանի վերայ բերելու. և հը-
 բամայեց բանտարկել նոցա. յետոյ Պար-
 սիկ մի իշխան (որ ծածուկ քրիստոնեայ

էր) խորհուրդ տուաւ՝ որ երեսանց թա-
 գաւ որի հրամանը կատարեն. նոքա էլ
 այնպէս արին. — յետոյ Յազկերտ պատուե-
 լով նոցա՝ շատ մոզերով և մոզպետով
 յուզարկեց շայաստան՝ որ ամեն շայե-
 րին էլ կրակապաշտ շինեն, և դարձնեն
 նոյն օրինաց վերայ:

Գ... Ն'ԽԵ.

Շայոց նախարարները երբ որ Պարսից
 մոզերով և մոզպետով մտան շայաստա-
 նը, առաջին փորձն անել կամեցան մոզե-
 րը՝ Անգղ զիւղաքաղաքի եկեղեցւոյ վե-
 րայ. երբ որ ուզում էին քանդել, արիս-
 սիրտ սուրբ Վեռնիգ երեցը՝ քրիստոսա-
 կան սուրբ օրինաց նախանձով սաստիկ
 բորբոքուած՝ իւր ժողովողներովը՝ և ու-
 ըրիշ եկեղեցականներով զէմ կեցան, յար-
 ձակեցան մոզերի վերայ, գաւազաններով
 և ուրիշ գործիքներով վերաւորեցին գնո-
 սա՝ և հալածեցին, և յետոյ սաստիկ

յանդիմանեցին նախարարներին՝ իրանց ուրացութեան համար. բայց նախարարները իրանց անմեղութիւնը՝ և սրտանց քրիստոնէական հաւատքի վերայ հաստատելենլը՝ մի կերպով յայտնեցին. միայն Աւենեաց Աստակը սրտանց ուրացած էր իւր համախոհ մի քանի մարդով. սա խորհուրդ տուաւ մոզպետին՝ որ եղելութիւնը գրէ Յազկերտին, զօրք յուղարկէ շայտտան, և ինքն էլ ջանք անէ շայտց միաբանութիւնը քանդելու, մոզպետին էլ լսելով Աստակին՝ գրեց Յազկերտին. իսկ Աստակը սուտ քահանաներով Աւետարանի վերայ երդումներով շատ ջանք արաւ շայտց միաբանութիւնը քանդել, բայց ի զուր գնաց բոլոր աշխատութիւնը:

Պատճառներ.

Արք որ Յազկերտն իմացաւ շայերի ընդդիմութիւնը՝ անհամար զօրք յանձ-

նեց մի զօրապետի, որոյ անունն էր Մուշկանիւսալաւուրա, եկաւ շայտտան կամ շայերին հնազանդեցնելու, կամ թէ բոլորովին կոտորելու. շայտց նախարարները երբ որ լսեցին՝ իսկոյն ընտրեցին Վարդան Մամիկոնեանին զօրապետ. վաթսուն հազար զօրքով Վարդան գնաց Աւարայրի դաշտը՝ Տղմուտ գետի եզերքը Պարսից զօրաց դէմը, զիւցազնական քաջութեամբ կռուեցաւ. վերջապէս նահատակեցաւ իւր նիդակակից ընկերներովը և զօրքերովը՝ ընդ ամենը հազար երեսուն և վեց անձինք. որոց զլեաւորներն էին, Խորէն խոռխոռունի, Արտակ Պալունի, Տաճատ Պնթունի, շմայեակ Ղիմաքսեան, Աերսեհ Քաջբերունի, Վահան Պնունի, Արսէն Բնձայեցի, և Պարեզին Սրուանցտեան. իսկ Պարսից զօրքերից կոտորվողները չորս հազարի չափ էին, այս բանիս վերայ՝ Յազկերտ բարկացած հրաման յուղարկեց, որ Աստակ ուրացողը գնայ Պարսից դուռը, և պատասխանատու լինի այս

ամենայն չարեացը, որ ինքն եղաւ պատ-
ճաս:

Պատճառ Ը՛ԽԳ.

Սինեաց ուրացող չար Վասակը սուրբ
Վարդանանց նահատակութիւնից յե-
տոյ՝ տակաւին չար գործքերից ձեռն չէր
վեր առնում. ուստի սուրբ Յովսէփ Սա-
թուղիկոսը սուրբ Վեռնիկ Երէցի հետք
բողոքեցին Յազկերտին. նա էլ իւր կող-
մից յուղարկեց Հայաստան Ատրորմիզ-
դին, որ եկաւ թագաւորի կողմից խաղա-
ղութիւն բերու, բռնեց սուրբ Յովսէփ
Սաթուղիկոսին, սուրբ Վեռնիկ, և քանի
մի սուրբ քահանայից հետ շղթայով կա-
պած յուղարկեց Պարսից գուռը. նմանա-
պէս և Վասակին խաբէութեամբ յու-
ղարկեց, ուր հասած ժամանակին քննեց
նորա ամեն չար գործերը, խայտառակ
կերպով խլել տուաւ նորա ամեն պատիւ-
ները և գձել տուաւ մահապարտաց բան:

տը, որ մի ժամանակից յետոյ՝ չարաչար
կերպով որդնալից սատակեցաւ նոյն բան-
տոււր. իսկ սուրբ Վեռնիկանց բանտար-
կել տուաւ Նիւշապուհ քաղաքումը.
յետոյ նոցա էլ նահատակել տուաւ նոր
հաւատացող մողպեաի հետք, որոնք ե-
ղան Հայաստանի եկեղեցւոյ փառք և պա-
տիւ. որոց յիշատակը կատարում է մին-
չև ցայսօր սուրբ Վարդանանց տօնից
առաջ:

Պատճառ Ը՛ԽԹ.

Սուրբ Վեռնիկանց նահատակութիւնից
յետոյ՝ նախարարներից մի քանիսը բանտար-
կուած էին. Պարսից Յազկերտ թագաւորը
մեռաւ, նորա տեղը յաջորդեց Պերոզ, որոյ
ժամանակին ազատուեցան Հայոց նախա-
բարները՝ և եկան Հայաստան, որոնց կար-
գումն էր և Վահան Մամիկոնեան. սորա
քաջարտութեան և հաւատարմութեան
համար՝ մեծ պատիւ ունէր Պարսից թա-

գաւորի՞ն առջևը, որոյ համար նախանձերով մի քանի ուրացող նախարարներ՝ շարախօսութիւն արին Պարսից դռան. Վա-հան իմացաւ որ մեծ վտանգի մեջ է զբան-վում, անմիջապէս գնաց Պարսկաստան՝ իւր քրիստոնէական սուրբ հաւատքը արտաքին ձեռով ուրացաւ, և թագաւորից մեծամեծ պարզեւներ և պատիւներ առաձգ՝ վերադարձաւ Հայաստան, բայց ուրացութեան համար՝ խղճահարուած՝ միջոց էր փառում՝ որ կրկին քրիստոնեաց դառնայ. Հայոց բարեպաշտ իշխանները խորհուրդ արին՝ որ Հայաստանից բոլորովին ջնջեն կռապաշտութիւնը, և արիասրտութեամբ Պարսից զօրաց դէմ և ուրացող Հայոց դէմ պատերազմեն, կամ իրանց նախնեաց նման նահատակուին՝ և բարի անուն թողուն:

Դաս ՂԻԵ.

Հայոց բարեպաշտ իշխաններ հաւաքուեցան Սամիկոնեան Վահանի մօտը,

և խորհուրդներ միացուցած մարդպան ընտրեցին Սահակ Բագրատունի ասպետին, և Վահանին էլ ընտրեցին Հայոց զօրաց սպարապետ, և պատրաստուեցան Պարսից հետը պատերազմելու. Վահան բաւական զօրք հաւաքեց ամեն կողմից, և սկսեց դէմ դնել Պարսից զօրաց. թէ և դաշնակից էին Վրացիք, բայց շատ խորամանկ ձեռով վարուեցան Հայոց զօրաց և Վահանի հետը, իսկ քաջն Վահան միշտ յաղթող էր գտնվում, մինչև անգամ Պարսից զօրքերը նորա անունիցը սարսափում էին. զի Հայոց զօրքերը Պարսից անհամար զօրքը տեսնալով՝ հետ զհետէ սկսեցին յիտ քաշուիլ. բայց արիտար Վահանը 30 զօրքով թշնամեաց բանակի մեջը մտնելով՝ հրաշալի կերպով շատ կոտորածներ անելով՝ վերջապէս Պարսից ահազին բանակը ձեռքեց իւր սակաւաթիւ զօրքերովը, և դուրս եկաւ, որ Պարսիկներ ապշած մընացին. նոյն միջոցին դեսպան եկաւ Պարս-

կատանից թէ, Պերոզ թագաւորը մեռաւ. որոյ պատճառաւ Պարսից զօրավարը՝ զօրքն առած՝ դարձաւ Պարսկաստան. իսկ Աշան իւր ուխտակիցներովը Ապարշապատու Մայր եկեղեցին գնաց՝ և մեծ հանդէս կատարեց. և այն տեղից Դուլին քաղաք գնաց և հանգստացաւ:

ԳԽՈ ՂՆՕ.

Երբ որ Պարսից Պերոզ թագաւորը մեռաւ՝ նորա տեղը յաջորդեց Ապարշապաղապէր թագաւորը. սա յուզարկեց ի Հայաստան Նիխոր անուն բարեսիրտ լշեանը, որպէս զի մի կերպով Մամիկոնեան Աշանի սիրտը շահէ՝ և հնազանդեցնէ Պարսից տէրութեան՝ եկաւ Նիխոր ի Հայաստան՝ և Աշանին կանչելով՝ քաղցրութեամբ հետը խօսեցաւ՝ և պահանջեց նորանից հնազանդութիւն. նա էլ երեք պայման առաջարկեց, 1) բռնութեամբ Հայոց ազգին չը դարձնեն

Պարսից հաւատքի վերայ, և կռապաշտութիւնը բոլորովին ջնջվի Հայաստանից. 2) անարժան մարդիկներ տէրութեան գործերի վերայ գնելով՝ արժանաւորները չը մերժեն. 3) թագաւորն եղած գանգառները լաւ քննէ իւր անձամբ՝ վճռէ. Նիխորը այս երեք պայմանները թագաւորին ընդունել ապու երաշխաւորելով՝ Աշանին վեր առաւ գնաց Պարսկաստան: Թագաւորը ներելով Աշանայ պատամբութեանը՝ ընդունեց նոյն պայմանները, և հրովարտակ գրելով՝ հաստատեց նոյն կանոնները, և Աշանին մարդպանութեան պատիւ տալով՝ յուզարկեց Հայաստան, և այնուհետեւ Հայաստան մաքրուեցաւ կռապաշտութիւնից՝ և խաղաղացաւ:

ԳԽՈ ՂՆԶ.

Աշան Մամիկոնեան մի քանի տարի Հայաստան խաղաղութեամբ կառավարե-

լից յետոյ՝ մեռաւ և իւր անդը հետ զհե-
տէ Պարսից տերութեան կողմից մարդպան
կզրուէին երբեմն Հայ, երբեմն Պարսիկ:
Պաւլիթ Սահառունի իշխանի մարդպա-
նութեան ժամանակումը՝ Պարսից թա-
ղաւորն էր Խոսրով: սա երբ որ Յունաս-
տանի վերայ գնաց պատերազմի, Տարո-
նոյ կողմից անցկենալով հրաման յուղար-
կեց Մամիկոնեան Մուշեղին (որ Տարոն
երկրին տիրում էր ազատ իշխանութեամբ):
որ զօրք հաւաքէ և արշաւէ Յունաց դէ-
մք: բայց նա չը հնազանդեցաւ: որոյ
պատճառաւ Խոսրով Միհրանին բաւա-
կան զօրք յանձնեց՝ որ գնաց Մուշեղին
նուաճէ: բայց Մուշեղին ծերացած լինե-
լու պատճառաւ՝ Վայլ Վահանին կար-
գեց իւր կողմից զօրապետ: որ գնաց Պար-
սից զօրքին զանազան հնարներով կոտո-
րեց: և վերջապէս Միհրան ամեն կողմից
պաշարուած՝ մի քանի զօրքով հագեւ
հալ փախաւ Հայաստանից: Մուշեղ
երբ որ մեռաւ՝ Վայլ Վահանը յաջոր-

դեց Տարոնայ ազատ իշխանութեան: և
այնուհետեւ էլ Մամիկոնեանը ցեղէ ցեղ
իշխում էին բաւական ժամանակ:

Պատճառով:

Պարսից մարդպանները բաւական ժա-
մանակ Հայաստանին տիրելից յետոյ՝ Հա-
ղարացոց Ամիրապետներ իրանց կողմից
ոստիկաններ կուղարկէին՝ որ կարաժարեն
Հայաստանը, և հարկերը հաւաքելով
յուղարկեն իրանց: մի ժամանակից յե-
տոյ՝ Սմբատ խոստովանողի որդի Բագ-
րատունի Աշոտը կանգնացրեց Բագրա-
տունեաց իշխանութիւնը:

ՅՕԻՌԵՄ ԵՐՐՈՐԻ:

Բագրատունեաց իշխանութիւ-
նը:

Պատճառով:

Հագարացոց Ամիրապետի կողմիցը
հաստատուած Հայոց սպարապետ Աշոտ

Բազրատունին՝ իւր խոհական կառավարութեամբը՝ Հայոց իշխանաց հետըսիրով կառավարվելուն համար՝ ամիրապետին միջնորդեցին՝ որ իշխանաց իշխանի պատիւ տուաւ Աշոտին իւր ոստիկանի ձեռնովը. և այնուհետեւ սկսեց Աշոտ Հայաստանի մէջ զանազան կարգեր և կանոններ դնել, մինչև որ բոլոր իշխանաց և ժողովրդոց սրտերը զբաւեց. որոնք խոտանալով հաստատ հնազանդութիւն, կրկին անգամ միջնորդեցին նորա ամիրապետին՝ որ իւր ոստիկանի ձեռնովը թագաւորական թագ և զգեստ յուղարկեց Աշոտին. եկաւ ոստիկանն Շիրակ գաւառը՝ և Ենիքաղաքի մէջը հաղցրուց նորան թագաւորական զգեստները՝ և նստեցրուց թագաւորական Աթոռի վերայ. այնուհետեւ Գեորգ Աթուղեկոսը եկեղեցական հանդէսով բոլոր ժողովրդոց ներկայութեամբը՝ թագաւոր օծեց Աշոտին. և այս կերպով Հայաստանը կրկին ստացաւ իւր ազատ կառավարութիւնը. Աշոտի թագաւորութեան համարը երբ որ լսեց Հայկազուն Աստիլ Յունաց կայսր՝ մեծ ուրախութեամբ նորան թագաւորական թագ և ուրիշ ընծաներ յուղարկեց:

Գ. Կ. Դ. Ծ.

Աշոտ իւր թագաւորութեան միջոցումը գովելի բարեկարգութեամբ ազգը բաւական ժամանակ կառավարելից յետոյ՝ մեռաւ և յաջորդեց իւր տեղը իւր մեծ որդին Սմբատ. սա նոյն միջոցումը գտնվում էր Գուգարաց երկրումը. երբ որ լսեց իւր հօր մահը՝ իսկոյն աճապարեց եկաւ Շիրակաւանը, և մեծ սուզ ունեցաւ. բայց Գեորգ Աթուղեկոսը մխիթարեց նորան, և Ետրնիրսեհ Արաց մեծ իշխանն էլ եկաւ, նորան մխիթարելից յետոյ՝ սուզի շորերը հանեց նորա վրայիցը՝ թագաւորական զգեստներ հագցնելով՝ նստեցրուց իւր հօր աթոռի վերայ, և ինքն էլ Սմբատից մեծամեծ պարգևներ ստանա-

լով՝ վերադարձաւ Վրաստան. բայց Աշոտի եղբայր Աբասը, որ մտքումը դրած էր ինքը թագաւորելու, շատ բարկացաւ Ատրնեբսեհի վերայ, բռնել տալով նորան շղթայի կապած՝ բանտարկեց. և յետոյ զօրք հաւաքեց եկաւ Սմբատի վերայ, որ թագաւորութիւնից մերժէ, և ինքը թագաւորէ. Սմբատն էլ իւր հաւատարիմ զօրքերը հաւաքեց՝ և զնաց Աբասի վերայ. երկու կողմիցն էլ շատ կոտորածներ եղաւ. յետոյ Գեորգ Սթաւրակոսի միջնորդութեամբը՝ Աբասը յետ կեցաւ պատերազմից, մանաւանդ ինքն էլ նեղեւ լուծուեցաւ. վերջապէս Ատրնեբսեհին բանտից ազատեց և դարձաւ իւր տեղն ի Վասանդ:

ԳԻՄՆ Դ՛ՕԵ.

Սմբատը իւր կեանքը միշտ պատերազմներով անցկացրուց, երբեմն ընտանի թշնամեաց, և երբեմն արտաքին թշնա-

մեաց դէմ, երբեմն յաղթելով և երբեմն յաղթուելով. վերջապէս Գագիկ Արծրունին՝ որ ամիրապետից ապստամբուած Յուսուփ ոստիկանից թագաւորական պատիւ ստացաւ, և թագաւորեց Վասպուրականումը, միացաւ մի պատճառաւ Յուսփայ հետը՝ և զիմեցին Սմբատի վերայ հազարաւոր զօրքով. բայց Սմբատ չը կարողացաւ իւր սահաւածիւ զօրքովը նոցա զօրաց դէմը պատերազմել, ուստի զօրքը հետն առած մտաւ Վասպուտ բերդի մեջը, և պաշարուեցաւ. յետոյ սկսեցին երկու կողմից կոտորած անել, Սմբատ ատենալով Յուսփայ խորամանկութիւնը (որ իւր զօրաց դէմը յառաջ էր կանգնեցրած Հայոց զօրքերը) իսկոյն մինակ դուրս եկաւ բերդիցը՝ և անձատուր եղաւ. Յուսուփը բռնել տալով Սմբատին, կապանքով տարաւ Երնջակ. շատ անտանելի չարչարանքներ տալից յետոյ նահատակել տուաւ, և նորա մեռած մարմինը խաչի վերայ բեկ-

ուել տուաւ, որ եղաւ Սմբատը ազգասէր և բարի նահատակ:

ԳԽԽ Ն՛ՕԻ՛.

Երբ որ Սմբատը բռնուած էր՝ նորա մեծ որդին Աշոտը՝ զօրք հաւաքելով՝ սկսեց Հայաստանից հալածել Յուսփայ զօրքերին. մանաւանդ թէ՛ երբ որ լսեց իւր հօր նահատակութիւնը՝ աւելի զայրացած՝ չորս կողմից վանեց, կոտորեց, և նոցա բոլորովին հեռացրուց Հայաստանից. այս քաջութիւնները երբ որ Աշոտի վերայ տեսան Հայոց նախարարները՝ Վրաց թագաւորի հետ միաբանած՝ նըստեցրին իւր հօր աթոռի վերայ. այս իրագործութիւնները երբ որ լսեց Յուսուփը՝ անթիւ զօրք յուղարկեց Հայաստան. որոնք եկան սկսեցին Հայոց երկիրների բընակչաց կոտորել, գերել, կողոպտել, և ուրիշ տեսակ տեսակ չարիքներ գործել. այս ամեն չարիքներից աւելի՛ նախարա-

րաց անմիաբանութեամբ իրարի դէմ պատերազմիլը, որով և Հայաստանը յետին թշուառութեան ենթարկուեցաւ, զի պատերազմների պատճառաւ երկրագործութիւնը դադարեցաւ, սկսեց սաստիկ սով որ մինչև անդամ վայրի խոտեր ուտում էին. և ուրիշ զարհուրելի և քստմնելի դէպքեր պատահեցան նոյն միջոցներումը. ծնողքը իրանց երախաները, տէրերն իրանց գերիները մորթումէին և ուտում, և շատերն քաղցրութիւնից մեռնում էին փոյոցների մէջը, անթաղ էին մնում, և նոցա մարմինները գիշակեր գազաններն ուտում էին:

ԳԽԽ Ն՛ՕԳ՛.

Աշոտ երկաթ մականուկովը երբ որ այսպիսի նեղ ժամանակներումը թագաւորում էր՝ Յունաց կայսր իմանալով Հայաստանի անհնարին նեղութիւնը՝ հրաւիրեց նորան իւր մօտը՝ հարկաւոր խոր-

հուրդների համար. երբ որ գնաց՝ վերստին մեծամեծ պատիւներով և մի գունդ Յու- նաց զօրքով դարձաւ ի շայաստան. Յու- սուփ այս բանիս իրազգաց լինելով՝ խո- բամանկ մտքով Սմբատ թագաւորի եղ- բօր որդին Աշոտ սպարապետին թագա-ւորական զգեստներով և թագով զար- դարեց, և անուանեց շայոց թագաւոր. այս սուտ թագաւորը բաւական զօրք հա-ւաքեց և արշաւեց Աշոտ թագաւորի վե-րայ, և սկսեցաւ արիւնահեղ պատերազմ. բայց Յովհանն Աթուղիկոսը մեջ մտնե-լով՝ հաշտեցրուց. Աշոտ սպարապետը դարձեալ պատեհ ժամանակ որսալով՝ գալիս էր Աշոտ թագաւորի վերայ, և Յովհանն Աթուղիկոսը հաշտութիւն էր գձում նոցա մեջը, բայց ի զուր. Աշոտ թագաւորը Սահակ իշեանի աղջկան ա-ռաւ իրան կին, և նորա զօրքերն էլ միաց-րուց իրան զօրաց հետը՝ և դարձեալ Ա-շոտ սպարապետի հետ պատերազմում էր, և վերջապէս Յովհանն Աթուղիկոսի միջ-

նորդութեամբ դաշնադրութիւն հաստա-տուեցաւ երկուսի մեջը՝ և հաշտուեցան. բայց Աշոտ թագաւորը ունեցաւ ուրիշ թշնամիներ էլ, մանաւանդ իւր Աբաս եղբայրը. մի ժամանակից յետոյ՝ նորա հետ էլ հաշտուեցաւ և 15 տարի թա-գաւորելից յետոյ՝ մեռաւ:

Գառ ճ'ԾԳ.

Աշոտ թագաւոր որդի չունենալու հա-մար Արծրունի Գագիկ թագաւորի խոր-հրդովը ընտրեցին նորա եղբայր Աբասին շայոց վերայ թագաւոր. սա Գուին նըս-տող Ոստիկանի հետը խաղաղութեան դաշինք հաստաւեց. և շագարացիներից բռնուած գերիներն ազատուեցան. այս բանս իմանալով չորս կողմեր ցրուած շա-յերը՝ սկսեցին գալ շայաստան իրանց տեղերը. Աբասը փոյթ ունէր ամեն երկիր շէնցնելու. Սարս քաղաքը զարդարելով՝ արաւ իրան թագաւորանիստ մայրաքա-

դաք. որոյ մեջը շինել տուաւ մի փառա-
 ւոր եկեղեցի. դեռ շինութիւնը չաւար-
 տած Ափխաղաց թագաւորը զօրք հաւա-
 քեց՝ եկաւ Հայաստան, Աբաս դեսպան
 յուղարկեց դէմը՝ և նորա գալստեան պատ-
 ճառը հարցրուց. նա էլ պատասխանեց.
 «Ես եկած եմ Աբասի շինել տուած եկե-
 ղեցին՝ Արաց ծէսով օծել տալու, այս
 բանիս վերայ Աբաս սաստիկ բարկանա-
 լով՝ զօրք հաւաքեց, գնաց նորա դէմը,
 յաղթեց նորա զօրաց՝ և իրան էլ գերի
 բռնեց, և բերաւ նոյն եկեղեցւոյ մեջը ման
 ածեցրուց. յետոյ ասաւ. «լաւ մտիկ
 տուր քո Արաց օծել տալու եկեղեցին՝
 որ էլ չես կարող տեսնալ,» յետոյ դուրս
 հանել տալով՝ իսկոյն աչքերը հանել
 տուաւ և կուրացրուց. Ափխաղներ երբ
 որ լսեցին իրանց թագաւորի գերութիւ-
 նը՝ եկան շատ ընծանելով՝ Աբասին ա-
 ղաչեցին, և ներողութիւն խնդրեցին և
 հաստատուն դաշինք հաստատելից յե-
 տոյ՝ վեր առին իրանց թագաւորին՝ և

գնացին. իսկ Աբաս մեռաւ բարի մա-
 հուամբ:

Դաս Ա՛ՕԵ.

Աբասից յետոյ՝ յաջորդեց նորա Աշոտ
 որդին. սա իւր իշխանութեան առաջին
 տարիներումը՝ սկսեց Հայաստանը խա-
 ղաղըութեան մեջ պահելու հնարքներ
 մտածել. ուստի ամեն կողմից զօրք հա-
 ւաքեց, և թշնամիներին հալածեց Հա-
 յաստանից. այս բաներս լսելով շրջակայ
 ազգեր՝ զարհուրելով՝ նորանից՝ զանա-
 զան պարզէներ յուղարկեցին, և խաղա-
 ղութեան դաշինք հաստատեցին նորա
 հետը. Աշոտ բաւական ժամանակ այսպի-
 սի խոհեմութեամբ վարուելուն համար՝
 Հայոց նախարարները միաբան խորհր-
 դով՝ Անի քաղաքի մայր եկեղեցւոյ մեծ
 հանդիսով Հայոց թագաւոր օծել տուին
 նորան. ուր ներկայ գտնուեցան Աղուա-
 նից Փիլիպպոս թագաւորը, և նոցա Յօ-

Հաննէս Աթուղեկոսը. իսկ նորա Մու-
շեղ եղբայրը Աարս քաղաքի մայր եկեղե-
ցունքը թագաւոր օծուեցաւ, բայց միշտ
իւր եղբօր հետ հնազանդ կերպով էր
վարվում. Աշոտ յաղթեց և Համտուն
անունն ուստիկանին, և սպաննեց նորան,
որ ամիրայետիցն ապստամբած էր. ամի-
րապետն իմանալով՝ Աշոտին թագաւո-
րական թագ, և ուրիշ ընծաներ յուղար-
կեց. Աշոտ միշտ ջանք էր անում ժողո-
վրդեան խեղճութիւնները քացրացնել,
ամեն ժամանակ աղքատներին այցելու-
թիւն էր անում. նոցա համար յատուկ
պատսպարաններ շինել էր տալիս ամեն
քաղաքներումը. և նոցա կերակրում էր
յարբունուստ. և ամեն օր աղքատների
հետ սեղան էր նստում, և նոցա սիրով
սպասաւորում էր. որոյ պատճառաւ Ա-
շոտ ողորմած անուանեցաւ:

Դաս ՂՆԳ.Օ.

Աշոտ Ողորմածին յաջորդեց իւր Ամբ-
բատ որդին, որ հօր ժամանակուայ խա-
ղաղութիւնը հաստատ պահեց, և այնու-
հետև սկսեց Անի քաղաքը զարդարել
մեծագործ շինութիւններով. նորա շքե-
ջապատը բարձր պարիսպներ և ամուր
աշտարակներ շինել տուաւ, և մէջը գե-
ղեցիկ տներով, շուկաներով, և բազմա-
թիւ եկեղեցիներով զարդարեց. այս մի-
ջոցներումը իւր հօրեղբայր Աարսայ թա-
գաւոր Մուշեղը սկսեց Սմբատի երկիր-
ները վերդովել. որոյ համար Սմբատը բար-
կանալով՝ զօրք վեր առած՝ գնաց Մու-
շեղե վերայ, և նորա շատ տեղերին տի-
րեց, և ապականեց. բայց վերջապէս եր-
կու թագաւորաց մեջը հաշտութիւն ե-
ղաւ. Մուշեղ երբ որ մեռաւ՝ իրան տե-
ղը յաջորդեց իւր Աբաս որդին. որ շատ
բարեկարգութիւններ հաստատեց իւր
փոքրիկ տերութեան մէջը. իսկ Սմբատը

իւր թագաւորութեան վերջի տարինե-
րումը՝ քանի ինչ անարժան և անարդար
գործքերի ձեռնամուխ եղաւ՝ որով և ժո-
ղովուրդն իրանից հեռացրուց. նա մե-
ռաւ՝ և տեղը յաջորդեց իւր Գագիկ
եղբայրը՝ սա էլ շատ խոհեմութեամբ
կառավարեց իւր ժողովուրդը. շատ բա-
րեպաշտական շինութիւններ հաստատեց.
և Աստուածային պաշտօնին միշտ ջեր-
մեռանդ գանուելով՝ 30 տարի թագաւո-
րելից յետոյ՝ մեռաւ խաղաղութեամբ:

Գագիկ:

Գագիկն երբ որ մեռաւ՝ իւր երկու
որդուց Յովհաննէս Սմբատի՝ և Աշոտի
մէջը թագաւորութեան յաջորդութեան
վերայ մեծ խռովութիւն ծագեցաւ. Արմ-
բատ որ իրաւամբ հօր թագաւորութեան
ժառանգ կը համարուէր՝ հազիւ թէ ձեռք
բերաւ. բայց Աշոտն ուզում էր ինքն յա-
փշտակէ թագաւորական աթոռը. ուստի

գնաց զօրք հաւաքեց՝ և եկաւ Սմբատի
վերայ. կռուի մէջը երկու կողմիցն էլ շատ
զօրք կոտորուեցան. Հայոց նախարարնե-
րը՝ այս չարեաց դէմն առնելու համար՝
մի հնարք մտածեցին. վեր առին Պետ-
րոս Վաթուղիկոսին և Ափխազաց թա-
գաւորին՝ գնացին խաղաղութեան հաշ-
տութիւն դնելու. վերջապէս երկու եղ-
բարց մէջը հաստատ դաշինք դրին. բայց
Սմբատը մի երկու անգամ էլ մեծամեծ
դաւադրութիւնից ազատուեցաւ: Այս
միջոցներումն Վասպուրականի Սենեքե-
րիմ թագաւորի վերայ արշաւեց անհա-
մար զօրքով Ալիւթացուոց թագաւորը,
և սկսեց Վասպուրական երկիրը ասպա-
տակել. Սենեքերիմ երբ որ լսեց՝ զար-
հուրեցաւ և անմիջապէս զօրք հաւա-
քած՝ գնաց նորա դէմը. բայց ոչինչ չը
կարողացաւ անել. նորա համար՝ Յունաց
թագաւորի հետ հաստատուած դաշնա-
դրութեամբ Վասպուրական երկիրը Սե-
բաստիա քաղաքի հետ փոխեց, և գնաց

իւր ազգականներովը, և իշխաններովը
Սեբաստիա բնակեցան :

ԳԽԱ Ն՛ԾԸ.

Յովհաննէս Սմբատ երբ որ ամեն կողմից ապահովութեամբ Անի քաղաքուիւր թագաւորում էր, Ափսաղաց Գորգի թագաւորն ապստամբեցաւ Յունաց կայսերիցը. ուստի ամեն երկիրներից զօրք հաւաքեց, նմանապէս և Հայոց Սմբատ թագաւորից ունեցաւ բաւական զօրք և զնաց Յունաց դէմը. բայց Յունաց Վասիլ կայսր նորան յաղթելից յետոյ՝ միտք արաւ որ Հայաստանի վերայ գայ. Սմբատ սարսափելով նորա մեծ յաղթութիւնից՝ մի աղաչանաց նամակ գրեց նորան, որոյ միջոցաւ խոստանում էր իւր մահից յետոյ՝ Անի քաղաքը նորան տալ իբր սեպհական կալուած. կայսր այս նամակս ստանալից յետոյ՝ սիրով ընդունելով նորա խոստումը և պայմանաթուղթը՝ վերադար-

ձաւ Յունաստան. մի ժամանակից յետոյ Վասիլ կայսեր եղբայր Արստանդին կայսր խղճահարելով այն պայմանաթղթի մասին, թէ գուցէ իւր ժառանգի ձեռքն անցնի, և Հայաստանի թշուառութեան պատճառ դառնայ, ուստի իւր մահուան ժամանակը մի Հայոց քահանայ խնդրեց նորանից՝ որ նոյն պայմանաթուղթը մի կերպով Հայոց թագաւորին յանձնէ. բայց ապիրատ քահանայն՝ ոսկին աւելի սիրելով քան զհայրենիքը՝ տարաւ նոյն պայմանաթուղթը մատնեց Արստանդին կայսեր յաջորդ Միքայէլէն, և նորանից շատ պարզեւ ստացաւ. որոյ չար հետեւանաց դառն պտուղը վերջապէս վայելեց ազգը, և մինչև ցարդ նզովելով կը յիշէ նոյն Աիրակոս վատ քահանայի անունը, որ եղաւ Հայրենեաց մատնիչ, և Ռազրատունեաց թագաւորութեան կործանման իսկ պատճառ:

ԳԽԽ Ճ՛ԾԻԻ.

Յովհաննէս Սմբատ Թագաւոր երբ որ մեռաւ՝ նախարարաց միտքանուծիւնը քանդուեցաւ. զի վեստ Սարգիս անուն նախարարը (որ տէրուծեան ներքին գործոց հոգաբարձու էր) կողոպտելով տէրուծեան գանձը՝ առանց իրաւանց ինքնապուխ ուզում էր Թագաւորել, բայց Վահրամ սպարապետը միւս նախարարաց հետ միաբանելով՝ ընդդիմացաւ նորա նպատակին. նոյն միջոցներումը Յունաց Միքայէլ կայսր դեսպան յուղարկեց Հայոց նախարարներին, իւր մօտ ունեցած պայմանագրի զօրութեամբ Անի քաղաքը պահանջեց. բայց նախարարները բացէ ի բաց մերժեցին նորա պահանջմունքը. կայսրն իմացաւ որ քաջութեամբ չի կարող ձեռք բերել Անին, 100 հազարից աւելի զօրք յուղարկեց Հայաստան՝ որպէս զի բռնութեամբ կարողանայ առնուլ. Վահրամ սպարապետ և դաշնակից նա-

խարարներ բաւական զօրքով մտան Անի քաղաքի մէջը՝ և պաշարուեցան. բայց երբ որ տեսան Յունաց յանդգնութիւնը և նոցա արած հայհոյութիւնները՝ Օսղկոց անունով դուռը բաց արին, և դիւցազնական քաջութեամբ սկսեցին Յունաց զօրքերին անխնայաբար կոտորել, այնքան՝ մինչև որ նոցա Թափուած արիւնովը Ախուրեան ղետը ներկուեցաւ. որոնք 20 հազարից աւելի կոտորուեցան, և մնացածները ցիր ու ցան Թող արին պաշարումը՝ և փախան դէպ ի Յունաստան:

ԳԽԽ Ճ՛Կ.

Հայոց դաշնակից նախարարներ տեսնելով Հայոց զօրաց արիւնթիւնը՝ միաբանութեամբ Պետրոս Սաթուղիկոսի, և Վահրամ սպարապետի հետ խորհուրդ անելով՝ Թագաւոր օծեցին Սմբատ Թագաւորի եղբորորդի Գապիկը. բայց վեստ

Սարգիսը այս բանս իմանալով՝ գնաց Անի քաղաքի բերդի մէջ ամրացաւ. Գագիկ թագաւորն արիական քաջասրտութեամբ մինակ գնաց նորան յորդորեց՝ որ բերդից դուրս գայ, և գնայ ազատութեամբ ուրիշ տեղ բնակիլի. նա էլ գանձը վեր առաւ հետ՝ և գնաց. բայց չարասրտութեամբ և զանազան հնարքներով թագաւորութեան դէմ մաքառում էր. Գագիկ դարձեալ զընաց՝ և նորան բանակի միջեց բռնեց՝ բերաւ Անի, և նորա ձեռնիցը թագաւորական գանձն առնելից յետոյ՝ խիստ պատիւների ենթարկեց, և մի ժամանակից յետոյ՝ դարձեալ նորան մեծամեծ պատիժներ տալով՝ իրանից հեռացրուց. բայր Սարգիսը փոխանակ երախտագիտութեան՝ սկսեց տիրանենգ խորհրդով, և ազգատեաց հոգևով Յունաց Սայսեր զըզըռել՝ որ Անին պահանջէ, իսկ Սայսր տեսնելով որ յայանի պատերազմով չի կարող առնել, դարձեալ Սարգսի դաւաճան խորհրդովը՝ դեսպան յուղարկեց

Հայաստան՝ և Գագիկին իբր բարեկամական դաշինք հաստատելու՝ իւր մօտը հրբաւիրեց. Գագիկն իմանալով Յունաց խորամանկութիւնը՝ չէր ուզում գնալ, նմանապէս և Սահրամ միւս դաշնակից նախարարաց հետ խորհուրդ չէին տալիս գնալու. բայց տիրանենգ Սարգիսը և իւր համախոհները յորդորումէին գնալու, յետոյ յակամայից բռնադատուած՝ Անի քաղաքի բանակները յանձնելով՝ Պետրոս Սթաւրակցիսին՝ գնաց Աստանդնուպօլիս:

ԳԽԱ ՆՆԸ.

Գագիկ թագաւորն երբոր հասաւ Աստանդնուպօլիս՝ կայսր մեծ պատուով ընդունեց նորան, և մի քանի օր արժանափայլէլ պատիւներ տալից յետոյ՝ պահանջեց Անին: Բայց Գագիկը չէր կամենում տալ, որոյ պատճառաւ կայսր բարկացած բանտարկել տուաւ մի կղզու մէջ. Հայոց նախարարներ տեսան թէ թագաւորին ազա-

տութեան ճար չը մնաց, մի մասնաւոր նա,
մակով գրած Անի քաղաքը իւր բոլոր սահ
մաններովը, և Անիի բնակիչները Պետրոս
Աթուղիկոսի հետ յուղարկեցին կայսեր.
նա էլ ուրախացած՝ շատ պարզե ընծա-
յեց Պետրոս Աթուղիկոսին. յետոյ կան-
չեց Պաղիկին՝ և ցոյց տուաւ նախարա-
րաց գրութիւնը՝ և Անի քաղաքի 40 բա-
նակիները, և ստիպեց ինքն էլ յօժարու-
թիւն տայ. բայց թագաւորը զարձեալ չէր
յօժարվում տալու. յետոյ տեսաւ թէ՛ էլ
կրկին անգամ Հայաստան դառնալու՝ և
թագաւորելու յոյս չկայ, յակամայից բըռ-
նադատուած յօժարութիւն տուաւ. և
Անի քաղաքի փոխարէնը՝ Պիլու քաղա-
քըն ուրիշ աւանների հետ ստացաւ, և
գնաց մարդիկներովը նոյն տեղումն առանձ-
նացաւ, և միշտ կողբար Հայոց կորցրած
թագաւորութիւնը. և երբեմն էլ ման էր
գալիս Յոյների մէջը, նեղացնում էր նոցա
այնպիսի չարեաց և աղէտից վրէժն առ-
նելու համար:

Դաս Ղ'կԲ.

Ապտր երբ որ Պաղիկ թագաւորի յօ-
ժարութիւնն ստացաւ՝ իսկոյն զօր յու-
ղարկեց Հայաստան. որոնք եկան Անի քա-
ղաքի առջևը՝ և տեսան որ զարձեալ դըռ-
ները փակուած են, սկսեցին պատերազ-
միլ մէջի բնակչաց հետը, որոնք մեծ քա-
ջու թեամբ դէմ էին դնում. բայց երբ որ
խմացան թէ իրանց թագաւորը բռնուած
է՝ և չէ կարող դառնալ ի Հայաստան,
իսկոյն քաղաքի գոները բաց արին՝ և քա-
ղաքը յանձնեցին Յունաց զօրքերի զօրա-
պետին. և այս կերպով վերջացաւ Քաղ-
րատունեաց իշխանութիւնը. Յոյներն այ-
նուհետեւ սկսեցին Հայաստանի մեծամեծ
ազնաների պատճառ դառնալ. զի Տուղ-
րիլ Պարսից թագաւորը տեսնալով Հա-
յաստանի անտերունջ վիճակը՝ անհամար
զօրք կարկաթի պէս լեցրուց Հայաստանի
մէջը՝ որոնք ամեն քաղաքներումը աղէ-
տալի անգթութիւններ էին դործում, մէ-

Չե բնակիչներին ոմանց կոտորում էին, և ոմանց դերում էին, և նոցա քաղաքները անխնայ այրում, և այս կերպով միլիոնաւոր Հայ Տուղըրիլէ զօրաց երկաթներին զոհ եղան, և Հայաստան մնաց ամայի, իսկ գերիներին եղած հարստութեան հետը տարան Պարսկաստան. Տուղըրիլ մեռաւ՝ և նորա տեղը յաջորդեց Ալիասլան. որ եկաւ շատ զօրքով Անի քաղաքը պաշարեց, և մէջի բնակիչները չը կարողացան զիմանալ, դռները բաց արին՝ և սկսեցին ամենքը փախչել և ցրուիլ, և մէջը զանուածներն կոտորուեցաւ Ալիասլանայ զօրքերից, ազատվողները գնացին երկրէ երկիր իրանց համար նոր բնակութիւններ հաստատեցին. իսկ Անին մնաց անմարդաբնակ, և մի ժամանակից յետոյ՝ մի մեծ երկրաշարժից բոլոր շինութիւնները քար ու քանդ եղաւ, որոյ մէջը կար միայն հազար ու մէկ եկեղեցի (ինչպէ՞ որ պատմում են). և մինչև ցարդ բոլոր շինութեանց նշաններ մնում են :

Պատ Ղ'կԳ.

Մինչդեռ Հայաստան այսպիսի աղէտալի վիճակի մէջ կը հեծէր՝ թաղակորոյս Պաղիկը Յունաստանի քաղաքներումք ման էր գալիս յուսահատաբար. ուր որ լսէր թէ Հայոց պատուոյն դէմ նախատանաց խօսք են խօսում՝ իսկոյն հայրենասիրական վրէժխնդրութեամբ պատժում էր Յոյներին. մի օր լսեց թէ Աեսարիոյ Մարկոս անուն Մետրապօլիտը իւր շան անունը Արմէն դրած է. սաստիկ բարկացած մի քանի քաջ զինուորներ հեան առած զրնաց մետրապօլիտի մօտ իբր այցելութեան պատրուակաւ. յետոյ հրամայեց նորան՝ որ իւր շանը կանչէ. նա էլ դժուարութեամբ կանչեց «Արմէն Արմէն», երբ որ շունն եկաւ՝ իսկոյն հրամայեց իւր զինուորներին՝ որ զրին մի մեծ պարկի մէջ. երբ որ մետրապօլիտն ընդզիմութիւն աւրաւ՝ նորան էլ ձեռք ոտը կաշկանդած՝ զրին մի և նոյն պարկի մէջը, և սկսեցին

շանը սաստիկութեամբ ծեծել, այնքան ծեծեցին՝ մինչև որ շունը կատաղած՝ մտապօղիտին կծոտելով սպանեց չարաչար. այս իրագործութեան լուրը բոլոր Յունաստանումը տարածեցաւ, որոյ պատճառաւ՝ Յոյներ սաստիկ յիացան Պապիկի հետը, և միջոց էին պառու՞մ՝ որ նորան սպանեն. մի օր երբ որ երեք հոգւով զընում էր Ապիստրա բերդի կողմերը, յանկարծ զինեալ Յոյներ վրայ հասան՝ բռնեցին նորան՝ և տարան բերդի մեջը բանտարկեցին, մի քանի օրից յետոյ՝ խեղդեցին նորան և բերդիցը զձեցին. Հայի մէկը սորա մարմինը տարաւ Պիզու քաղաքը՝ և նորա շինել տուած վանքումը թաղեց. և այնուհետև նորա որդիներին էլ սպանեցին, և այս կերպով էլ վերջացաւ Բագրատունեանց թագաւորութեան սերունդը՝ որ բաւական ժամանակ աւեցաւ

ՅՕԴՈՒԱԾ ՉՈՐՈՐԴ.

Ռուբինեանց իշխանութիւն:

ԳՊՁԿԳ.

Բագրատունեաց վերջին Պապիկ թագաւորին, երբ որ Յոյներն սպանեցին, նորա ազգականներիցը Ռուբէն անուն մի իշխան՝ Հայոց մնացած զօրքերը զլին հաւաքելով՝ գնաց Տաւրոս սարերի մօտքերը Ալիկիոյ մէջը՝ մի անկախ իշխանութիւն հաստատեց. այն կողմի Հայ բնակիչներն էլ լսելով Ռուբէնի նպատակը՝ եկան շատերը միացան սորա զօրքերի հետը. և սկսեց ունեցած զօրքովը հալածել Յոյներին՝ և ազատ կերպով տիրապետել այն կողմերին. և այս կերպով եղաւ Ռուբինեանց փոքր իշխանութեան հիմնադիր, և բաւական ժամանակ որդւոց որդի տիրեցին ազատ իշխանութեամբ Ալիկիոյ նահանգին. Ռուբէն 15 տարի իշխանու-

Թիւն վարելից յետոյ՝ մեռաւ. և իրան տեղը յաջորդեց իւր Աոստանդին որդին. որ Հայ իշխանաց հետ միաբանելով՝ սկըսեց Արիւկիոյ սահմանները ընդարձակել. շատ քաղաքներ, և բերդեր Յոյների ձեռնից յափշտակեց. նոյն միջոցներումը երբ որ խաչակիր զօրքեր դնում էին Ս. Երուսաղէմը Եզրիպտացւոց ձեռնիցն ազատելու՝ Աոստանդին նոցա օգնութեան զօրք և բաւական պաշար յուղարկեց. որոյ պատճառաւ՝ Ընտիրքին տիրեցին նոքա, յետոյ բանակի զլլաւորները Աոստանդինին կոմսութեան պատիւ՝ և շատ պարգևներ յուղարկեցին. Աոստանդին երբ որ մեռաւ՝ իւր տեղը յաջորդեց իւր Թորոս որդին :

ԳԽԱ ՆՂԿ.

Թորոսն երբ որ իւր հօր իշխանութեան յաջորդեց՝ սկսեց իւր տերութեան մէջ զանազան կարգեր և կանոններ հաստատել և յունական զօրքեր Արիւկիոյ սահ-

մաններիցը վանեց, և զեղեցիկ եկեղեցիների, և ուրիշ շէնքեր շինել տուաւ. նոյն միջոցներումը հազարաւոր Վարսիկ ասպատակներ մտան Արիւկիոյ սահմանները, շատ աւերութիւններ էին անում. Գող Ա. աւիլ անուն քաջ և սրտոտ իշխանը՝ բաւական զօրք վեր առած յանկարծ գնաց նոցա վրայ, կոտորեց և ամենին ցիր ու ցան արած՝ վերադարձաւ. մի քանի անգամ այսպիսի գործունեայ քաջութեան համար՝ վարձատրեց նորան Թորոս իշխանը, որ ինքն էլ սակաւաթիւ զօրքով բոլորովին հալածեց թշնամիներին. Թորոսն այնուհետև ուշադրութիւնը դարձրուց Յունաց վրայ, շատ բերդեր նոցանից առաւ, և հալածեց. Աալխատրայ բերդը առնելից յետոյ՝ միջի գանուած իշխաններին չարաչար կերպով սպաննեց, որոնք սպանած էին Գագիկ Բագրատունեաց վերջին Թագաւորին, և բերդերի մէջ գանուած Թագաւորական զզեստները, զէնքերը, և բոլոր գանձերն ստացաւ, և տիրեց ամբողջ բոլոր կալուած-

ներին. Թորոսը 10 տարի իւր տէրութիւնը կառավարելից յետոյ՝ մեռաւ. և իւր տեղն յաջորդեց իրա Աւոն եղբայրը:

ԳԻՄՆ Դ՛ԱՕ.

Աւոն երբ որ տիրեց Արլիկիոյ՝ սկսեց երկիրն աւելն ընդարձակել, և Յոյներից էլ շատ քաղաքներ առաւ. երբ որ լսեց Յունաց կայսրը՝ մեծ բանակ կազմեց՝ և ինքն անձամբ եկաւ Արլիկիոյ վերայ, մի քանի քաղաքներ շատ զժուլարութեամբ յետ առաւ, Աւոնին էլ իւր Ռուբէն և Թորոս որդւոց հետը բռնել տուաւ, և հետը տարաւ Առստանդնուպօլիս, և բանտարկել տուաւ. և այս կերպով Յոյներ մի ժամանակ էլ տիրեցին Արլիկիոյ. կայսր Ռուբէնի աչքերը հանել տուաւ, որ և յետոյ սպանուեցաւ Յոյներիցը. Աւոնն էլ սաստիկ կսկիծներին չը դիմանալով՝ մեռաւ բանտի մէջը. իսկ Թորոսը բանտիցն ազատուելով՝ կայսեր հետ գնաց Արլիկիւս.

այն տեղը կայսր մի դիպուածով մեռաւ, Թորոսն էլ պատեհ միջոց գտնելով՝ մինակ գնաց մի քահանայի խնացրուց՝ որ ինքը Աւոն իշխանի որդին է. քահանայն էլ գնաց շայոց իշխանաց և ժողովորոց խնացրուց. նոքա (որ արդէն նեղացած էին Յունաց բռնութիւններիցը) շուտով զօրք հաւաքեցին, և տուին Թորոսին, որ գնաց նոյն զօրքերովը քաղաքներից և բերդերից տիրող Յոյներին հալածեց՝ և կրկին տիրեց իւր հայրենի ժառանգութեան. և Յունաց նորընտիր կայսր երբ որ լսեց՝ շատ խռովեցաւ, շունդարացւոց վերայ պատերազմի գնաց, և նոցա յաղթելից յետոյ՝ բանակն վեր առաւ, և եկաւ Արլիկիոյ վերայ. ինքը մի երկու քաղաքի տիրելից յետոյ՝ բաւական զօրք յանձնեց մի զօրապետի՝ որ գնայ Թորոսի վրայ. Թորոսն արիւսարտութեամբ կուռելով՝ յաղթեց Յոյներին, և նոցա իշխաններից մի քանիսը գերի տարաւ. յետոյ կայսր նոցա փոխաբէնը շատ փող տուաւ Թորոսին, բայց նա

բողոքն էլ բաշխեց զօրքերին. երբ որ զօրապետը հարցրուց պատճառը՝ պատասխանեց թփոսը. « ես նորա համար եմ տալիս զօրքերին՝ որ էլի կարողանան այնպիսի Յոյն իշխաններին գերի բռնել » :

ԳԽ՝ Ը՛ՆԿ՝

Յունաց կայսր թէպէտ հաստատուն դաշինքներով հաշտուեցաւ թփոսի հետը, բայց դարձեալ Յունաց կողմից դաշանց դէմ անիրաւ գործքեր էին կատարվում. զի թփոսն երբ որ գնացած էր խաչակրաց հետ օգնութեան, Յոյներ յափշտակութիւններ արած էին. որոյ պատճառաւ թփոսս զօրք վեր առած՝ գնաց այն քաղաքների վերայ՝ որոնք դաշինքով տրուած էր Յունաց կայսեր. կայսրը երբ որ լսեց՝ դարձեալ զօրք յուղարկեց թփոսի վերայ, բայց յաղթուած յետ դարձան. յետոյ կայսրը Լօզիպոսի սուլթանին մեծամեծ պարգևներ խոստացաւ՝ որ գնայ թփոսի վրայ,

և տիրէ Աիլեկիոյ երկրին. նա էլ շատ զօրքով եկաւ Աիլեկիա՝ բայց դարձեալ յաղթուած յետ դարձաւ. կայսրը ճարահատեալ՝ բաղմաթիւ զօրք վեր առած իբր Պարսից վրայ գնալու պատրուակաւ, բայց եկաւ Աիլեկիոյ սահմանը մտաւ. թփոսն երբ որ իմացաւ՝ քանի ինչ սրտոտ և անվեհեր մարդիկ վեր առած՝ գնաց սարերի մէջ ամրացաւ. կայսրը քանի ինչ քաղաքների տիրելից յետոյ՝ գնաց Մամեստիա քաղաքը. Լերուսաղէմի թագաւորն երբ որ լսեց՝ այցելութեան եկաւ կայսեր մօտ. յետոյ թփոսի համար միջնորդութիւն անելով՝ հաշտեցրուց նորա հետը. թփոսը մի քանի տարի էլ իշխելից յետոյ՝ մեռաւ :

ԳԽ՝ Ը՛ՆԿ՝

Թփոսի մահից յետոյ՝ իշխեց նորա եղբայր Մլեհը, որ Աիլեկիոյ երկիրը կառավարում էր բուռն զօրութեամբ. նորանից

յետոյ՝ իւր եղբօրորդի Ռուբէնը տիրեց. նա էլ սկսեց խոհեմութեամբ կառավարել. բայց մի ժամանակից յետոյ՝ Անտիօքայ իշխանը թշնամացաւ սորա հետ, և խորամանկ կերպով բռնել տուաւ՝ և բանտարկեց Անտիօքումը, և ուզում էր տիրել Ալիլիկոյ. բայց Ռուբէնի եղբայր Աւոնը անմիջապէս զօրք հաւաքեց՝ և ամեն կողմերից թշնամիներին հալածեց, և իւր եղբօրն էլ բանտիցն ազատեց, և բերաւ Ալիլիկա. Ռուբէն մի քանի տարի էլ իշխելից յետոյ՝ Բուր իշխանութիւնը յանձնեց իրա եղբայր Աւոնին՝ և ինքը կրօնաւորական շորեր հագած՝ զնաց Վրազարկ վանքումը ձգնաւոր դառաւ, և ձգնեցաւ մինչև ցմահ. Աւոն երբ որ ազատ իշխանութիւն ձեռք բերաւ՝ սկսեց Ալիլիկոյ սահմանը իւր նախնիքներից աւելի ընդարձակել, և զանազան բարեգործութիւններ հաստատել. շրջակայ ազգերն որ ուզում էին նեղութիւն տալ Աւոնին՝ նոցա հետ կառավարվում էր քաջութեամբ և յազ-

թում. և ամեն կողմիցը Ալիլիկոյ վեճակը ապահովացրուց. զի ամեն տեղ զանազան շինութիւններ շինել էր տալիս, և սահմանազլններումը շատ ամրոցներ և պարտեակներ էր կանգնեցնում՝ թշնամեաց մուտքերը խախտելու՝ և նոցա յարձակմունքներիցը պաշտպանվելու համար :

Դաս Դ՝ ԱԹ.

Մինչդեռ Ալիլիկա ապահով վեճակի մէջ էր զանվում Աւոնի արթուն կառավարութեամբ, բայց Պաղեստինի կողմերումը ահազին պատերազմներով ծրփում էր. որովհետև Ազիպտոսի Սալահատին Սուլթանը Աւոնի իշխանաց երկպառակութիւնից սիրտ առած՝ զօրաց պատրաստութեամբ զնաց նոցա վերայ յաղթեց և Աբուսաղեմի տիրեց, նմանապէս և Պաղեստինի, և Ասորոց մեծ մասին տիրապետեց. այս բոթալի լուրը երբոր լսեցին Աբուպայի թաղաւորները՝ խաշակիր զօրք

էր. Լեոն Յէ տարի իշխելուց յետոյ՝ ի-
րան յաջորդ ընտրելով իւր Չապէլ աղ-
ջիկը՝ վախճանեցաւ Աիս քաղաքումը .
Չապէլին խնամակալ ընտրեցին՝ որ տէ-
րութիւն կառավարեց՝ մինչև նորա չափա-
հաս դառնալը :

ԳԽ՝ Ը՛Ն.

Չապէլից յետոյ՝ որդւոց որդի տիրե-
ցին Աիլիկիոյ, մինչև ի վերջին Լեոն Լու-
սինեան. սա էր Աիպրոսի Պետրոս թագա-
ւորի ազգական, դարձեալ Ռուբինեան
ցիղից, և միանդամայն Լուսինեան ազգա-
տոհմից. Հայոց նախարարները լսելով նո-
րա քաջասրտութիւնը և խոհական ա-
րիութիւնը՝ Աիպրոսից բերել տուին, և
օծել տուին Աիլիկիոյ վերայ թագաւոր.
նոյն տարումը Ազգիպտացիք եկան Լեոնի
դէմ պատերազմի. բայց Լեոն նոցա զօրաց
բազմութեան դէմ չկարողացաւ պատե-

րազմել. ուստի հաշտութիւն խօսելով՝
վերադարձան Ազգիպտացիք. ուրիշ ժա-
մանակ դարձեալ բազմութիւ զօրքով եկան
Աիլիկիոյ վերայ. Լեոն թագաւորն անձա-
րացած թողեց երկիրը Ազգիպտացւոց
ստջևը՝ փախաւ սարերի մջ ամրացաւ մի
ժամանակ. Ազգիպտացիք Աիլիկիոյ մջ շատ
աւերութիւններ անելից յետոյ՝ վերադար-
ձան. Լեոն թէպէտ մի ժամանակից յե-
տոյ յայտնուեցաւ՝ բայց իւր թագաւորա-
կան իշխանութիւնը յարատեւութիւն չու-
նեցաւ :

ԳԽ՝ Ը՛Ն.

Ազգիպտոսի Մէլեք-էշթեվ անուն սուլ-
թանը՝ մտքումը դրաւ որ զնայ Աիլիկիոյ
տէրութիւնը բոլորովն ջնջէ՝ և միացնէ
իւր տէրութեան հետը. այնպէս էլ կատա-
րեց. զի մեծ բանակ կազմեց, և յանձնեց
մի զօրապետի, որ զնայ Աիլիկիա. ամեն

տեղ անխնայաբար սկսեց կողոպտել, քան-
դել, և առաջ դնալ. հասաւ մինչև ի Սիս
քաղաքը. Վեոն տեսնելով թշնամեաց
բանակի բաղմուժիւնը՝ զարհուրեցաւ,
առաւ իւր գերդաստանը, և քանի ինչ իշ-
խան՝ և զնաց ամբացաւ Պապան անու-
նով բերդի մէջը. Նզիպտացիք տեսան թէ
իրանց դէմ պատերազմող չկայ՝ սկսեցին
հեշտութեամբ շատ անպթուսնան գործ-
քեր գործել, մէջի բնակիչներին զերեցին,
և շատերին կոտորեցին, եղած հարստու-
թիւններ կողոպտեցին, գեղեր և քաղաք-
ներ այրեցին. այս ամեն չարիքներ գործե-
լից յետոյ՝ զնացին Պապան բերդը պաշա-
րեցին. ինն ամիս պաշարման դիմանալից
յետոյ՝ Վեոն անձնատուր եղաւ իւր գեր-
դաստանովը և հետ գտնուած իշխաննե-
րովը. Նզիպտացիք մտան բերդի մէջը, և
բոլոր հարստութիւնը կողոպտեցին, թա-
գաւորին էլ բռնեցին տարան Նզիպտոս.
սու թիւն իսկոյն նորան բանտարկել տուաւ,
և տիրապետեց Սելիկիա երկրին. և այս

կերպով վերջացաւ Ռուբենեանց իշխա-
նութիւնը, որ բաւական ժամանակ տևեց:

ԳԽՈՂՆԳ.

Վեոն մի քանի ժամանակ բանտումը
ձնալից յետոյ՝ Սպանիոյ թագաւորի միջ-
նորդութեամբ աղատուեցաւ, և զնաց Նւ-
րուպայ՝ նորանից շնորհակալ լինելու. ուր
որ զնում էր՝ ամեն տեղ մեծ պատուով
ընդունելութիւն էր գտնում. ման գալով
զնաց Փարիզ. նոյն միջոցներումը Ֆրան-
սիոյ և Ննզիոյ մէջ թշնամութիւն էր
մտած. Վեոն իւր օգտի համար՝ շատ ջանք
արաւ խաղաղութեան հաշտութիւն գծե-
լու՝ բայց չը յաջողեցաւ. Վեոն Նւրո-
պիոյ ամեն թագաւորներից արժանաւոր
պատիւներ էր գտնում, յատուկ նորա հա-
մար եկամուտ էին որոշած. վերջապէս մե-
ռաւ Փարիզի մէջ, և թաղուեցաւ Պե-
ղիստինեանց եկեղեցումը. այս թագաւորն
եղաւ Հայոց թագաւորութեան վերջին
ճրագ:

ՅՕԴՈՒԱԾ ԼԻՆԳՆԵՐՈՐԳ

Հայոց անիշխանութեան ժամանակը:

Դաս Ղ՝ Գ.

Հայոց ազատ իշխանութիւնը բոլորովին երբ որ վերջացաւ՝ ցրուեցան ամենքը աշխարհէ աշխարհ, և թաթարներ տիրեցին Հայաստանին. մի ժամանակից յետոյ՝ նոցա իշխանութիւնն էլ տկարացաւ. այնուհետեւ Հայաստանի հարաւային կողմին տիրեցին Քիւրտերը, արևելեան կողմին՝ Պարսիկները, իսկ արևմտեան կէսին տիրում էին Օսմանցիք, և միւս կէսին՝ Թիւրքերը, և այս կերպովս տեւեց՝ մինչև նոյն դարու վերջերումը. այնուհետև Լօզպէք թաթարաց թագաւոր Ղանկթիմուրը հիւսիսային կողմից անհամար զօրքով Պարսկաստանի և Պաղատայ կողմերի բոլոր ազգաց զօրութիւնները նուա-

ճելով, գերելով, կոտորելով՝ եկաւ հասաւ Հայաստան. Միւնեաց նահանգից սկսած՝ նոյն աղէտալի անցքեր ունեցան և այն կողմի Հայ բնակիչներ. շատ քաղաքներ և զեղեր այրեցին բարբարոս Ղանկթիմուրի զօրքեր. այնուհետև անցկացաւ Ղանկթիմուր զնաց Վասպուրականի Վան քաղաք, նոյնպէս և անդթութեան զորքեր կատարեց, և անողորմաբար վարուեցաւ տեղւոյն բնակչաց հետ. զի շատերին բերդից վար դձել տալով՝ մարմնեղէն բլուր էր ձեացնել տալիս՝ իրարի վրայ ընկած դիերով. վերջապէս բոլոր Հայաստան այսպիսի աղէտալի մարգագոհութեամբ նուաճելից յետոյ՝ վերագարձաւ ի Մարզանդ իւր աթոռանիստ քաղաք. որոյ բերդի մջ բանտարկեց Հայաստանից հաւաքած հազուադիւտ ձեռագիր զրքեր, և սաստիկ արգելք դրաւ՝ որ ոչ ոք չը համարձակուի մի հատոր անգամ դիրք դուրս հանելու. ինքրն մեռաւ նոյն քաղաքումը, բայց իւր

անօրէն և բարբարոսական զործքերը՝ մը-
նացին յաւերժական յիշատակ:

Պատճառք.

Հայաստան ղեռնոր հոգի առած Վանկ-
թիմուրի անօրէն աւերութիւններից, մինչ
ուղում էր մի փոքր հանգստանալ և ան-
դորրութիւն գտնել՝ ահա մի ուրիշ բար-
բարոս բռնակալի անդթութեան մատուե-
ցաւ. զի Պարսից Շահ-Նպասը Օս-
մանցւոց հետ պատերազմ բաց արաւ,
Հայաստանը պատերազմի կետրոնատեղի
համարելով՝ համոզեց Հայոց իշխանաց՝
իրբ ժողովրդոց ապահովութեան համար
կամենում է Հայաստանից հեռացնելով
Պարսկաստան յուղարկել, բայց նոքա
մեծամեծ դժուարութիւններ առաջ զը-
նելով՝ խնդրում էին որ այնպիսի անհր-
նարին առաջարկութիւնից հրաժարուի.
բայց նա խիստ կերպով իւր անօրէն հը-
րամանը սաստկացրուց, սաստիկ պատուէր

տուաւ իւր զործակալաց՝ որ անմիջապէս
Հայերին տնով տեղով, այս ինքն բոլոր
գերդաստանով դուրս բերին Հայաստա-
նից, և բռնութեամբ վարեն ի Պարսկաս-
տան. նոքա էլ իսկոյն ի զործ զրին այն-
պիսի անօրէն հրաման. բոլոր բնակիչներին
դուրս բերին իրանց աներկցը, և բռնու-
թեամբ վարում էին ինչպէս անասուն,
մանաւանդ Նբասիս գետից անցկացրած
ժամանակը. որոնք որ լող չէին իմանում,
և մանր տղայք, և կանայք գետի մէջ
խեղդվում էին աղէտալի ողբերով. իսկ
մնացածներին տանել տուաւ Շահ-Նպ-
պաս Պարսկաստանի քաղաքներումը բը-
նակեցրուց՝ և նոցա հետ սիրաշահու-
թեամբ էր վարվում՝ որ կրկին չը դառնան
ի Հայաստան. և այս կերպովս Հայաստա-
նի արևելեան մասը Պարսից իշխանու-
թեան ենթարկուեցաւ, իսկ արևմտեան
մասը՝ Օսմանեան իշխանութեան, որոյ
թագաւորանիստ մայրաքաղաքն եղաւ
Ղոստանգնուպօլիս, սա էլ զանաղան եր-

կիրններից Հայեր բերել տուաւ՝ և բնակեցրուց որոշեալ Թաղերի մէջ:

ԳԽԽ Ն՝ Հ. Գ.

Հայաստան Պարսից և Օսմանեան տէրութեանց մէջ բաժանուելից յետոյ՝ բաւական ժամանակ մի երևելի փոփոխութիւն չը կրեց. միջի բնակիչներից ոմանք՝ վաճառականութեան, և ոմանք՝ աւելի հանդստութիւն գտնայու պատճառաւ, սկսեցին գաղթել զանազան աշխարհներ. մի ժամանակից յետոյ՝ Պարսից Յատհաւի Ըշահը պատերազմ բաց արաւ Ռուսաց հետը՝ բայց չարաչար յաղթուեցաւ. զի Ռուսաց տէրութիւն զայրանալով Պարսից անգութ վարմունքից՝ հիւսիսային կողմից զորքն առաջ բերելով՝ մինչև Պարսկական սահմաններ, և Հայեր՝ որ բաւական ժամանակ, և երկար տարիներ Պարսից բռնակալ իշխանութեան ենթարկուած կը հեծէին անհնարին տա-

ռապանքներով, յանկարծ Ռուսաց զօրքերին որ տեսան՝ իբրև իրանց ազատիչ ուրախութեամբ ընդունեցին, ուստի նորա երևելի զօրագետը իւր յաղթական զօրքովը տիրեց Արևանայ բոլոր նահանգին, հետևաբար և Հայաստան ունեցաւ և մի երրորդ իշխող:

ԳԽԽ Ն՝ Հ. Բ.

Հայոց արդի վիճակը՝ խիստ տարբեր է առաջին դարուց վիճակից, զի հետ զհետէ զանազան քաղաքակրթութեամբ, և լուսաւորութեամբ կը բարգաւաճի. ամեն երկիրներումը բացվում են և կառավարվում, ոչ թէ միայն արական սեռի, այլ և իգական սեռի բարեկարգ ուսումնարաններ, ազգային տուրքերով, և զանազան ազբիւրներից, շնորհիւ Վեհափառ Արքայնադոյն Տ. Տ. Վեորգայ Աստուածարեալ Պատուղեկոսի ամենայն Հայոց, և կրկին Արքազան Պատրիարքաց Ա. Արուստակէմայ և Կոստանդնուպօլսոյ, Ազգա-

սէր իշխանապետաց և իշխանաց Հայոց.
 Հայն ունի այժմ և զանազան երկիրներու-
 մը և բարեկարգ վանքերումը ազգա-
 յին Տպարաններ. որոց միջոցաւ տպու-
 են զանազան տեսակ ազգային զրքեր և
 լրագրեր. և այս կերպ միջոցներով հար-
 կաւ Ազգը՝ Աւերոպացոց նման կը զիմէ
 զէպ ի լուսաւորութիւն. բայց անարտա-
 պահելով իւր Ահեղեցոց հայրենի աւան-
 դութիւնները, սուրբ Առաքելական հի-
 ման վրայ հաստատ կերպով, կունենայ
 այսուհետեւ ընտիր եկեղեցականներ, և
 քաղաքակիրթ ուսեալ, և լիզուագէտ գա-
 ւակներ, նախ՝ հիմնապէս պատրաստելով
 ուսումնագէտ և կրթեալ մայրեր Հա-
 յաստանի ապագայ սերնդոց համար:

ՅԱՒԵԼՈՒՄԾ

Հայկական անուանց հանելուկ- ներ *:

ԱՐԱՎԱՆ ԱՆՈՒՆԱՔ.

- 1) Հայոց Ազգի մեծ նահապետ գե-
 դապատշաճ վեհ կորովին,
 Իւր անխտոր թափանց նէտով, գձեց
 յերկիր մեծ գոռոցն:

(Տե՛ս Գր. Գ. Հայն նահապետ՝ որ տպանէց Բէլի):

- 2) Արի և քաջ իւր հօր նման, և բարե-
 սիրտ առաքելնի,

(*) Ծան. Խիստ կարևոր է որ բարեջան ու-
 սուցիչներ Աւսումնարանաց թէ արական և թէ
 իգական սեռի աշակերտաց անուանց վրայ՝ սոյն
 Հայկական անուններիցը՝ իրրև կրկրորդական ա-
 նուն աւելացնեն, որ ամենքն էլ միմեանց ուսում-
 նարանումը նոյն անունով կանչեն, և հանելուկ-
 ներն էլ իրրև զբօսանք իրարի հարցնեն:

Եղբարքը թողուց ի նարք զաւառ, ինքն
յԱրարատ գայ բնակի:

(Տ. Բ. Դ. Զ. Արմենի՝ Հայոց որդի):

3) Ազնիւ սերունդ զիւցազնական, սեպուհ
տիրող իւր ազգի մէջ,
Իւր անունով քաղաք շինեց՝ Արարատ
մեծ դաշտի մէջ:

(Տ. Բ. Դ. Զ. Արմենի՝ որ շինեց Արմենի բազում):

4) Հայրենասէր անպարտելի, և հալածող
իւր թշնամեաց,
Յաղթեց վանեց և սպանեց, նոցա զօրքի
զիւսաւորաց:

(Տ. Բ. Դ. Զ. Արմենի՝ որ սպանեց երեք այլոցք էլ իւրենէն):

5) Հայոց նախկին պսակաւոր, քաջ թա-
զաւոր Հայկայ զարմից,
Իշխեց ազատ Հայաստանին, թագ առ-
նելով Վարբակէսից:

(Տ. Բ. ՃԱ. Պարոյր՝ Հայոց առաջին թագաւոր):

6) Հայոց պարծանք մեծ թագաւոր,
յաղթող Մարաց թագաւորին,

Թորքը հանեց զին տապալեց, ահա խրելով
նորա սրտին:

(Տ. Բ. ՃԲ. Տէրբն Ա՝ որ սպանեց Աթուհի):

7) Հայաստանի բարեկարգիչ, հզօր ար-
քայն Պարթեական,
Պանգնիչ եղաւ արիւթեամբ՝ Արշակու-
նեաց իշխանութեան:

(Տ. Բ. ՃԶ. Վարդուի՝ Պարսից Արշակ թագաւորի եղ-
բայր):

8) Պոնտոս երկրին սարսափ տուող, արի
յաղթող Արշակունին,
Օձի թիւնով միսած ահզը, ուժով խրեց
կոթող քարին:

(Տ. Բ. ՃԷ. Արշակ Ա՝ Վարդուիայ որդի):

9) Արշակունեաց արի արքայն, նուաձող
ազգին քաջ Այնաց,
Բարեկարգեց զՀայաստան, յաղթեց իս-
պառ իւր թշնամեաց:

(Տ. Գ. ձԲ. Աբրահամ երեւոյի Բագարի Լուսն):

10) Արխանգելոս ահեղարկու, շնորհակա-
ցեաց իշխանու թեան,
Պոնտոս երկրի մեծ կուսակալ, շատ լեզ-
ուազէտ առանց թարգման:

(Տ. Գ. ձԵ. Միգրոս Տեփրան Բ. Բագարի Լուսն):

11) շայոց ազգի վեհ անդրանիկ, քրիս-
տոնեայ սուրբ թագաւոր,
շայաստանի պարծանք եղաւ, հզօր ար-
դեամբք հռչակաւոր:

(Տ. Գ. ձԺԲ. Աբրահամ Աբրահամ Բագարի Լուսն):

12) շայոց նախկին լուսաւորիչ, սուրբ
առաքեալ Տեառն ճիսուսին,
Եկաւ ի շայս և բժշկեց շայոց Արգար
թագաւորին:

(Տ. Գ. ձԺԳ. Ս. Բագարի Լուսն):

13) Պարթևական հզօր արքայն, որ շար-
չարեց Լուսաւորչին,

Յետոյ դարձաւ քրիստոնեայ, և գործա-
կից եղաւ նորին:

(Տ. Գ. ձԻԳ. Տեփրան Բագարի Լուսն):

14) Քրիստոսական հաւատոյ լոյսը, հիմ-
նաւորեց ի շայաստան,
Բաղմաշարչար սուրբ շայրապետ, ազնիւ
տոհմից Պարթևական:

(Տ. Գ. ձԺԵ. Ս. Գրեգոր Լուսն):

15) Ընտիր հովիւ Եկեղեցւոյ, արժանա-
ւոր ժառանգ բարի,
Եշեան շայոց Արգեղայոս, սրով նորան
կը պատահի:

(Տ. Գ. ձԼ. Ս. Աբրահամ Բագարի Լուսն):

16) Ազնիւ տոհմի սուրբ շառաւիղ, մեծ
շայրապետ վարուք բարի,
Լուսաւորչի նախկին որդին, եղաւ յա-
ջորդ Աստակէսի:

(Տ. Գ. ՃԼ. Ս. Վրբննէն՝ Երբննէն Գրբննէն):

17) Սուրբ Հայրապետ եկեղեցւոյ, ընտիր
Հովիւ արժանաւոր,

Որոյ խստիւ նահատակեց, Հայոց Տիրան
վատ թագաւոր:

(Տ. Գ. ՃԼ. Ս. Յոսէֆ՝ Վրբննէն՝ Գրբննէն):

18) Աղուան ազգի ընտիր Հովիւ, սուրբ
նահատակ արթուն անուամբ,

Մանկահասակ կաթուղիկսս, լի կատա-
րեալ իմաստութեամբ:

(Տ. Գ. ՃԼ. Ս. Գրբննէն՝ Որբննէն կաթուղիկն):

19) Հայաստանի ճրագ լուսատու, սուրբ
Հովուապետ արժանագով,

Իմեց բաժակ թիւնով լցուած, թագա-
ւորի անդուժ ձեռքով:

(Տ. Գ. ՃԼ. Ս. Ներէն՝ Հայրապետն Հայոց):

20) Պարթեական սուրբ Հայրապետ,
ընդդիմացու Հայ իշխանաց,

Որոնք եղան պատճառ անկման, իշխանու-
թեան Արշակունեաց:

(Տ. Գ. ՃԼ. Ս. Սահմէ՝ Երբննէն Հայրապետն):

21) Հայոց ազգի մեծ բարերար, եղև եր-
րորդ Առասաւորիչ,
Պատա ազգին Հայերէն զիր, և կոչեցաւ
սուրբ թարգմանիչ:

(Տ. Գ. ՃԼ. Ս. Մերոյ՝ Երբննէն Հայոց):

22) Բրիտանական սուրբ օրինաց, վրէժ-
խնդիր էր բորբոքուած,
Պէմ կանգնեցաւ ահարկութեամբ, Պար-
սից մոզուց և մոզպետաց:

(Տ. Գ. ՃԼ. Ս. Ղևնր՝ Իտարտն էրեցն):

23) Պարսից Յազկերտ արքային դէմ,
Ճշմարտութիւն ծածկել չուզեց,
Յիսուս Փրկչի սուրբ Յարութիւն, աղա-
կերպով նա քարոզեց:

(Տ. Գ. ձեռն. Գարեգին՝ Բանկարայն Նախարար Հայր):

24) Պարսից անթիւ զօրաց ընդդէմ, պատերազմող քաջ զօրավար,
ճակատամարտ հանդիսի մէջ, ընկերնե-
րով ի յԱւարայր:

(Տ. Գ. ձեռն. Ս. Վարդան՝ պարսպետ Հայր):

25) Սամսարական ազգի սերունդ, հետի
կռուէր սուրը ձեռին,
Երբ խրուեցաւ ձին ազմի մէջ, ի Վար-
դանանց պատերազմին:

(Տ. Գ. ձեռն. Արշալէ՛ր՝ Ներսէսէնց Վարդանայ):

26) Աւարայրի պատերազմին, մեծ Վար-
դանայ քաջ մարտակից,
Ընձայացի իշխան ընտիր, եղաւ մահուան
հաղորդակից:

(Տ. Գ. ձեռն. Արսէն՝ Ընկերնէնց Վարդանայ):

27) Մամիկոնեան քաջ զօրավար, ան-
պարանլի Պարսից զօրաց,

Սակաւաթիւ զօրքով յաղթեց, և ինքն
այնպէս անյաղթ մնաց:

(Տ. Գ. ձեռն. Վահան Մագիկոնեան՝ պարսպետ Հայր):

28) Տարօն երկրի անյաղթ իշխան, զար-
հուրեցոյց Պարսից ազգին,
Նոցա անթիւ զօրաց յաղթեց, տիրեց
ազատ իւր նահանգին:

(Տ. Գ. ձեռն. Մուշեղ՝ զօրավար Տարօնայ):

29) Բազրատունեաց ընտիր զարմից, քաջ
թագաւոր սուրբ նահատակ,
Չար ոստիկան Յուսիպ ձեռնով կը չար-
չարուի բազմատեսակ:

(Տ. Գ. ձեռն. ՍԲՔ-ու խոսարձանող՝ Ս. Նահապետ Ռո-
բոստ):

30) Հռչակաւոր մեծ քաղաքին, քաջ
թագաւոր և ողորմած,
Միշտ աղքատներ կանչէր իւր հետ, կե-
րակուրի սեղան նստած:

Իւր Հօր ձեռքով անխնայաբար, ի սէր
Փրկչին նահատակի:

(Տ. Գ. ձԺԵ. Ս. Սանդուխտ՝ Սանդուխտի Բարձրագոյն
Պատմութիւն):

6) Յարեմոսից անգին մի գանձ Հայաստանի նուիրեցաւ,
Արով մեր ազգը խաւար կոոց, պաշտօն
լուծեանց ազատեցաւ:

(Տ. Գ. ձԺԶ. Ս. Հովհաննէս՝ Կոյն Երկրորդ):

7) Հողեոր մայր սուրբ Հովհաննէսանց, և
մայրապետ սուրբ կուսանաց,
Նուէր և զոհ Հայաստանի, արժանացաւ
երկնից փառաց:

(Տ. Գ. ձԺԶ. Ս. Գոյնեանէ Բլեհար՝ Կոյն Երկրորդ):

8) Սուրբ կոյս ընտիր, և ճգնաւոր, Սեպուհ
պուհ լեռան յայրն բնակի,
Ըստ ժամանակ մնալուց յետ, բարի մահուամբ
կը վախճանի:

(Տ. Գ. ձԺԶ. Ս. Մանէ Կոյն՝ Ընկեր Հովհաննէսանց):

9) Վարաց ազգի լուսաւորիչ, կոյս առաջեալ
և նահատակ,
Ընկեր գոլով Հովհաննէսանց, և էր վարուքն
մարմնով հրեշտակ:

(Տ. Գ. ձԺԶ. Ս. Նուէն Կոյն՝ Վարացանի Առաջեալ
Գին):

10) Սուրբ Վարդանայ կոյս օրիորդ, եղաւ
Վարաց մեծ թագուհի,
Արոյ Վազգէն իւր ամուսին, նահատակեց
առանց սուրի:

(Տ. Գ. ձԺԸ. Ս. Շուշան՝ Կամ Շուշանի):

11) Պարթևազանց անյաղթիլի, մեծ
Տրդատայ ազնիւ տիկին,
Էր բարեպաշտ ջերմ հաւատով, Հաստանի
մեծ թագուհին:

(Տ. Գ. ձԺԹ. Աշխէն՝ Բարձրագոյն Տրդատ Թագաւորի):

12) Վաջ Տրդատայ քոյր նաղելի, արքայազուրմ
վեհանձնական,

ԳԻՆՆ Է ԱՄԵՆԱՅՆ ՏԵՂ ՅԻՍՈՒՆ ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0340991

